

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՏԱԿՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԵՐԼԱՆ 2014

5 (47, 925)
2-28

MINISTRY OF DIASPORA
OF THE REPUBLIC OF ARMENIA

**LEGAL FRAMEWORK
STUDY OF ARMENIAN WILLS**

Research

5135

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՏԱԿՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Հեղինակուհի՝ Լիլյան Գրիգորյան

ԵՐԵՎԱՆ YEREVAN
2014





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվել է
ՀՀ Սփյուռքի նախարարության պատվերով՝
Երևանի պետական համալսարանի
Եվրոպական ուսումնասիրությունների
կենտրոնի կողմից:

Հայկական կտակների իրավական դաշտի
ուսումնասիրություն /Հետազոտական աշխատանք/ Եր. 2014
148 էջ:

Հեղինակներ՝ **Գրիգորյան Վահագ**
Կարապետյան Լիլիթ
Մարտիրոսյան Մարինե
Միրզոյան Լիլիթ

Գիտական խմբագիր՝
Իրավաբան.գիտ.քեկնաժու,
Դոցենտ **Ա. Գ. Ղազինյան**

© Վ.Գրիգորյան, Լ.Կարապետյան,
Մ. Մարտիրոսյան, Լ.Միրզոյան, 2014 թ.
© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2014 թ.

ՔՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Գլուխ 1. Ժառանգման իրավահարաբերությունները	
միջազգային մասնավոր իրավունքում	9
1.1. Ժառանգման հասկացության միջազգային իրավական սահմանումը	9
1.2. Ժառանգման հարաբերությունների կոլիզիոն- իրավական կարգավորումը	25
Գլուխ 2. Կտակներին վերաբերող օրենսդրության և իրավական	
ակտերի ուսումնասիրություն	36
1.1. Ժառանգումը ըստ կտակի Իսրայելում	36
1.2. Ժառանգումը ըստ կտակի Պորտուգալիայում	58
1.3. Ժառանգումը ըստ կտակի Հնդկաստանում	70
1.4. Ժառանգումը ըստ կտակի Կիպրոսում	81
Գլուխ 3. Հայերի թողած կտակների ուսումնասիրություն	
(Իսրայելի, Պորտուգալիայի, Հնդկաստանի և Կիպրոսի	
օրինակներով)	106
Վերջաբան.....	132
Օգտագործված գրականության ցանկ	141

Ներածություն

Հայ ժողովրդի պատմությունն ունի բարեգործության, մեկենասության անհերքելի փաստեր, որոնք հսկայական դեր են ունեցել ազգային մշակույթի, գրականության և արվեստի պահպանման մեջ: Մեկենասության, բարեգործության ավանդույթները պահպանվել են մինչև մեր օրերը, ստանալով առարկայական բնույթ, մասնավորապես, գրավոր կտակներում: 19-րդ դարի երկրորդ կեսին մարդասիրական գործունեության նման միջոցը դարձավ ամենատարածվածներից մեկը: Սույն հետազոտության կարևորությունը պայմանավորված է տարբեր գործընթացներով՝ աշխարհում հայերի միգրացիայի կտրուկ աճով, խառն ամուսնությունների ավելացմամբ, ձեռնարկատիրական գործունեության (ներառյալ՝ միջազգային քաղաքացիական շրջանառությունը) ընդլայնմամբ, ինչի հետևանքով անձին պատկանող գույքը և գույքային իրավունքները հայտնվում են տարբեր երկրներում և ենթարկվում են իրար հետ չհամապատասխանող իրավական համակարգերին: Հետևաբար աշխարհասփյուռ հայոց տարաբնույթ կտակների, հարակից փաստաթղթերի ուսումնասիրությունը հանգեցնում է մի շարք բարդությունների: Այդ պատճառով անհրաժեշտ է կարգավորել հայերի թողած կտակների ժառանգների և այլ շահագրգռված անձանց շահերը՝ ժառանգական իրավունքի շրջանակներում իրավանախորդներից գույքային իրավունքների և պարտականությունների համախմբությունը իրավահաջորդներին փոխանցելու գործընթացում:

Ժառանգական իրավունքի մեջ օտարերկրյա տարրի պատճառով օբյեկտիվորեն առաջանում են մի շարք կոլիզիոն իրավիճակներ, որոնցից հիմնական կոլիզիաներն են՝ ըստ օրենքի ժառանգության, ըստ կտակի ժառանգության ոլորտները կամ այդ ոլորտներում անշարժ և շարժական գույքի իրականացումը: Չնայած այն հանգամանքի, որ ժառանգության տեսակները պետությունների իրավական համակարգերում նման են իրար, դրանք բովանդակությամբ էապես տարբերվում են, ինչը պայմանավորված է ազգային ավանդույթներով, հաստատված կենսակերպով և այլ

գործոններով: Արդյունքում տարբեր երկրներում գտնվող գույքի կիրառման և տնօրինման նկատմամբ պետք է գործի այլ իրավական համակարգերի օրենսդրությունը, որոնք ունեն նկատելի կոլիզիաներ և բոլորովին չեն համապատասխանում իրար, ինչը հանգեցնում է ժառանգական իրավահաջորդության ապահովման էական բարդությունների:

Բացի այդ, տվյալ ինստիտուտի իրավական կարգավորումը բնավ միատեսակ չէ: Այդ բոլոր հանգամանքները օտարերկրյա տարրով ժառանգական իրավահարաբերությունները բարդանալու դեպքում, առաջացնում են տարաբնույթ կոլիզիոն խնդիրներ, որոնք գիտության մեջ ընդունված է միավորել մեկ միասնական հասկացության մեջ՝ ժառանգական ստատուտում: Տվյալ ոլորտում պրակտիկայի բազմազանությունը և բարդությունները, որոնք ի հայտ են գալիս առանձին ժառանգական գործերի լուծման ընթացքում, բացատրվում են այն նշանակալի տարբերություններով, որոնք առկա են ներքին օրենսդրության մեջ՝ ժառանգական իրավունքի ոլորտում: Այսպես, տարբեր երկրներում ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգների շրջանակը որոշվում է տարբեր եղանակով: Սահմանվում են կտակի ձևի վերաբերյալ տարբեր պահանջներ, գործում են ժառանգական գույքի բաշխման տարաբնույթ համակարգեր և այլն: Միջազգային մասնավոր իրավունքում ժառանգման հարցերը դասվում են առավել բարդ հարցերի շարքին: Հակասությունները ծագում են ինչպես ըստ օրենքի ժառանգման, այնպես էլ ըստ կտակի ժառանգման դեպքում, ինչպես նաև հարաբերության սուբյեկտի այլ երկրում բնակվելու դեպքում (օտարերկրյա ֆիզիկական անձ), հարաբերության օբյեկտն այլ երկրի տարածքում գտնվելու կամ այն դեպքում, երբ իրավաբանական փաստը տեղի է ունենում արտասահմանում: Ժառանգական հարաբերություններում օտարերկրյա տարրի առկայությունը դեռևս չի նշանակում կոլիզիոն խնդրի լուծում հոգուտ օտարերկրյա իրավունքի:

Միջազգային պրակտիկայում ծագում են մի շարք հարցեր, որոնք վերաբերում են ըստ կտակի ժառանգությանը և առաջին հեր-

թին, անձի ունակությանը՝ կտակ կազմելու և վերացնելու, ինչպես նաև կտակի ձևի վերաբերյալ:

Երկրների մեծամասնությունում կտակը պետք է կազմվի գրավոր և վավերացվի սահմանված կարգով, օրինակ՝ նոտարի մոտ: Որոշ երկրներում թույլատրվում է կտակը կազմել այսպես կոչված օլոգրաֆիկ ձևով, այսինքն՝ ժառանգատուն ինքն է իր ձեռքով գրում կտակը և չի պահանջվում, որ այն վավերացվի: Որոշ պետությունների օրենքներով կտակում չի թույլատրվում սահմանափակել որևէ կատեգորիայի ժառանգների իրավունքները: Մյուս երկրներում կտակում ժառանգներին ժառանգությունը ստանալու համար կարող են սահմանվել մի շարք պայմաններ:

Ինչպես ըստ օրենքի ժառանգման վերաբերյալ, այնպես էլ ըստ կտակի ժառանգման դեպքում ի հայտ են գալիս հետադարձ հղման կամ երրորդ երկրի իրավունքի հղման խնդիրներ: Թեպետ կտակն իր բնույթով քաղաքացիաիրավական գործարք է, դրան կատմամբ չեն կարող կիրառվել գործարքներին վերաբերող ընդհանուր կոլիզիոն սկզբունքները: Այդ բնագավառում շատ երկրների կոլիզիոն նորմերը իմպերատիվ բնույթի են: Դա նշանակում է, որ իրավունքի ընտրության ազատությունը (կողմերի կամքի ինքնավարության սկզբունք) չի տարածվում կտակի վրա, այլ խոսքով՝ մահվան դեպքում գույքի տնօրինման վերաբերյալ կամքի արտահայտության նկատմամբ: Տվյալ կոլիզիոն նորմերը իմպերատիվ բնույթ են կրում: Վերոնշյալ հանգամանքներով է բացատրվում հետազոտության թեմայի արդիականությունը և պահանջվածությունը: Սակայն ելնելով այն հանգամանքից, որ հայ հանրությունը սփռված է աշխարհի ամենատարբեր երկրներում, ուստի անհնար է մեկ հետազոտության մեջ սպառել այդ հսկայածավալ կտակների իրավական վիճակի ուսումնասիրությունը: Ուստի որպես ուսումնասիրման մեկնարկային շրջանակ սույն հետազոտման ուսումնասիրման պետություններն են՝ Իսրայելը, Հնդկաստանը, Պորտուգալիան և Կիպրոս, այնտեղ հայերի թողած կտակների իրավական կարգավիճակի ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է՝

- վերլուծել և մշակել Հնդկաստանի, Պորտուգալիայի, Կիպրոսի և Իսրայելի օրենսդրությունը ժառանգության վերաբերյալ.
- բացահայտել, գիտականորեն գնահատել և վերլուծել միջազգային իրավունքի և միջազգային մասնավոր իրավունքի, որպես ամբողջական համակարգի, տեսական և գործնական խնդիրները, որոնցով կարգավորվում են օտարերկրյա տարրով ժառանգական հարաբերությունները.
- համակարգել և բնութագրել ժառանգական իրավունքի նորմատիվ-իրավական հիմնահարցերը ձևական-իրավաբանական և բովանդակության տեսանկյունից.
- վերլուծել ժառանգական իրավունքի տեղը և դերը դիտարկվող երկրների օրենսդրական համակարգում.
- վերլուծել ժառանգության ոլորտում հարաբերությունների կարգավորման իրավական հիմնահարցերը ազգային օրենսդրությունում և միջազգային-իրավական ակտերում, բացահայտել դրանց փոխհարաբերությունը և փոխադարձ կապը:

Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մեթոդներ, որոնք համապատասխանում են օբյեկտիվության չափանիշներին: Հետազոտվող երևույթների նմանությունները և տարբերությունները որոշելու համար օգտագործվել է համեմատության մեթոդը, վերացարկյան մեթոդը, ինչը թույլ է տալիս հաշվի առնել հետազոտվող օբյեկտների առավել էական կողմերը և հատկությունները: Օգտագործվել են նաև այլ մեթոդներ՝ վերլուծություն և համադրում, ինչպես նաև տրամաբանական-իրավական ուսումնասիրություն և այլն:

Սույն հետազոտության մեջ դիտարկվել են ժառանգության հիմնական սկզբունքները վերոնշյալ երկրներում՝ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգների իրավունքների և շահերի ապահովումը, կտակելու ազատությունը, ժառանգատուի ընտանիքի անդամների

իրավունքների և շահերի պաշտպանությունը, ժառանգության պաշտպանությունը:

Հետազոտության նորմատիվ հիմք են կազմում Բարայելում, Հնդկաստանում, Կիպրոսում և Պորտուգալիայում ժառանգության ոլորտում ազգային օրենսդրական ակտերը, ինչպես նաև տարբեր միջազգային իրավական փաստաթղթեր, որոնց միացել են վերը նշված պետությունները: Հետազոտության մեջ օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, եբրայերեն և այլ տարբեր աղբյուրներ:

Գլուխ 1.

Ժառանգման իրավահարաբերությունները միջազգային մասնավոր իրավունքում

1.1. Ժառանգման հասկացության միջազգային իրավական սահմանումը

Ժառանգման ինստիտուտը իրավունքի, մասնավորապես, միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում, հայտնի է հնագույն ժամանակներից: Դրա նորմերով կարգավորվում են մահացածի գույքային իրավունքները և պարտավորությունները իրավունքի այլ սուբյեկտներին փոխանցելու հարաբերությունները: Այն, որ ժառանգման ինստիտուտը գործում է հնագույն ժամանակներից ի վեր, բացատրվում է բացառապես ժառանգման՝ ինչպես առանձին անհատի, այնպես էլ հասարակության համար հատուկ նշանակությունը:

Ժառանգման ինստիտուտը համապատասխանում է և հասարակության շահերին, և պահպանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների կայունությունը: Իսկապես, եթե մարդու բոլոր պարտավորությունները դադարեին նրա մահվամբ, ապա ֆիզիկական անձանց հետ գործարքներ կնքելը, հատկապես խոշոր գործարքների իրականացումը, նրանց գործընկերների համար մեծ ռիսկ կպարունակեր: Մինչդեռ, ժառանգման համակարգը հնարավորություն է տալիս, որ պարտավորություններ պարունակող հարաբերությունները մնան ուժի մեջ սուբյեկտներից մեկի դուրս գալու դեպքում, և դրանցից միայն մի քանի պարտավորություններ (լիազորագիր, ավիանտային պարտավորություններ) են դադարում անձի մահով:

Վ. Մ. Խվոստովի կարծիքով, ժառանգումն ունի քաղաքական նշանակություն, քանի որ պետությունը, սահմանելով ժառանգման որոշակի կարգ, հնարավորություն ունի ազդելու առանձին քաղաքացիների միջև գույքի բաշխման գործընթացի վրա:¹

¹ Хвостов В.М. Система римского права. Учебник. М., 1996. С. 422.

Վերջին տարիներին ժառանգական իրավունքի դերը մեր կյանքում նկատելիորեն աճել է: Դա պայմանավորված է արմատական փոփոխություններով, որոնք առնչվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներին՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր:

Ժամանակակից ժառանգական իրավունքի խնդիրները ճիշտ ընկալելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է անդրադառնալ անցյալի դրական փորձին, որն առավել մանրամասն ներկայացված է հռոմեական մասնավոր իրավունքի նորմերում: Ժառանգական հարաբերությունների սկիզբը դրվել է դեռ նախադասակարգային հասարակությունում: Այնուամենայնիվ, ժառանգական իրավունքն ի հայտ է եկել պետության առաջացման հետ մեկտեղ: Այնպես, ինչպես սեփականությունը (տնտեսական իմաստով) գոյություն է ունեցել մինչև պետության և իրավունքի կազմավորումը, իսկ սեփականության իրավունքն առաջացել է միայն պետության կազմավորման հետ, այդպես էլ ժառանգական իրավունքը՝ սեփականության իրավունքի ձևավորման արդյունքում առաջացել է միայն պետության առաջացման հետ²:

Նախնադարյան հասարակարգը մարդկության պատմության մեջ առաջին հասարակական-տնտեսական կազմավորումն է: Այդ ժամանակահատվածում, մասնավորապես, դրա զարգացման վաղ փուլերում, երբ մարդկանց պահանջարկները և դրանց բավարարման միջոցները շատ չէին, ժառանգումը ժամանակակից ընկալմամբ դեռևս գոյություն չուներ այն պարզ պատճառով, որ ժառանգելու ոչինչ չկար: Իհարկե, այդ ժամանակահատվածում հորից որդուն էին անցնում որսի և ձկնորսության պարագաները: Յեղի և տոհմի, իսկ հետագայում նաև ընտանիքի տնօրինման և տիրապետման ներքո են գտնվել ընտանեկան օջախի պահպանման միջոցները, վայրի կենդանիների մորթիները, վառելիքի և պարենի պահուստները, զարդերը, ցեղին պատկանելու տարբերանշանները, բացառությամբ այն իրերի, որոնք պետք է դնեին մահացածի հետ թաղման ժամանակ: Այդ ընթացքում առաջացող հարաբերու-

թյունները կարգավորվել են ոչ թե իրավունքի նորմերով, որոնք դեռևս չկային, այլ բազմադարյա ավանդույթներով և սովորույթներով: Դրանց պահպանումը լուսաբանվել և ապահովվել է ոչ թե պետության հարկադրման միջոցներով, այլ հասարակական կարծիքի ազդեցությամբ, առաջին հերթին՝ ցեղի առավել ազդեցիկ անդամների հեղինակության շնորհիվ: Կարգազանցին սպառնացել է վտարում ցեղից, ինչին հաճախ հետևել է սովամահությունը³:

Նախնադարյան համակարգը ժամանակի ընթացքում վերածվել է մայրիշխանության, որը հասել է մինչև զարգացած մայրիշխանության մակարդակի: Յեղային համայնքի տնտեսական հիմքերն ամրապնդելու նպատակով, ըստ սովորույթի՝ արգելվել է մահացածի գույքը դուրս բերել ցեղի սահմաններից դուրս: Մահացածին պատկանող գույքը բաշխվել է ցեղակիցների միջև և առավելապես ժառանգվել է մորական կողմի մերձավոր ազգականներին: Անհատական օգտագործման առավել արժեքավոր իրերը թաղվել են տիրոջ հետ: Եթե մահացածը կին է եղել, ապա նրա գույքն անցել է երեխաներին և քույրերին (բայց ոչ եղբայրներին):

Իրավունքի առաջին հուշարձաններից մեկն է Բաբելոնի օրենքների ժողովածուն: Այն կիրառվել է Համնուրաբիի թագավորության (1792-1750 թթ. մ.թ.ա.) ժամանակաշրջանում: Այնտեղ ուղղակիորեն նշված չէ կտակով ժառանգելու որևէ դրույթ, սակայն, 165-րդ հոդվածի համաձայն՝ հայրը նվիրատվությամբ կարող էր ավելացնել որդիներից մեկի բաժինը՝ մյուս որդիների ժառանգական բաժինների նվազեցման հաշվին: Բավարար հիմքերի առկայության պայմաններում հայրը կարող էր «հրաժարվել» որդուց, այսինքն՝ նրան ամբողջովին զրկել ժառանգությունից (168-169-րդ հոդվածներ): Համնուրաբիի օրենքով նախատեսվել է, որ ծնողների մահից հետո ժառանգներ են հանդիսացել նրանց որդիները: Ժամագությունը նրանց միջև բաժանվել է հավասարապես: Այդ դեպքում ժառանգորդները պարտավոր էին իրենց քույրերի ամուսնանալու դեպքում ապահովել նրանց օժիտը: Այն դեպքում, երբ մահացածը որդի չուներ, ժառանգներ էին համարվում նրա դուստրերը:

² Ю.К. Толстой Наследственное право, учебник 2001г, стр., 12

³ Немков А.М. Очерки истории наследственного права. 1979г,стр.20

Հանգուցյալի կինը ժառանգման իրավունք ուներ իր որդիների հետ միասին: Բացի ժառանգական գույքից կինը ստանում էր նաև իր օժիտը: Մահացածի թոռները ժառանգ են հանդիսացել միայն այն դեպքում, եթե նրանց հայրը մահացել է մինչև ժառանգության բացումը⁴:

Աթենքում ըստ կտակի ժառանգության մասին առաջին անգամ հիշատակվում է Սոլոնի օրենսդրությունում (մ.թ.ա. 6-րդ դար): Ժառանգատուի իրավունքներն այստեղ որոշակիորեն սահմանափակված են: Կտակելու իրավունք ուներ միայն որդիներ չունեցող տղամարդը: Արական սեռի երեխաներ ունեցող հայրը, որդեգրվածները, ինչպես նաև կանայք չէին կարող կտակել⁵:

Ստրկատիրական հասարակարգի ժառանգական հարաբերությունների առավել ամբողջական կարգավորումը տրվում է հռոմեական իրավունքում: Հռոմեական իրավունքը զարգացել է հանրապետության, վաղ կայսրության և ուշ կայսրության ժամանակաշրջաններում:

Հռոմեական իրավունքը այն հասարակության, որտեղ իշխում էր մասնավոր սեփականությունը, կենսական պայմանների և հակամարտությունների դասական իրավաբանական արտացոլումն էր, այնպես որ հետագա բոլոր օրենսդրություններով հռոմեական իրավունքի մեջ էական փոփոխություններ չեն մտցվել: Հռոմեական իրավունքը հսկայական ազդեցություն և նշանակություն է ունեցել ժառանգական իրավունքի համար: Հայտնի է հռոմեական ժառանգական իրավունքի զարգացման երեք փուլ: Պատմականորեն առաջին համակարգ է համարվում քաղաքացիական իրավունքը կամ «hereditas»-ը, հետագայում առաջացել է պրետորական իրավունքը կամ «bonorum possessio»-ը և վերջինը՝ Հուստինիանոսի իրավա-

կան համակարգը, ըստ որի կողավորվել է հռոմեական իրավունքը և 534թ. հրատարակվել է նոր Օրենսգիրք⁶:

Ժառանգումը որպես իրավական ինստիտուտ բնորոշվել է երկու հատկանիշների միասնությամբ. ա) այն առաջացել է միայն սեփականատիրոջ մահից հետո, բ) գործել է մահացածի բոլոր իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդությունը, այսինքն՝ գույքը դիտարկվել է որպես ժառանգատուի պարտքերի և պարտավորությունների ամբողջություն և որպես ամբողջություն անցել է ժառանգին: Այլ խոսքով, չէր կարելի ժառանգել միայն իրավունքները՝ հրաժարվելով պարտավորություններից: Դրա հետ մեկտեղ, ինչպես նշում է Ն. Վ. Չենցովը, «այն դեպքերում, երբ ժառանգները մի քանիսն են, գույքը նրանց միջև չի բաշխվում իրական բաժիններով, այլ ընդհակառակը, մնում է ամբողջական՝ յուրաքանչյուր ժառանգն այդ գույքում ունի իդեալական բաժին»:⁷ Մինևույն ժամանակ, «պարտքը ամբողջ գույքի հետ միասին տրվում է բոլոր ժառանգներին որպես միասնական մեկ ժառանգի, և ժառանգներից յուրաքանչյուրը գույքի հետ մեկտեղ ստանում է նաև պարտքի որոշակի մասը (եթե պարտքը հնարավոր է բաժանել): Եթե պարտքը չի կարելի բաժանել, ապա բոլոր ժառանգները միասնական կլինեն, հետևաբար, յուրաքանչյուրը պատասխանատվություն կկրի ամբողջ պարտքի համար»⁸:

Ժառանգություն հասկացությունը լայն իմաստով նշանակում է՝ «մարդու (ժառանգատուի) մահվան պահին նրա գույքային իրավունքների և պարտավորությունների ամբողջությունը, բացառությամբ զուտ անձնական իրավունքների և պարտավորությունների»: Ընդ որում, կարևոր չէ, թե իրավունքների ամբողջական արժեքը գերազանցում է պարտքերի ամբողջական արժեքին և ընդհակառակը: Էական չէ նաև այն հանգամանքը, թե արդյոք իրավունքը առկա է սեփականության իրավունքի մեջ, թե օտար անձի իրերի նկատմամբ իրային իրավունքների մեջ: Ըստ էության, ծագումը և

⁴ Чепурнова Н.М., Серёгин А.В. История государства и права зарубежных стран: Учебное пособие. – М.:, 2007. –стр.30-35

⁵ Фридрих Шиллер, Законодательство Ликурга и Солон / Собрание сочинений в 7-ми томах, Том 5, М., «Государственное издательство художественной литературы», 1957 г., с. 434-446.

⁶ Косарев А.И. Римское право, М., 1986, стр.47

⁷ Ченцов Н.В. Римское частное право. Тверь, Норма. 1995-207 с.

⁸ Ковнарв Н.Р., Римское наследственное право., М., ЮИ МВД РФ., 2001., стр. 11

ժառանգումը զուգահեռ են հասարակության գույքային և սոցիալական շերտավորման, մասնավոր սեփականության և արտադրական միջոցների հաստատման հետ: Ի հայտ են գալիս հատուկ ինստիտուտներ, որոնք կոչված են պաշտպանելու գոյություն ունեցող կարգը իշխանական լծակներին տիրապետողների հնարավոր ոտնձգություններից: Այդ ինստիտուտների համակարգը կազմավորում է պետություն հասկացությունը, որը մասնավոր սեփականության և որպես դրա պարտադիր հատկանիշի՝ ժառանգության նկատմամբ մշտապես կատարել և շարունակելու է կատարել պահպանի դերը: Մասնավոր սեփականության ծաղկումը հանգեցնում է նրան, որ հետզհետե ժառանգման առարկա է դառնում այն ամենը, ինչը կարող է շահույթ բերել, ապահովել մարդկանց ամենատարբեր պահանջարկների բավարարումը, բացառությամբ, թերևս, այն անձի, որը ժառանգական իրավահաջորդության օբյեկտ այսուհետ լինել չի կարող⁹:

Պատմության մեջ ըստ օրենքի ժառանգումը առաջացել է ըստ կտակի ժառանգումից առաջ և դարեր շարունակ գտնվել է ժառանգական իրավունքի կենտրոնում: Միաժամանակ, մարդկային քաղաքակրթության զարգացմամբ բացահայտվում է այն, որ ըստ կտակի ժառանգության իրավական կարգավորման նկատմամբ հետաքրքրության աճը անհատի զարգացման հետևանքներից մեկն է: Որքան շատ է հասարակությունը ընկալում մարդուն որպես անհատի, ով ինքն է որոշում իր արարքները և դրանց հետևանքները, այնքան ավելի շատ է շեշտադրվում ըստ կտակի ժառանգությունը այդ հասարակության մեջ գործող իրավունքի մեջ: Ընդհանուր առմամբ, մեծ պատրաստակամությունը դանդաղ է զարգանում: Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ որոշակի պահերին մեծ զարգացումը կրում է թռիչքաձև բնույթ: Այդպես է սովորաբար լինում, երբ մարդկային զանգվածներ են ներգրավվում պատերազմական գործողություններում: Այդ ծայրահեղ պայմաններում, մի կողմից, առավել ցայտուն է բացահայտվում այն, որ մարդն անկախ է, իսկ մյուս կողմից, մարդու գոյությունն ինքնին

⁹ Ю.К. Толстой Наследственное право, М, 2001г, стр, 27-30

դրվում է ծայրահեղ սպառնալիքի տակ: Պատահական չէ, որ, մասնավորապես, Հին Հռոմում կտակի հնագույն տեսակներից էր այսպես կոչված «արշավի մեկնող զորքի կտակը» (testamentum in procinctu), ավելի ուշ այնտեղ բոլոր տեսակի ձևական պահանջներից ազատ դարձավ այսպես կոչված «զինվորի կտակը» (testamentum militis)¹⁰:

Նախահեղափոխական ռուսական իրավունքում գործել է ըստ կտակի ժառանգների և ըստ օրենքի ժառանգների մասին կանոնը. «Ժառանգման իրավունքը ... տարածվում է ցեղի բոլոր անդամների վրա, որոնք կազմում են միևնույն արյունակցական կապը, մինչև այդ ցեղի մեջ ոչ միայն տղամարդու, այլև կնոջ սերնդի բացարձակապես դադարեցումը»: Այդ կանոնը նշանակում էր, որ ռուսական օրենսդրությամբ ազգականները համարվել են ժառանգներ անկախ ազգակցական կապի աստիճանից¹¹:

Մինչև ԽՍՀՄ փլուզումը ժառանգության մասին օրենսդրությունը կիրառվել է համատեղ ամբողջ ԽՍՀՄ-ում և միութենական հանրապետություններում, ինչն արտացոլվել է այդ ժամանակաշրջանում ձևավորված օրենսդրության համակարգում: «Ժառանգական իրավունք» բաժինը ներառվել է 1961թ. Քաղաքացիական օրենսդրության հիմունքներում, 1964թ. ՌՍՖՍՀ Քաղաքացիական օրենսգրքում և Միութենական Հանրապետությունների Քաղաքացիական օրենսգրքում: 1992թ. Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանում ընդունվել է նոր քաղաքացիական օրենսգիրք:

Ժառանգական իրավունքը քաղաքացիական իրավունքի ինստիտուտներից մեկն է, այն սահմանվում է որպես այնպիսի նորմերի ամբողջություն, որոնք կարգավորում են մահացածի իրավունքները և պարտավորությունները այլ անձանց անցնելու հետ կապված հարաբերությունները: Ժառանգումը տնտեսական բովանդա-

¹⁰ Мусаев Р.М, Наследование по завещанию: история и современность. М., 2003., 188 с.

¹¹ Березевская Е.А., Этапы и закономерности развития наследственного права России., Юрист., 2006., 12, стр.32-33.

կություն պարունակող հարաբերություն է, ըստ էության՝ սեփականության կողմերից մեկն է՝ դրա ածանցյալը: Սեփականություն կատեգորիայով սահմանվում է ներկայում գույքի պատկանելությունը, իսկ ժառանգման կատեգորիայով՝ այդ գույքի պատկանելությունը ապագայում՝ սեփականատիրոջ մահից հետո: Ընդ որում, ժառանգման իրավունքի առանձին նորմեր և ենթահիմնատուտներ ազգային օրենսդրության առաձևահատկությունների հետևանքով ունենում են տարաբնույթ բովանդակություն և առանձնահատկություններ¹²: Միջազգային մասնավոր իրավունքի մեջ ժառանգական իրավահարաբերությունները տարբերվում են իրենց առանձնահատկությամբ, յուրահատկությամբ և դժվարությամբ են փոփոխությունների ենթարկվում: Դրանով է բացատրվում ժառանգման վերաբերյալ նորմերի միջազգային միասնականացման (ունիֆիկացիա) աննշան ծավալը և դրանց միասնականացման սահմանափակումը միջպետական հարաբերությունների տարածաշրջանային և երկկողմ մակարդակներում հիմնականում կոլիզիոն նորմերով:

Պատմական տեսակետից, ժառանգական հարաբերությունները իրացվում են՝ հաշվի առնելով ազգերի ազգային առանձնահատկություններով պայմանավորված ավանդույթները, սովորույթները, կրոնական դոգմաները, բարոյական չափանիշները, իսկ իրավական նորմերը զգալի չափով ամրապնդում և պարտադիր են դարձնում ժառանգատուի և ժառանգության հավակնող անձանց միջև դարերով ձևավորված հարաբերությունների կանոնները:

Օտարերկրյա կազմով (տարրով) ժառանգման դեպքում ազգային առանձնահատկությունները ժառանգման հարաբերություններում առաջացնում են լրջագույն խնդիրներ, այսինքն՝ այն դեպքում, երբ ժառանգական հարաբերությունները դուրս են գալիս առանձին պետության շրջանակներից, հատելով երկու կամ մի քանի պետությունների սահմանները, և կարող են կանոնակարգվել զուտ միջազգային մասնավոր իրավունքի նորմերով: Ժառանգման հա-

¹² Гетьман-Павлова, И.В. Международное частное право М.: Изд-во Эксмо, 2012. - С. 360..

րաբերություններում օտարերկրյա տարրը արտահայտվում է նրանով, որ ժառանգատուն, բոլոր ժառանգները կամ նրանցից մի քանիսը կարող են տարբեր պետությունների քաղաքացիներ լինել, բնակվել տարբեր պետություններում, իսկ ժառանգվող գույքը կարող է գտնվել տարբեր պետություններում, կտակը կարող է ձևակերպված լինել արտասահմանում և այլն:

Ինչպես տարբեր պետությունների քաղաքացիական իրավունքի մեջ, այնպես էլ միջազգային մասնավոր իրավունքում կիրառվում են ըստ օրենքի ժառանգությունը և ըստ կտակի ժառանգությունը: «Ըստ կտակի ժառանգություն» հասկացությունը ՄՄԻ-ում դիտվում է որպես իրավական տերմին, որը նշանակում է, որ ժառանգատուի իրավահաջորդ անձանց շրջանակը, կարգը և պայմանները, ըստ որոնց դա կատարվում է, սահմանվում է ոչ թե անմիջականորեն օրենքով, այլ ժառանգատուի կամքով: Ընդ որում, ժառանգատուի կամքն արտահայտման ձևով պետք է համապատասխանի օրենքին և բովանդակությամբ չհակասի օրենքին, ինչը համապատասխանում է բազմաթիվ պետությունների ազգային քաղաքացիական իրավունքի դրույթներին: Եթե նման համապատասխանություն առկա չէ, ապա օրենքն է շտկում ժառանգատուի կամքը¹³:

Միջազգային պրակտիկայում ծագում են մի շարք հարցեր, որոնք վերաբերում են ըստ կտակի ժառանգությանը և առաջին հերթին, անձի ունակությանը՝ կտակ կազմելու և վերացնելու, ինչպես նաև կտակի ձևի վերաբերյալ:

Ինչպես ըստ օրենքի ժառանգման վերաբերյալ, այնպես էլ ըստ կտակի ժառանգման դեպքում ի հայտ են գալիս հետադարձ հղման կամ երրորդ երկրի իրավունքի հղման խնդիրներ: Թեպետ կտակն իր բնույթով քաղաքացիաիրավական գործարք է, դրան կատմամբ չեն կարող կիրառվել գործարքներին վերաբերող ընդհանուր կոլիզիոն սկզբունքները: Այդ բնագավառում շատ երկրների կոլիզիոն նորմերը իմպերատիվ բնույթի են: Դա նշանակում է, որ իրավունքի ընտրության ազատությունը (կողմերի կամքի ինքնավա-

¹³ Богуславский М.М. Международное частное право. М.: Юристь, 2005., стр 443

րության սկզբունք) չի տարածվում կտակի վրա, այլ խոսքով՝ մահվան դեպքում գույքի տնօրինման վերաբերյալ կամքի արտահայտության նկատմամբ: Տվյալ կոլիզիոն նորմերը իմպերատիվ բնույթի են կրում:

Միջազգային մասնավոր իրավունքի ձևավորման ընթացքում ըստ կտակի ժառանգումը տարածված չէր, սակայն իրավունքի զարգացմանը համընթաց որոշակի առավելությունների շնորհիվ (մահացածի իրավունքների և պարտավորությունների հետմահու իրավահաջորդության ընդհանուր կարգը ժառանգատուի ընտանեկան դրության առանձնահատկության, ընտանիքի անդամների, ազգականների, ինչպես նաև ժառանգատուի այլ մտերիմ անձանց հետ հարաբերությունների հետ համաձայնեցնելու հնարավորությունը) ըստ կտակի ժառանգումը լայն տարածում է գտել, իսկ բազմաթիվ երկրներում այն համարվում է որոշիչ:

Իրոք, կտակը ժառանգատուին թույլ է տալիս որոշել իր գույքի ճակատագիրը, երբ նա չունի ըստ օրենքի ժառանգներ կամ նրանց հետ մեկտեղ կան այլ անձինք, որոնց նա կցանկանար փոխանցել գույքը: Կտակի միջոցով ժառանգատուն իրավասու է իր գույքը բաշխել՝ հաշվի առնելով ըստ օրենքի ժառանգների նյութական վիճակը և այն հանգամանքի, թե նրանցից ոմանք նախկինում ինչ օգնություն են իրենից ստացել: Կտակում հնարավոր է հաշվի առնել ժառանգների որոշակի շրջանակի և ժառանգությունում նրանց բաժնենասի համար կարևոր նշանակություն ունեցող ինչպես գույքային, այնպես էլ զուտ անձնական բնույթի տարբեր հանգամանքներ: Դրանց մեծամասնությունը օրենսդիրը չի կարող հաշվի առնել և նախապես գնահատել, անգամ ըստ օրենքի ժառանգությանն առնչվող ամենակատարյալ նորմերի առկայության դեպքում: Հետևաբար, ըստ կտակի ժառանգությունն առավելությունների շնորհիվ միջազգային մասնավոր իրավունքում զբաղեցնում է նշանակալի տեղ, իսկ դրա կատարմանը նվիրված է ինչպես ազգային օրենսդրության, այնպես էլ միջազգային պայմանագրերի նյութական և կոլիզիոն նորմերի մի ամբողջություն:

Ինչպես հայտնի է, ըստ կտակի ժառանգության հիմքում ըն-

կած է գործարքը: Քաղաքացիաիրավական գործարք է թե կտակն ինքնին, այնպես էլ դրա փոփոխման և վերացման մասին ակտերը: Սակայն, առավելապես երկկողմ գործարքների համար նախատեսված ընդհանուր սկզբունքները ոչ միշտ են հիմնավորված լինում այնպիսի միակողմանի գործարքի համար, ինչպիսին է կտակը: Օտարերկրյա բաղադրիչով կտակի կատարման ընթացքում իրավունքի ազգային ճշտելի միջև օրենքին, ինչպես նաև ժառանգատուի և ժառանգների շահերին համապատասխանող փոխզիջման հասնելը հնարավոր է՝ կիրառելով իրավունքի որակյալ ընտրություն, այսինքն՝ տվյալ երկրի իրավունքը: Եթե այդ ընտրությունն իրականացվում է՝ շրջանցելով կոլիզիաները, ապա կիրառվում են ուղղակի գործողության նյութական նորմերը: Հակասությունների դեպքում անհրաժեշտ է դիմել կոլիզիոն նորմերին, որոնցով կապահովվի համապատասխան նյութաիրավական օրենքի ընտրությունը, որի նորմերով կկարգավորվի գործնականում ծագած ժառանգական իրավահարաբերությունը: Ժառանգական հարաբերությունների կարգավորման ընթացքում ազգային կոլիզիոն իրավունքի լայն կիրառումը պայմանավորված է ժառանգական իրավունքի նյութական նորմերի համընդհանուր միասնականացման խիստ «աղքատ ժառանգությամբ»:

Այսպիսով, ժառանգումը հնարավոր է կա՛մ ըստ կտակի, կա՛մ ըստ օրենքի և այն չի կարող լինել համաձանության առարկա: Եթե չկան ո՛չ ըստ կտակի, և ո՛չ էլ ըստ օրենքի ժառանգներ, ապա ժառանգման իրավունքն անցնում է պետությանը: Այս աշխատությունում կուսումնասիրվեն ժառանգությունը և ըստ կտակի ժառանգությունը՝ օտարերկրյա տարրով:

Կտակի սահմանումը գրականության մեջ առավել տարածված է որպես միակողմանի գործարք, որն արտացոլում է քաղաքացու մահվան դեպքում իր անձնական կարգադրությունը, որն արված է օրենքով սահմանված ձևով և ուղղված է ժառանգական զանգվածի բաշխմանը այն անձանց միջև, որոնք ժառանգատուի սահմանած կարգով ժառանգատուի կողմից կոչված են ժառանգներ:

Ըստ կտակի ժառանգության մեկ այլ ոչ պակաս կարևոր ա-

ռանձնահատկությունն այն է, որ կտակը միայն մեկ անձի կողմից կնքվող գործարք է, որն արտահայտում է միայն այդ անձի կամքը և իրականացվում է իր կողմից անձամբ: Հետևաբար, կտակը խիստ անձնական բնույթի միակողմանի գործարք է: Պարզաբանելով ասածը, հարկ է նշել, որ կտակը որպես միանձնյա գործարք կարող է կազմվել միայն մեկ անձի անունից: Կտակվող ժառանգական զանգվածի վերաբերյալ կարելի է նշել այն, որ ժառանգատուն իրավասու է տնօրինել միայն իր գույքը: Կտակի իսկությունը կտակում ամրագրված ժառանգական զանգվածի վերաբերյալ որոշվում է միայն ժառանգության բացման պահին, և քաղաքացին, կատարելով իր գույքի վերաբերյալ կտակային կարգադրություններ, գրկված չէ տվյալ գույքը տնօրինելու իրավունքից. օրինակ, վաճառել կամ նվիրել այն իր հայեցողությամբ:

Բացի այդ, տվյալ ինստիտուտի իրավական կարգավորումը բնավ միատեսակ չէ: Այդ բոլոր հանգամանքները օտարերկրյա տարրով ժառանգական իրավահարաբերությունները բարդանալու դեպքում, առաջացնում են տարաբնույթ կոլիզիոն խնդիրներ, որոնք գիտության մեջ ընդունված է միավորել մեկ միասնական հասկացության մեջ՝ ժառանգական ստատուտ: Տվյալ ոլորտում պրակտիկայի բազմազանությունը և բարդությունները, որոնք ի հայտ են գալիս առանձին ժառանգական գործերի լուծման ընթացքում, բացատրվում են այն նշանակալի տարբերություններով, որոնք առկա են ներքին օրենսդրության մեջ՝ ժառանգական իրավունքի ոլորտում: Այսպես, տարբեր երկրներում ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգների շրջանակը որոշվում է տարբեր եղանակով: Սահմանվում են կտակի ձևի վերաբերյալ տարբեր պահանջներ, գործում են ժառանգական գույքի բաշխման տարաբնույթ համակարգեր և այլն: Միջազգային մասնավոր իրավունքում ժառանգման հարցերը դասվում են առավել բարդ հարցերի շարքը: Հակասությունները ծագում են ինչպես ըստ օրենքի ժառանգման, այնպես էլ ըստ կտակի ժառանգման դեպքում, ինչպես նաև հարաբերության սուբյեկտի այլ երկրում բնակվելու դեպքում (օտարերկրյա ֆիզիկական անձ), հարաբերության օբյեկտն այլ երկրի տարած-

քում գտնվելու կամ այն դեպքում, երբ իրավաբանական փաստը տեղի է ունենում արտասահմանում: Ժառանգական հարաբերություններում օտարերկրյա տարրի առկայությունը դեռևս չի նշանակում կոլիզիոն խնդրի լուծում հոգուտ օտարերկրյա իրավունքի: Հայրենական և օտարերկրյա օրենքների բաշխման խնդիրները լուծող իրավական նորմերը կոչվում են կոլիզիոն նորմեր: Կոլիզիոն նորմերը ըստ ստեղծման և կիրառման մեխանիզմների դասակարգվում են՝ ներքին և պայմանագրային նորմեր: Ներքին կոլիզիոն նորմերը կազմում են ազգային իրավական համակարգի մի մասը, որոնք պետությունը մշակում և ընդունում է ինքնուրույն՝ իր իրավասությունների շրջանակներում: Միջազգային մասնավոր իրավունքի գիտության մեջ կոլիզիոն նորմը հիմնականում դիտարկվել է որպես քաղաքացիական իրավունքի նորմ:

Օտարերկրյա իրավունքի կիրառման հարցի վերաբերյալ գերմանացի իրավագետ Կ. ֆոն Սավինյին ուներ հետևյալ դիրքորոշումը՝ «օտարերկրյա իրավունքը կիրառվում է, անշուշտ, տարածքային իշխանության կամավոր համաձայնությամբ, բայց այդ համաձայնությունը գթասրտության ակտ չէ, այլ էլ ավելի զարգացող իրավագիտակցության արդյունք է»¹⁴: Առանձին պետությունների նյութական իրավունքը միատարր հասարակական հարաբերությունները կարգավորում է տարբեր եղանակներով, օրինակ, ժառանգատուի գույքի (շարժական և անշարժ) տարբեր երկրներում գտնվելու, արտասահմանում ժառանգատուի մահվան, կտակն արտասահմանում կազմելու դեպքերում և այլն: Հայաստանի Հանրապետությունում մինչև նոր քաղաքացիական օրենսգիրքն ընդունելը օտարերկրյա տարրով բարդացված ժառանգման հարաբերությունները կարգավորվել են 1991թ. ԽՍՀՄ և ԽՍՀՄ-ի հանրապետությունների Քաղաքացիական օրենսդրության հիմունքներով (այսուհետ՝ ՔՕՀ 1991թ.), որտեղ VII բաժինը նվիրված էր օտարերկրացիների և իրավաբանական անձանց իրավունակությանը՝ «Արտասահմանյան պետությունների քաղաքացիական օրենքների

¹⁴ 13. Мандельштам А.Н. Гаагские конференции о кодификации международного частного права. Т. 1. – СПб., 1900., стр 157

և միջազգային պայմանագրերի կիրառում» վերնագրով: 1991թ. ԽՍՀՄ և ԽՍՀՄ-ի հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմքերը գործողության մեջ են դրվել 1992 թվականի հունվարի 1-ից, սակայն 1991 թվականի դեկտեմբերին Խորհրդային Միությունը արդեն դադարել էր իր գոյությունը: 1991թ. ԶՕՀ 169-րդ հոդվածով նախատեսվում էր, որ.

1. «Ժառանգման հարաբերությունները սահմանվում են այն երկրի իրավունքով, որը ժառանգատուի համար եղել է վերջին մշտական բնակության վայրը:

2. Կտակ կազմելու և վերացնելու անձի ունակությունը, ինչպես նաև կտակի և դրա վերացման ձևը սահմանվում են այն երկրի իրավունքով, որտեղ կտակարարը կտակը կազմելու պահին ունեցել է մշտական բնակության վայր: Սակայն կտակը կամ դրա վերացումը ձևը չպահպանելու հետևանքով չեն կարող ճանաչվել անվավեր, եթե այդ ձևը բավարարում է ակտը կազմելու վայրի իրավունքի կամ խորհրդային իրավունքի պահանջներին:

3. ԽՍՀՄ-ում գտնվող շինությունների և այլ անշարժ գույքի, ինչպես նաև դրա իրավունքի ժառանգումը սահմանվում է խորհրդային իրավունքով: Նույն իրավունքով են սահմանվում կտակ կազմելու և վերացնելու անձի ունակությունը, ինչպես նաև տվյալ կտակի ձևերը, եթե կտակվում է նշված գույքը կամ դրա նկատմամբ իրավունքը»¹⁵:

Այսպիսով, Հայաստանի նոր քաղաքացիական օրենսգիրքը ներառել է 1991թ. ԶՕՀ կոլիզիոն նորմերը, թեև այդ նորմերը կրել են որոշակի փոփոխություններ: Իրավական նորմերի միասնականացման նպատակով ստեղծվել է հատուկ միջպետական մարմին՝ ԱՊՀ անդամ պետությունների Միջխորհրդարանական վեհաժողով, որը մշակել և ներկայացրել է ԱՊՀ երկրների համար մոդելային քաղաքացիական օրենսգիրք: ԱՊՀ երկրների համար ԶՕ (երրորդ մաս) մոդելում կոլիզիոն նորմեր առաջարկելով փորձ էր արվում ոչ միայն նորացնել կոլիզիոն հանգույցները, այլև դրանց հա-

կասություններից ելք գտնել՝ «քաղաքացիության իրավունք» և «ըստ վերջին բնակության վայրի իրավունք», ինչպես նաև ընդլայնել կոլիզիոն հանգույցների կիրառման ոլորտները: Օրինակ, Հայաստանն իր օրենսդրությունում ժառանգատուին տրամադրել է ընտրության իրավունք՝ կտակում ընտրել այն երկրի իրավունքը, որի քաղաքացին է նա հանդիսանում (ՀՀ ԶՕ 1292-րդ հոդվածի 1-ին մաս):

Անշարժ գույքի ժառանգումը սահմանվում է ըստ այն երկրի իրավունքի, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Այս կոլիզիոն հանգույցը ամրագրված է Հայաստանի ԶՕ-ում (1293-րդ հոդված), այն երկկողմ կոլիզիոն հանգույց է: Այսպիսով, ժառանգվող շարժական գույքի համար, որպես կանոն, կոլիզիոն հանգույց է հանդիսանում օրենքը ժառանգատուի վերջին բնակության վայրի մասին (lex domicilii), իսկ ժառանգվող անշարժ գույքի համար՝ օրենքը գույքի գտնվելու վայրի մասին (lex rei sitae): Գործնականում տեղի է ունենում ժառանգման ստատուսի մասնատում, քանի որ ժառանգատուի վերջին բնակության վայրը կարող է չհամընկնել անշարժ գույքի գտնվելու վայրի հետ: Անմիջական հետաքրքրություն են ներկայացնում այն կոլիզիոն իրավիճակները, որոնք ի հայտ են գալիս ըստ կտակի ժառանգման դեպքում: Հիմնավորված է Բ. Գ. Մեդվեդևի հետևյալ դիտողությունը՝ «ըստ կտակի ժառանգման դեպքում հիմնականում կիրառվում են նույն կոլիզիոն կանոնները, ինչ ըստ օրենքի ժառանգման դեպքում: Նման մոտեցումը կարող է տարօրինակ թվալ՝ նկատի ունենալով, որ ժառանգատուի նման կամարտահայտությանը պետք է ավելի ընդարձակ տեղ տրամադրվի միջազգային մասնավոր իրավունքում ինքնավար օրենքի կիրառմանը»¹⁶: Չէ որ իր բնույթով կտակը խիստ անձնական է, այն միակողմանի գործարք է: Ժառանգները կարող են նույնիսկ չիմանալ իրենց օգտին կտակի գոյության մասին, քանի որ ոչ հայկական, ոչ արտասահմանյան օրենսդրությունը ժառանգատուին չի պարտավորեցնում կտակի մասին իրազեկել որևէ մեկին: Խնդիրն

¹⁵ Полный сборник кодексов Российской Федерации / Под общей ред. Ю.Н. Власова. – М., 1998., стр 244

¹⁶ Международное частное право и нотариальная деятельность. – 2-е изд. – М., 2005., стр 126

այն է, որ կտակարարը կարող է կազմել կտակ, որը կվերաբերի գույքին ընդհանուր առմամբ (այդ թվում՝ արտասահմանում գտնվող շարժական և անշարժ գույքին) կամ գույքի որոշ մասին: Կարևոր է նաև օտարերկրյա քաղաքացու գործունակության հարցը: Հայաստանի օրենսդրությունում անձի կտակ կազմելու և վերացնելու ունակությունը որոշվում է ըստ այն երկրի իրավունքի, որտեղ կտակարարը բնակվել է նման կտակի կամ ակտի կազմման պահին: Ուշագրավ է նաև այն, որ կոլիզիոն կարգերը.

1) ենթակա են կիրառման անշարժ գույքի նկատմամբ ևս,

2) ստորադասում են կտակային գործունակությունը ժառանգման ստատուսին, և ոչ թե կտակարարի անձնական օրենքին կամ միակողմանի գործարքի ստատուսին,

3) ունեն ինչպես այլ նորմերը իմպերատիվ բնույթ և դրա շնորհիվ բացառում են կտակարարի կողմից կիրառելի իրավունքի ընտրության հնարավորությունը»¹⁷: Հայաստանի նոր քաղաքացիական օրենսգրքի 1292-րդ և 1293-րդ հոդվածներով կարգավորվում են օտարերկրյա տարրով բարդացված ժառանգական հարաբերությունները: ՀՀ ԲՕ 1292-րդ հոդվածի դրույթներով նախատեսվում է, որ «Ժառանգության նկատմամբ կիրառվում է այն պետության իրավունքը, որտեղ ժառանգատուն ունեցել է վերջին բնակության վայրը, եթե կտակարարը կտակում չի ընտրել այն պետության իրավունքը, որի քաղաքացին է ինքը»:

Սեկնաբանելով ՀՀ ԲՕ 1292-րդ հոդվածի 1-ին մասը՝ հարկ է նշել, որ ժառանգման ընդհանուր ստատուսը ստորադասվում է ժառանգատուի վերջին բնակության վայրին, թեպետ Հայաստանի օրենսդիրը ժառանգատուին տրամադրում է այն պետության իրավունքի կիրառմամբ կտակ կազմելու իրավունք, որի քաղաքացի է հանդիսանում ժառանգատուն: Ա. Ս. Դովգերտը նշում է, որ «ժառանգական իրավունքի ինստիտուտում հնարավորություն է ընձեռնվել կտակ կազմելիս սահմանափակ կիրառել *lex voluntatis*-ը (1233-րդ, 1235-րդ հոդվածները)».

¹⁷ Марышева Н.И., Звеков В.П. Новая кодификация норм международного частного права // Хозяйство и право. – 2002. – № 6. – С. 11-12

որն ընտրված է գործարք կատարած անձի կողմից»¹⁸: Ա. Ս. Հայկյանցի կարծիքով՝ «գործող քաղաքացիական օրենսգիրքը, ժառանգատուին ընձեռնելով իրավունքի ընտրություն, հավանաբար, դիտարկվում է միգրացիոն մեծ հոսքի պայմաններում, որպես Հայաստանի Հանրապետության ցանկություն՝ իր քաղաքացիներին պահելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության գործողության շրջանակներում»¹⁹:

1.2. Ժառանգման հարաբերությունների կոլիզիոն իրավական կարգավորումը

19-րդ դարի երկրորդ կեսին օտարերկրյա տարրով ժառանգական գործերի թիվը անընդհատ ավելանում էր, ինչի անուղղակի պատճառը բնակչության միգրացիան էր: Այսպիսով, օտարերկրյա տարրով ժառանգական գործերը տեղաշարժի անխուսափելի միջոց են: Պրակտիկայի բազմազանությունը և տարբեր ժառանգական գործերի լուծման համար ծագող բարդությունները բացատրվում են տարբեր երկրների ներքին օրենսդրությունում նշանակալի տարբերություններով, որոնք բնորոշվում են էթնիկական, կրոնական և այլ ավանդույթներով:

Ժառանգական իրավունքում օտարերկրյա տարրը օբյեկտիվորեն առաջացնում է մի շարք կոլիզիոն իրավիճակներ, հիմնականում՝ կոլիզիաները ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության ուղրտում, կամ այդ ուղրտներում շարժական և անշարժ գույքի ժառանգման իրականացման կոլիզիաները²⁰:

Ժառանգման կոլիզիոն հիմնահարցերը սովորաբար կարգավորվում են պետության ներքին օրենսդրությամբ: Բազմակողմանի համաձայնագրեր այս ուղրտում առկա են ընդամենը առանձին հարցերի շուրջ: Միջազգային ժառանգական իրավունքի ուղրտում

¹⁸ Международное частное право: Учебник / Отв. ред. Н.И. Марышева – М., 2004, стр. 74

¹⁹ Айкянц А.М. Международное частное право: Учеб. пособие. – Ереван, 2003, стр. 223

²⁰ Гетьман-Павлова, И.В. Международное частное право, Эксмо., 2012, стр. 306

ընդունված են խիստ սահմանափակ թվով համընդհանուր միջազգային համաձայնագրեր:

Ժառանգության հետ կապված խնդիրները կարգավորվում են նաև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով երկկողմ պայմանագրերով, ինչպես նաև 1993 թվականի հունվարի 22-ի ԱՊՀ երկրների իրավական փոխօգնության մասին բազմակողմ կոնվենցիայով:

Միջազգային պրակտիկայում օտարերկյա տարրով ժառանգությունը կարգավորվում է երեք հիմնական եղանակով.

1) միջազգային համընդհանուր ակտերի ընդունման միջոցով.

2) իրավական օգնության մասին երկկողմ համաձայնագրերի կնքման միջոցով.

3) ազգային օրենսդրությունում համապատասխան կոլիզիոն նորմեր մտցնելով:

Առանձին-առանձին դիտարկենք ներկայացված բոլոր երեք մակարդակները: Ինչպես նշվել է, ժառանգական իրավունքը, պայմանավորված ազգային ավանդույթներով և սովորույթներով, ենթակա է միասնականացման նվազագույն չափով: Դրա մասնակի միասնականացման փորձեր ձեռնարկվել են 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Կտակային կարգադրությունների ձևերի վերաբերյալ օրենքների կոլիզիայի մասին Հասագայի կոնվենցիայում և 1973 թվականի հոկտեմբերի 26-ի Միջազգային Կտակի ձևերի մասին Վաշինգտոնի կոնվենցիայում: Ներկայացված միջազգային իրավական ակտերից առաջինն ունի ընդհանուր կոլիզիոն հանգույցներ, որոնք վերաբերում են կտակային կարգադրությունների ձևին: Այսպիսով, տվյալ Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «կտակային կարգադրությունը ճանաչվում է վավեր կտակի ձևի վերաբերյալ, եթե այդ ձևը համապատասխանում է ներքին օրենսդրությանը.

ա) վայրին, որտեղ կտակարարն արել է կարգադրություն կամ

բ) քաղաքացիությանը, որն ունի կտակարարը, կամ այն ժամանակ, երբ նա արել է կարգադրությունը, կամ իր մահվան ժամանակ, կամ

գ) վայրին, որտեղ կտակարարն ունեցել է մշտական բնակություն, կամ երբ նա արել է կարգադրությունը, կամ իր մահվան ժամանակ, կամ

դ) երբ խոսքը անշարժ գույքի, դրա գտնվելու վերաբերյալ է: /1961 թվականի հոկտեմբերի 5-ի Կտակի ձևերի վերաբերյալ օրենքների կոլիզիայի մասին կոնվենցիա/²¹:

Կոնվենցիայով նախատեսվում է, որ անշարժ գույքի գտնվելու վայրի մասին երկրի օրենսդրությունում հաշվի են առնվում իրավասու իրավակարգի սահմանումները: Բացի դա, Կոնվենցիան սահմանում է իրավակարգի կիրառումը ըստ առավել սերտ կապի սկզբունքի: Եթե անձը առնվազն հինգ տարի ապրում է մեկ պետության տարածքում, սակայն շարունակում է մնալ այլ պետության քաղաքացի, ապա նախատեսվում է այն պետության իրավունքի կիրառումը, որի քաղաքացիությունն ունի անձը: Անձն ունի նաև նախընտրելի իրավական համակարգի ընտրության իրավունք (3-րդ հոդված)²²:

Ուշագրավ է, որ 1961 թվականի Կոնվենցիայում կոլիզիոն նորմերի կիրառումը կախված չէ փոխադարձության պահանջներից: Այլ կերպ ասած, տվյալ ակտը կիրառվում է՝ անկախ այն հանգամանքից, թե հանդիսանու՞մ են արդյոք ժառանգները, ժառանգատուները և այլ շահագրգիռ անձինք Կոնվենցիայի մասնակից պետության քաղաքացիներ, թե՛ ոչ:

Կոնվենցիան պարունակում է երկու կամ ավելի անձանց համատեղ կտակային կարգադրության կանոններ: Համատեղ կտակի ձևը ենթարկվում է սովորական կտակի համար սահմանված կոլիզիոն կանոններին, և այն հարցը, թե արդյոք անձն ունի մշտական բնակություն տվյալ պետությունում, որոշվում է տվյալ պետության իրավունքով: Օտարերկրյա իրավունքը չի կիրառվում, եթե այդ կի-

²¹ Богуславский М.М., Международное частное право., Норма., 2010, стр.704

²² Конвенция о коллизии законов, касающихся формы завещательных распоряжений (Гаага, 5 октября 1961 г.) // Международное частное право: Сборник документов. М.: Изд-во "БЕК", 1997. С. 664 - 667

քառուճը հակասում է համապատասխան պետության հանրային կարգին:

Նշված կոլիզիոն հանգույցները առավել ընդհանուր են և այս կամ այն չափով ներառված են տարբեր պետությունների ազգային օրենսդրությունում: Ուսումնասիրվող փաստաթղթի կարևոր դրույթներից է նաև հետևյալը՝ բացահայտել այն կիրառելու հնարավորությունը՝ կտակի վերացման վերաբերյալ հարաբերությունների նկատմամբ, փոխադարձության առկայության մասին պահանջների բացակայությունը և այլն: Կոնվենցիայի մասնակից պետություններն են՝ Գերմանիան, Ավստրիան, Ավստրալիան, Բելգիան, Չինաստանը, Դանիան, Իսպանիա, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Հունաստանը, Իրլանդիան, Իսրայելը, Ճապոնիան, Նորվեգիան, Լյուքսեմբուրգը, Շվեդիան, Շվեյցարիան:

Կտակների գրանցման համակարգի ներդրման մասին Բազելի 1972թ. կոնվենցիան ուղղված է ժառանգական իրավունքի նյութական նորմերի միասնականացմանը: Բազելի կոնվենցիայի նպատակն է՝ ստեղծել այնպիսի համակարգ, որը թույլ կտա կտակարարին գրանցել իր կտակը: Պայմանավորվող պետությունները պարտավորվում են իրենց տարածքներում ստեղծել կտակների ձևակերպման համակարգեր: Բազելի կոնվենցիան չի անդրադառնում այն կանոններին, որոնք յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում վերաբերում են կտակների և այլ ակտերի վավերականությանը: Հետևաբար, եթե Պայմանավորվող պետությունների օրենսդրության համաձայն կտակի վավերականությունն ապահովվելու համար կտակի գրանցում չի պահանջվում, ապա պայմանագրային նորմերը չպահպանելը չի կարող ազդել կտակի վավերականության վրա: Կոնվենցիայի մասնակից պետություններն են՝ Բելգիան, Իսպանիան, Իտալիան, Կիպրոսը, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Նիդերլանդները, Պորտուգալիան, Թուրքիան, Ֆրանսիան, Էստոնիան: Կոնվենցիան ստորագրել, սակայն չեն վավերացրել Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Դանիան, Ուկրաինան²³:

²³ <http://conventions.coe.int/Treaty/Commun/ChercheSig.asp?NT=077&CM=8&DF=24/11/2009&CL=ENG>

Միջազգային կտակի ձևի վերաբերյալ համընդհանուր օրենքի մասին Վաշինգտոնի կոնվենցիան (26 հոկտեմբերի 1973թ.) պարունակում է միջազգային կտակի վերաբերյալ մի շարք կանոններ, որոնք ամրագրված են Միջազգային կտակի ձևի մասին համընդհանուր օրենքում: Նշված Հավելվածում պարունակվող կանոնները համարվում են ընդհանուր գործածական (գրավոր ձև, կտակը կազմելու ժամանակ վկանների առկայությունը, այն կազմելու ժամանակ որոշակի իրավասու անձանց մասնակցությունը և այլն) և կիրառվում են ոչ միայն միջազգային մասնավոր, այլև բազմաթիվ երկրների ազգային իրավունքում: Միջազգային կտակի ձևի վերաբերյալ համընդհանուր օրենքի մասին Վաշինգտոնի 1973թ. կոնվենցիան ներառում է միջազգային կտակի ձևի մասին Տիպային օրենք և սահմանում է հետևյալը:

1. Պետությունն իր օրենսդրության մեջ ներառում է միջազգային կտակ կազմելու կանոնները:

2. Պայմանավորվող պետությունները պարտավոր են ստեղծել լիազոր անձանց ինստիտուտ, ովքեր կգործեն միջազգային կտակի հարցերով: Պետության սահմաններից դուրս նման անձանց լիազորություններով օժտված են հյուպատոսական և դիվանագիտական ներկայացուցիչները²⁴:

Միջազգային կտակները ունեն հիբրիդային ձև՝ փակ կտակի պարզեցված տեսակ: Կտակը պետք է կազմվի անձամբ ժառանգատուի կողմից և ստորագրվի ժառանգատուի կողմից: Ժառանգատուն պարտավոր է՝ անել հայտարարություն երկու վկանների և լիազոր անձի ներկայությամբ: Եթե ժառանգատուն ի վիճակի չէ ստորագրել կտակը, ապա նա դրա մասին հայտնում է լիազորված անձին (ինչի մասին կտակում արվում է գրառում) և նշում է այն անձին, ով իր անունից կստորագրի կտակը: Ժառանգատուն առաջնորդվում է այն պետության իրավունքով, որի տարածքում գործում է լիազորված անձը:

²⁴ Nadelmann K.H. „<Formal validity of wills and the Washington Convention 1973 providing the form of an international will>, A.S.C.L., 1974, p.365

Մահացած անձանց գույքի միջազգային կառավարման վերաբերյալ Հաագայի կոնվենցիայով (1973) նախատեսվում է միջազգային հավաստագրի ստեղծում, որով կսահմանվեն այն անձինք, ովքեր լիազորված են՝ կառավարելու մահացածի շարժական գույքը: Մասնակից պետություններից մեկում կազմված հավաստագիրը ճանաչվում է մյուս մասնակից պետություններում: Հավաստագիրը կազմվում է մահացածի սովորական բնակության վայրի պետական իրավասու մարմնի կողմից՝ (դատական կամ վարչական ատյան) համաձայն այդ պետության ներքին իրավունքի: Թույլատրվում է այն երկրի իրավունքի կիրառումը, որի քաղաքացիությունն ունի մահացածը: Այդ նպատակով երկու պետությունների (որի քաղաքացին է մահացածը և որտեղ նա բնակվում էր) իշխանությունները պետք է հանդես գան համատեղ հայտարարությամբ: Քաղաքացիության մասին օրենքը կիրառվում է, եթե անհատն ապրել է առնվազն հինգ տարի անընդմեջ այն երկրում, որը նրան մինչև մահվան պահը հավաստագիր է տրամադրել²⁵:

Ըստ միջազգային հավաստագրի՝ կարելի է տեղեկատվություն հավաքել ժառանգվող զանգվածի կազմի մասին, բացահայտել գույքի ծավալը, որոշել լավագույն գները գույքի վաճառքի դեպքում՝ ժառանգատուի պարտքերը մարելու համար: Հավաստագրի տիրապետողին Կոնվենցիան տրամադրում է իրավունք՝ հավաստագիրը տրամադրած երկրում ներկայացնել հայցեր, կնքել խաղաղ համաձայնագրեր, բաշխել ու վաճառել գույքը:

Հավատարմագրային սեփականության հիմունքներով իրականացվող գույքի տնօրինման և դրա ճանաչման մասին կիրառվող իրավունքի Հաագայի կոնվենցիայի (1985) համաձայն՝ ժառանգվող գույքը փոխանցող անձին առաջարկվում է ինքնուրույն ընտրել իրավունքը և այդ ընտրության շարժառիթները ձևակերպել հատուկ ակտի միջոցով: Եթե իրավունքի ընտրությունը տեղի չի ունեցել, ապա գործում են այն իրավական համակարգի նորմերը, որի հետ

²⁵ http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=83, Convention of 2 October 1973 Concerning the International Administration of the Estates of Deceased Persons.

հավատարմագրային սեփականության ժառանգումը կապված է առավել սերտ կապերով: Առավել սերտ կապն առկա է այն պետության օրենսդրության հետ, որի տարածքում է գործում ժառանգվող գույքի հավատարմագրային սեփականատերը (կորպորատիվ միավորման մեջ համախմբված սեփականատերերի խումբը) կամ այն պետության օրենսդրության հետ, որի սահմաններում է գտնվում տրաստի կամ հիմնադրամի կառավարման կենտրոնը²⁶:

Անշարժ գույքի ժառանգման վերաբերյալ կիրառվող իրավունքի մասին Հաագայի կոնվենցիայով (1989) սահմանվում է իրավունքի ընտրության հնարավորություն՝ առավել սերտ կապի սկզբունքով՝ անշարժ գույքի ժառանգության ոլորտում հարաբերությունների կարգավորման համար: Իրավունքի ընտրության ձևակերպումը իրականացվում է համապատասխան դիմումի միջոցով: Դիմումի ձևը և բովանդակությունը սահմանվում են ակտը կազմելու վայրի (պետության) օրենքով: Այն պետության օրենսդրության կիրառումը, որի հետ անձը՝ իրավահարաբերության սուբյեկտը, ունի առավել սերտ կապ, հնարավոր է այն պայմանով, եթե ակտը կազմելու վայրի պետության իրավունքով չի նշվում, թե կոնկրետ որ նորմատիվ ակտերով պետք է առաջնորդվել:

Անթույլատրելի է միմյանց նկատմամբ այն անձանց ժառանգական հավակնությունների առաջացումը, ովքեր գտնվում են տարբեր պետությունների իրավասության ներքո, եթե պարզ չէ ժառանգման հրավիրելու հերթականությունը: Կոնվենցիան ազդարարում է պետության իրավունքի, որին անձը կցանկանար ստորադասել անշարժ գույքի ժառանգման ռեժիմը, և այդ գույքի ծավալի միջև փոխադարձ կապը:

Մահվան դեպքում ժառանգության վերաբերյալ կիրառվող իրավունքի մասին Հաագայի կոնվենցիայով (1989) սահմանվում է, որ Կոնվենցիայի դրույթների համաձայն ընտրված ժառանգական օրենքը կիրառվում է ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգների շրջանակը որոշելու համար, անձին ժառանգությունից զրկելու և ա-

²⁶ http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=59, Convention of 1 July 1985 on the Law Applicable to Trusts and on their Recognition

նարժան ժառանգ ճանաչելու համար, անհատույց փոխանցված գույքի բաժինների վերաբերյալ և այդ բաժինները նվազեցնելու համար և ժառանգության բաժինները հաշվարկելիս դրանք հաշվի առնելու համար, կտակային կարգադրությունների նյութական իրավական վավերականության համար (7-րդ հոդված)²⁷:

1989 թվականի Հաագայի կոնվենցիան բնորոշվում է ժառանգության վերաբերյալ կիրառվող իրավունքի միասնականության ընտրությամբ: Կոնվենցիայի կոլիզիոն նորմերի հիման վրա սահմանված նյութական իրավունքը կիրառվում է ամբողջ ժառանգության նկատմամբ՝ անկախ դրա տարածական կամ բովանդակային բնութագրերից: Ժառանգատուն իրավունք ունի իր գույքի նկատմամբ կիրառվող իրավունքի վերաբերյալ արտահայտելու կամքի ինքնավարություն: Սակայն կիրառվող իրավունքի ընտրությունը պետք է ընդհանուր հիմունքներով տարածվի ամբողջ ժառանգության կարգավորման վրա: Ժառանգատուն չի կարող խախտել ժառանգության միասնականության սկզբունքը: Բացի այդ, ընտրությունը կարող է կատարվել միայն նման ընտրության պահին կամ մահվան պահին ժառանգատուի սովորական բնակավայրի պետության իրավունքի և իր քաղաքացիության պետության իրավունքի միջև (5-րդ հոդված): Կիրառվող իրավունքի ընտրությունը պետք է արտահայտվի մահվան դեպքում կարգադրության տեսքով արված հայտարարության մեջ: Իրավունքի ընտրությունը պետք է լինի պարզ և միանշանակ, մեկնաբանման ժամանակ կասկածների տեղիք չտա²⁸:

Ժառանգման բնագավառում միջազգային համընդհանուր ակտերը գործում են նաև Անկախ պետությունների համագործակցության մակարդակում: Այսպես, 1993 թվականի Քաղաքացիական,

²⁷ http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=62, Convention of 1 August 1989 on the Law Applicable to Succession to the Estates of Deceased Persons.

²⁸ <http://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?article=4190&context=lcp>, THE HAGUE CONVENTION ON THE LAW APPLICABLE TO SUCCESSION TO THE ESTATES OF DECEASED PERSONS: DO QUASI-COMMUNITY PROPERTY AND MANDATORY SURVIVORSHIP LAWS NEED PROTECTION?, CAROL S. BRUCH.

ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին Կոնվենցիայի V մասը ամբողջությամբ նվիրված է այդ խնդրին: Ընդ որում, Կոնվենցիայի 44-րդ հոդվածով ճանաչվում է ԱՊՀ մասնակից երկրների բոլոր քաղաքացիների իրավահավասարությունը ժառանգական իրավունքի հարցերում: Բացի այդ, ժառանգական իրավունքի առկայությունը որոշելիս կարևոր դրույթ է ժառանգի ընդհանուր կիրառելի անհատական օրենքի (մշտական բնակության օրենք) ներդրումը:

Մինսկի կոնվենցիայի 49-րդ հոդվածը նույնպես ամրագրում է դիվանագիտական ներկայացուցիչների և հյուպատոսների իրավունքը, որպես իր երկրի քաղաքացիների օրինական ներկայացուցիչների, պաշտպանելու նրանց շահերը ժառանգական իրավունքի ոլորտում²⁹:

Ժառանգական հարաբերությունների պատճառով առաջացող վեճերը քննվում են.

1) անշարժ գույքի վերաբերյալ՝ գույքի գտնվելու վայրի երկրի հաստատություններում,

2) շարժական գույքի վերաբերյալ՝ այն պետության դատարաններում, որի տարածքում ժառանգատուն բնակվել է մահվան պահին:

Կտակային ունակության և կտակի ձևի վերաբերյալ կոլիզիոն հարցերը որոշվում են ժառանգությունը կազմելու պահին՝ ըստ ժառանգատուի բնակության վայրի երկրի իրավունքի: Կտակը կամ դրա վերացման ակտի ձևը չպահպանելու հիմքով չեն կարող անվավեր ճանաչվել, եթե ձևը բավարարում է կտակը կազմելու վայրի երկրի իրավունքի պահանջներին:

1993 թվականի Կոնվենցիայում սահմանված է կոլիզիոն նորմերի «շղթան», որոնք կարգավորում են ժառանգական ստատուտը:

1. Շարժական գույքի ժառանգման իրավունքը որոշվում է այն երկրի օրենքով, որի տարածքում ժառանգատուն ունեցել է վերջին մշտական բնակության վայրը:

²⁹ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5942/, Конвенция о правовой помощи и правовых отношениях по гражданским, семейным и уголовным делам".

2. Անշարժ գույքի ժառանգման իրավունքը որոշվում է այն երկրի օրենքով, որի տարածքում գտնվում է այդ գույքը:

3. Անձի կտակ կազմելու և այն վերացնելու ունակությունը, կտակի ձևը և դրա վերացումը սահմանվում են այն երկրի օրենքով, որի տարածքում կտակարարը կտակը կազմելու պահին ունեցել է մշտական բնակության վայր:

4. Կտակը կամ կտակի վերացման ձևը չպահպանելու հետևանքով չի կարող ճանաչվել անվավեր, եթե ձևը համապատասխանում է կտակը կազմելու վայրի օրենքի պահանջներին:

Հարկ է նշել նաև, որ 1993 թվականի Կոնվենցիան չի պարունակում հիշատակումներ կտակային ակտի պարտադիր վավերապայմանների (ռեկվիզիտների) կամ դրա վավերականությունը որոշելու պահանջների մասին: Այս բոլոր հարցերը, կտակարարի գործունակությունը որոշելու կանոնների և ընթացակարգի հետ մեկտեղ, ստորադասվում են ժառանգատուի մշտական բնակության անհատական օրենքին: Որպես ճյուղային հանգույց 47-րդ հոդվածի նորմում նախատեսված է կտակային ակտը կազմելու վայրի օրենք:

Միջազգային ժառանգական իրավահարաբերությունների կարգավորման երկրորդ մակարդակը՝ երկկողմ միջազգային համաձայնագրեր են, որոնք այսօր բավականաչափ տարածված են:

Ինչ վերաբերում է ժառանգական հարաբերությունների իրավական կարգավորման երրորդ մակարդակին, ապա տվյալ ոլորտում կոլիզիոն նորմերը առկա են շատ երկրների ազգային օրենսդրություններում:

Կարելի է եզրահանգել, որ չնայած այն հանգամանքին, որ թեև ժառանգական հարաբերությունների յուրահատկության պատճառով դժվար են ենթարկվում միասնականացման և իրավական կարգավորման, սակայն նորմատիվ ակտերի եռաստիճան կառուցվածքը, որը ձևավորվել է այս ոլորտում, թույլ է տալիս լուծելու շատ կոլիզիոն խնդիրներ, որոնք կազմում են ժառանգական ստատուս: Այս պարագայում առանձնակի իմաստ են ստանում ազգային օրենսդրության համապատասխան նորմերը: Օտարերկրյա տար-

րով միջազգային ժառանգական հարաբերությունների կարգավորման հիմնական միջոցը երկկողմ միջազգային համաձայնագրերի, իրավական օգնության մասին և երկրների միջև հյուպատոսական համաձայնագրերի կնքումն է:

Սակայն, այժմ անհրաժեշտություն կա՝ զգալիորեն մշակելու միջազգային մասնավոր իրավունքում ժառանգական հարաբերությունների կոլիզիոն իրավական կարգավորումը:

Չնայած միջազգային մակարդակում ժառանգական հարաբերությունների նորմատիվային կարգավորման միասնականացման փորձեր են արվում, սակայն այդ ոլորտը բավականին տարբերվում է տարբեր հասարակություններում: Այդ հանգամանքը բացատրվում է, նախ և առաջ, ավանդույթների և սովորույթների, իրավական համակարգերի, սեփականության իրավունքի հիմունքների ըմբռնման միջև տարբերություններով: Այս ամենը հանգեցնում է նշանակալի թվով կոլիզիոն հարցերի ծագմանը, որոնք տեսության մեջ ստացել են ժառանգական ստատուս անվանումը:

Միջազգային մասնավոր իրավունքի ժառանգման ոլորտի հիմնական կոլիզիոն հարցերն են՝ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգների շրջանակը որոշելը, ժառանգական գույքի համակարգերը, կտակների ձևի նկատմամբ ներկայացվող պահանջները, շարժական և անշարժ գույքի ժառանգման տարանջատումը, ինչպես նաև կտակի վավերականության և կտակային գործունակությունը որոշելու հարցերը:

Նշված կոլիզիաների լուծման հիմնական եղանակներն են՝ համապատասխան կոլիզիոն նորմերի ամրագրումը ազգային օրենսդրությունում, ինչպես նաև ընդհանուր նորմերի մշակումը հանդիսանուր և տարածաշրջանային միջազգային իրավական փաստաթղթերում: Հարկ է նշել, որ առավել տարածված է համարվում հենց վերջին եղանակը, քանի որ այն ոչ միայն թույլ է տալիս՝ ստեղծելու օտարերկրյա բաղադրիչով բարդացված ժառանգման կարգավորման ոլորտում միասնական իրավական նորմ, այլև հաշվի է առնում ժառանգական հարաբերությունների բոլոր տեղային առանձնահատկությունները:

Գլուխ 2.

Կտակներին վերաբերող օրենսդրության և իրավական ակտերի ուսումնասիրություն

2.1 Ժառանգումը ըստ կրակի Իսրայելում

Իսրայելի ինչպես քաղաքացիական իրավունքը, այնպես էլ ամբողջ իրավական համակարգը, խառը բնույթ ունի: Բրիտանական մանդատի (1922-1948) ժամանակաշրջանում առավելապես կիրառվում էին անգլիական ընդհանուր իրավունքի նորմերը: Դա հաստատվել էր, նախ, օսմանյան ժամանակաշրջանի օրենքները փոխարինելու միջոցով, որոնց հիմքում ֆրանսիական աղբյուրներն էին: Ղրանց հիմքում էլ անգլիական ծագմամբ հրահանգներն էին: Երկրորդ՝ Մեծ Բրիտանիայում գործող մի շարք օրենքները միավորելու (ինկորպորացիա) միջոցով, օրինակ՝ պարտամուրհակների իրավունքի, ընկերությունների իրավունքի և ոչ նյութական գույքային իրավունքի ոլորտներում: Չուգահեռաբար օգտագործվում էին այն նորմերը, որոնք ստեղծվում էին անգլիական նախադեպային իրավունքի մեջ: Դրանք Իսրայելում ներդրվեցին որպես օրենքներ:

Իրավունքի «անգլիականացման» գործընթացի արագացմանը նպաստում էր այն հանգամանքը, որ դատավորները ընդհանուր իրավունքը լայնորեն կիրառում էին ոչ միայն այն դեպքերում, երբ գործող իրավունքով չէին կարգավորվում առանձին հարցերը կամ նույնիսկ իրավունքի որևէ ոլորտն ամբողջությամբ (օրինակ, չիմնավորված հարստացումը կամ կոլիզիոն իրավունքը), այլև այն դեպքում, երբ գործող նորմերը հստակ չէին, և անհրաժեշտ էր մեկնաբանել դրանք³⁰:

Այսպես, մինչև այժմ գործում են մի շարք հրամանագրեր, որոնք ընդունվել են Պաղեստինի ժամանակաշրջանում, երբ այն կառավարվում էր Բրիտանական մանդատով, իսկ որոշ օրենքներ,

քեն՝ փոփոխություններով, պահպանվել են Օսմանյան կայսրության ժամանակաշրջանից: Վերոնշվածից բացի, իսրայելական քաղաքացիական իրավունքի կարևոր աղբյուրներից են կրոնական օրենքները, հատկապես այն օրենքները, որոնցով կարգավորվում են ամուսնաընտանեկան հարաբերությունները: Սակայն, օսմանյան իրավունքի աղբյուրների հիման վրա գործող ակտերը գրեթե կորցրել են նշանակությունը, քանի որ իսրայելական օրենսդիրը, սկսած 1965թ., ընդունել է բազմաթիվ օրենքներ, որոնցով մասնակիորեն փոփոխվել են պարտավորական և իրային իրավունքը (մահմեդական «Մաջալլա» օրենսգիրքը դադարեց գործել 1980 թվականից)³¹: Այդ օրենքներից էին՝ պայմանագրերի իրավունքին, 1970թ. ներկայացուցչությանն առնչվող օրենքները, 1972թ. Պայմանագրերի մասին (Ընդհանուր մաս), 1968թ. Նվիրատվության մասին, 1967թ. Պահպանման մասին և 1965թ. Ժառանգության մասին օրենքները: Չնով դրանք մնան էին մայրցամաքային իրավունքի մոդելին, այսինքն՝ սահմանվում էին հիմնարար սկզբունքները, որոնք պետք է մանրամասնեին դատավորները:³²

Իսրայելում ժառանգական իրավունքը սահմանվում է 1965թ. Ժառանգության մասին Իսրայելի օրենքով (Հոկ հա-Երուշա), որի համաձայն՝ ժառանգությունը իրականացվում է ըստ կտակի և ըստ օրենքի, ինչպես նաև 1998թ. ընդունված Ժառանգության մասին ընթացակարգային որոշումներով (Տականոտ հա-Երուշա), որոնցով սահմանվում են իսրայելական տարբեր դատական ատյանների իրավասությունը ժառանգությունն ընդունելու հետ առնչվող հարցերի վերաբերյալ:

Իսրայելում օրինական կարգով ժառանգման հրավիրվելու համար անհրաժեշտ է ստանալ հատուկ օրդեր (Յավ Երուշա / Յավ Կիյում Յվաա), որը տրամադրվում է Իսրայելի արդարադատու-

³⁰ Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003, 10-12

³¹ <http://www.jstor.org/discover/10.2307/837295?uid=2&uid=4&sid=21104806854711>, Uri Yadin, The proposed Law of succession for Israel, p.143

³² Воробьев В.П. Государство Израиль: правовые основы возникновения и статус личности. М., 2001.

թյան նախարարությանը կից Ժառանգության Ռեգիստրատորի (Ռաշամլե-Ինյանա Երուշա) կամ Իսրայելի դատարանի կողմից:

Իսրայելում ժառանգության իրավունքի ոլորտում իրավասությունով օժտված են զուգահեռաբար մի քանի դատական ատյաններ՝ Ընտանեկան հարցերով Իսրայելի դատարանը (Բեյտ Միշպատլե-Ինյանա Միշպահա), Բարունիական դատարանը (Բեյտ-հա-հա-Դին հա-Ռաբանի), Տարածաշրջանային դատարանը (Բեյտ Միշպատ հա-Մահոզի)՝ որպես բողոքարկման ատյան կամ մինչև 1995թ. բացված գործերով առաջին ատյան, ինչպես նաև Իսրայելի Գերագույն դատարանը (Բեյտ Միշպատ հա-Էլիոն)՝ որպես վերջին բողոքարկման ատյան:

Ժառանգության հրավիրվելու օրդեր պահանջվում է ինչպես ըստ օրենքի ժառանգներին (յորշիմ ալ-պի դին), այնպես էլ ըստ կտակի ժառանգներին (յորշիմ ալ-պի ցվաա) և կոչվում է համապատասխանաբար «Ժառանգության օրդեր» (Ցավ-Երուշա) կամ «Ժառանգությունը կատարելու օրդեր» (Ցավ Կիյուն Ցվաա): Ժառանգության օրդեր ստանալու համար անհրաժեշտ է դիմում ներկայացնել ժառանգության հարցերով տարածաշրջանային ռեգիստրատորին (Ռաշամլե Ինյանի Երուշա) կամ Տարածաշրջանային բարունական դատարանին (Բեյտ հա-Դին հա-Ռաբանի հա-Էզորի)՝ նախապես վճարելով նախատեսված երկու պետական տուրքերը (ագրոտ):

Այս աշխատության մեջ մանրամասն ուսումնասիրվել է Իսրայելի ըստ կտակի ժառանգության ոլորտի ինստիտուտը՝ համաձայն վերոնշյալ օրենքի: Իսրայելի ժառանգական իրավունքի հիմնարար սկզբունքն է կտակարարի՝ կտակ անելու և այն առանց որևէ սահմանափակման փոփոխելու իրավունքը: Յուրաքանչյուր հաջորդ կտակով վերացվում են նախորդ կտակին հակասող դրույթները: Կտակը ստորագրելու իրավունքը չի կարող փոխանցվել երրորդ անձանց: Օրենքով նախատեսված են կտակի մի քանի տարբերակներ:

Ժառանգության մասին օրենքի 26-րդ հոդվածով սահմանվում է անձանց երեք կատեգորիա, որոնք կտակ կազմելու իրավունք չու-

նեն՝ անչափահասներ (մինչև 18 տարեկան անձինք), դատարանով ամբողջ ծավալով անգործունակ ճանաչված անձինք (դրանք, որպես կանոն, հոգեկան խանգարումներ ունեցող մարդիկ են, ընդ որում, առանց դատարանի որոշման անգործունակության մասին որոշումը իրավաբանական ուժ չունի) և այն անձինք, ովքեր թեև գործունակ են համարվում, սակայն կտակ կազմելու պահին ի վիճակի չեն գիտակցել այդ գործողության նշանակությունը: Վերջինս, որպես կանոն, վերաբերում է տարեց մարդկանց, ովքեր տառապում են այնպիսի հիվանդություններով, ինչպիսիք են գիտակցության վրա ազդող Ալցհեյմերի հիվանդությունը, սլյերոզը և այլն: Մյուս բոլոր դեպքերում ցանկացած մարդ կտակ կազմելու իրավունք ունի³³:

Ժառանգության մասին օրենքի 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն՝ ըստ կտակի ժառանգելու իրավունք ունի ցանկացած մարդ, ով կենդանի է կտակարարի մահվան օրը, ինչպես նաև այն անձը, ով ծնվել է կտակարարի մահվան օրվանից հետո երեք հարյուր օրվա ընթացքում (բացառությամբ այն դեպքերի, երբ ապացուցված է, որ այդ ժառանգի սաղմնավորումը տեղի է ունեցել կտակարարի մահից հետո)³⁴:

Ըստ կտակի ժառանգման կարող են հրավիրվել նաև կտակի մեջ նշված իրավաբանական անձինք, որոնք գործել են կտակարարի մահվան օրը, ժառանգության վկայագրի տրման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում (դատարանն իրավունք ունի այդ ժամանակահատվածը երկարաձգել ևս մեկ տարով) ստեղծված իրավաբանական անձինք: Այդ դեպքում իրավաբանական անձը պետք է լինի կորպորացիայի ձևով, օրինակ, ձեռնարկատիրական կորպորացիա, ոչ ձեռնարկատիրական կորպորացիա և այլն:³⁵

³³ <https://www.step.org/sites/default/files/Branches/Resources/IntroductiontoSuccessionLawinIsrael.pdf>

³⁴ http://aharonilaw.com/recent_articles/inheritance-law-in-israel-inheritance-by-will-in-israel/, Inheritance Law in Israel – Inheritance by Will in Israel.

³⁵ Inheritance Law: 5725 - 1965; a Completely Updated Translation, Incorporating All Amendments, Up to and Including Amendment of July 1995, p.14

Օրենքով նախատեսված են այնպիսի իրավիճակներ, երբ ժառանգը չունի ժառանգելու իրավունք. դրանք, այսպես կոչված անարժան ժառանգներն են: Եվ այսպես, և՛ ըստ օրենքի, և՛ ըստ կտակի ժառանգելու իրավունք չունի այն անձը, ով մեղավոր է ճանաչվել կտակարարի ուղղակի դիտավորությանը կանխամտածված սպանության մեջ կամ այդպիսի սպանության փորձ կատարելու մեջ³⁶: Անձը պետք է մեղավոր ճանաչվի դատարանով, և եթե նրա մեղավորությունը ապացուցված չէ, ապա այդ անձը ժառանգելու իրավունք ունի: Այն անձը, ով մեղավոր է ճանաչվել կտակարարի ուղղակի դիտավորությանը կանխամտածված սպանության փորձ կատարելու մեջ, և դրանից հետո կտակարարը գրավոր ձևով կամ այդ անձի օգտին կտակ կազմելու միջոցով ներել է այդ անձին, ապա նա նորից ըստ կտակի ժառանգելու իրավունք է ձեռք բերում: Եվ ըստ օրենքի, և ըստ կտակի ժառանգելու իրավունք չունի նաև այն անձը, ով մեղավոր է ճանաչվել կտակարարի կազմած վերջին կտակը թաքցնելու կամ ոչնչացնելու մեջ, կամ կտակը կեղծելու կամ կեղծ կտակն իրացնելու մեջ: Այդ դեպքերում անձը պետք է մեղավոր ճանաչվի դատարանով, և եթե նրա մեղավորությունը ապացուցված չէ, ապա այդ անձը ժառանգելու իրավունք ունի:

Ժառանգության մասին օրենքի 27-րդ, 28-րդ և 40-րդ հոդվածների համաձայն՝ կտակը պետք է կազմված լինի կտակարարի կողմից անձամբ: Կտակ կազմել օրենքի ներկայացուցչի միջոցով չի թույլատրվում:

Կտակարարն իրավունք ունի իր հայեցողությամբ կտակել գույքը ինչպես ըստ օրենքի ժառանգների շրջանակի մեջ մտնող, այնպես էլ ժառանգների շրջանակի մեջ չմտնող ցանկացած անձի (մեկ կամ մի քանի): Կտակարարն իրավունք ունի ցանկացած եղանակով սահմանել ժառանգության մեջ ժառանգների բաժինները, գրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներից մեկին, մի քանիսին կամ բոլորին՝ չնշելով դրա պատճառները, ինչպես նաև

³⁶ <https://www.step.org/sites/default/files/Branches/Resources/IntroductiontoSuccessionLawinIsrael.pdf>

կտակի մեջ մտցնել ժառանգության մասին օրենքով նախատեսված այլ կարգադրություններ: Պետք է պարզաբանել, որ կտակելու ազատությունը սահմանափակվում է ժառանգության մեջ պարտադիր բաժնի մասին օրենքով սահմանված կանոններով, որոնցով բաժին է նախատեսվում, օրինակ, կտակարարի անչափահաս երեխաներին, եթե նույնիսկ նրանք չեն հանդիսանում ըստ կտակի ժառանգներ:

Կտակարարն իրավունք ունի կազմել կտակ, որը պարունակում է նրան պատկանող ցանկացած գույքի մասին կարգադրություններ, ներառյալ գույքային իրավունքներ և պարտավորություններ, այդ թվում՝ այն գույքի մասին, որը նա կարող է ձեռք բերել հետագայում: Կտակարարը կարող է ըստ կտակի իր ժառանգներին կտակել իր ամբողջ գույքը կամ դրա պայմանական մասը, ինչպես նաև միայն գույքի առանձին տեսակը: Այս հարցում կարևոր է բացատրել հետևյալ դրույթը: Համաձայն Ժառանգության մասին օրենքի 147-րդ հոդվածի՝ այն գումարային միջոցները, որոնք պետք է վճարվեն անձի մահվան կապակցությամբ՝ ըստ ապահովագրի կամ կենսաթոշակային կամ այլ նման հիմնադրամում անդամակցության, չեն մտնում ժառանգության զանգվածի մեջ և պետք է վճարվեն փաստաթղթերում, օրինակ, ապահովագրում նշված անձին՝ որպես շահառուի, այլ ոչ թե ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգներին, թեև, որպես կանոն, այդ շահառուն միաժամանակ հանդիսանում է ըստ օրենքի ժառանգ³⁷: Սակայն, եթե կտակարարն, այնուամենայնիվ, ցանկանում է, որ վերոնշված դրամական միջոցները մտնեն ժառանգության զանգվածի մեջ, և նա կարողանար դրանք կտակել որևէ այլ անձի, այլ ոչ թե շահառուին, օրինակ, գործի անձնական հանգամանքները փոփոխվելու պատճառով, ապա դրա համար կտակարարը պետք է կտակի մեջ նշում կատարի, թե ում է նա այդ միջոցները կտակում, և, ամենակարևորը՝ գրավոր ծանուցում ուղարկի, օրինակ, ապահովագրական ըն-

³⁷ Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003, стр.53141

կերությանը, որտեղ կտակարարը պետք է նշի, թե նա ցանկանում է, որ ապահովագրով հատկացված դրամական միջոցները մտնեն ժառանգության զանգվածի մեջ, որը նշանակել է ըստ կտակի ժառանգին, ում պետք է վճարել այդ գումարը իր մահվան դեպքում՝ շահառուին վճարելու փոխարեն: Միայն այդ դեպքում վերոնշյալ դրամական միջոցները կարող են ժառանգվել ըստ կտակի:

Եթե կտակի որևէ առանձին կարգադրություն կամ կտակն ամբողջությամբ կախված է այն անձի կամքից, ով չի հանդիսանում կտակարար, ապա այդ կարգադրությունը կամ կտակն ամբողջությամբ չունի իրավաբանական ուժ: Իրավաբանական ուժ չունի նաև կտակարարի նախնական պարտավորվածությունը կտակ կազմելու մասին, կտակի մեջ փոփոխություններ մտցնելու կամ կտակը վերացնելու մասին, ինչպես նաև կտակարարի նախնական պարտավորվածությունը՝ խուսափելու վերոնշյալ գործողություններից:

Իսրայելում ճանաչվում են կտակ կազմելու մի քանի տարբերակներ: Համաձայն ժառանգության մասին օրենքի 18-րդ հոդվածի՝ կտակը կարող է կազմվել պարզ գրավոր ձևով, վկաների ներկայությամբ, իշխանության ներկայացուցչի ներկայությամբ և բանավոր: Դիտարկենք մանրամասն յուրաքանչյուր ձևը:

Առաջին ձև. պարզ գրավոր ձևով կազմված կտակ:

Ժառանգության մասին օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ կտակը կարող է կազմվել պարզ գրավոր ձևով: Այդ դեպքում պետք է պահպանվեն հետևյալ պայմանները. Կտակը պետք է գրվի և ստորագրվի կտակարարի ձեռքով (ստորագրությունը պետք է դրվի կտակի յուրաքանչյուր էջի վերջում), կտակում պետք է նշվի ամսաթիվը՝ գրված կտակարարի ձեռքով (ամսաթիվը պետք է նշվի կտակի յուրաքանչյուր էջի վերջում): Միայն այս երեք պայմանները պահպանելու դեպքում այդ փաստաթուղթը ճանաչվում է պարզ գրավոր ձևով կազմված կտակ³⁸:

Սակայն, ժառանգության մասին օրենքի 25-րդ հոդվածի (բետ) (03.04.1985թ. փոփոխություն) համաձայն՝ եթե պարզ գրա-

վոր ձևով կազմված կտակի մեջ բացակայում է ստորագրությունը կամ ամսաթիվը, ապա, չնայած դրան, դատարանը, որոշակի համաձայնեցների դեպքում, իրավունք ունի ճանաչել այդ կտակը վավերական, սակայն այն պայմանով, որ դատարանի մոտ չպետք է կասկած հարուցի այդ կտակի իսկությունը և այն, որ այդ կտակի մեջ շարադրված է կտակարարի իսկական կամարտահայտությունը³⁹:

Կտակը պարզ գրավոր ձևով կարող է կազմվել կտակարարի կողմից առանց որևէ մեկի օգնության: Այդ կտակի համար չի պահանջվում վկաների որևէ հաստատում և նոտարական վավերացում:

Երկրորդ ձև. կտակ կազմելը վկաների ներկայությամբ:

Ժառանգության մասին օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ կտակը կարող է կազմվել վկաների ներկայությամբ: Այդ դեպքում պետք է պահպանվեն հետևյալ հինգ պայմանները:

1. Կտակը պետք է կազմվի գրավոր ձևով: Կտակի տեքստը պետք է գրվի անձամբ կտակարարի կողմից կամ կտակարարի խնդրանքով այլ անձի կողմից:

2. Կտակարարը պետք է հայտարարություն անի երկու վկաների ներկայությամբ այն մասին, որ տվյալ փաստաթուղթը հանդիսանում է իր կտակը:

3. Կտակը պետք է ստորագրվի կտակարարի ձեռքով երկու վկաների ներկայությամբ (ստորագրությունը պետք է դրվի կտակի յուրաքանչյուր էջի վերջում):

4. Երկու վկաները նույն պահին պետք է իրենց ձեռքով ստորագրեն կտակը և գրավոր հաստատեն կտակում, որ լսել են, թե ինչպես կտակարարը հայտարարել է այն մասին, որ այդ փաստաթուղթը հանդիսանում է իր կտակը և տեսել են այն, որ կտակարարը ստորագրել է կտակը (վկաները պետք է ստորագրեն և հաստատեն կտակի յուրաքանչյուր էջը):

³⁹ Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003, стр.458

³⁸ <http://www.globalpropertyguide.com/Middle-East/Israel/Inheritance>

5. Կտակի մեջ պետք է նշվի կտակարարի և երկու վկաների կողմից այն ստորագրելու ամսաթիվը (դա պետք է նշված լինի կտակի յուրաքանչյուր էջում): Միայն վերոնշված բոլոր հինգ պայմանները պահպանելու դեպքում փաստաթուղթը ճանաչվում է վկաների ներկայությամբ կազմված կտակ: Սակայն, Ժառանգության մասին օրենքի 25-րդ հոդվածի (ալեֆ) (03.04.1985թ. փոփոխություն) համաձայն՝ եթե կտակը վկաների ներկայությամբ կազմվել է վերոնշված հինգ պայմաններից մեկի խախտմամբ, օրինակ, սխալ է հայտնաբերվում ստորագրության մեջ կամ ընդհանրապես կտակի որևէ էջում բացակայում է ստորագրությունը կամ ամսաթիվը, ապա, չնայած դրան, դատարանն իրավունք ունի ճանաչել այդ կտակը վավերական, սակայն այն պայմանով, որ դատարանի մոտ չպետք է կասկած հարուցի այդ կտակի իսկությունը:⁴⁰

Վկաների ներկայությամբ կազմված կտակի համար նոտարական վավերացում չի պահանջվում:

Կտակարարն իրավունք ունի կտակ կազմել՝ հնարավորություն չտալով վկաներին ծանոթանալու կտակի բովանդակության հետ, դա կոչվում է փակ կտակ, որի իրավաբանական ուժն ամենևին չի նվազում: Վկաներ ընտրելիս կտակարարը պետք է հաշվի առնի, որ Ժառանգության մասին օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ վկաներ հանդես գալու իրավունք չունեն անչափահասները և դատարանով անգործունակ ճանաչված անձինք: Կտակարարը պետք է հաշվի առնի նաև այն, որ Ժառանգության մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ այն անձը, ում օգտին կամ ում ամուսնու (կնոջ) օգտին կազմվել է կտակը, չի կարող կտակ կազմելու ժամանակ հանդես գալ որպես վկա:

Երրորդ ձև. կտակ կազմելը իշխանության ներկայացուցչի ներկայությամբ:

Նախ նշենք, որ Ժառանգության մասին օրենքի համաձայն՝ Իսրայելում իշխանության ներկայացուցիչներ են ճանաչվում հետևյալ անձինք՝ դատավորը, դատավոր-ռեզիստրատորը, ժա-

ռանգության հարցերով ռեզիստրատորը, կրոնական դատարանի անդամը, նոտարը: Ժառանգության մասին օրենքի 22-րդ հոդվածի (փոփոխություններ 09.04.1976թ., 07.08.1995թ. և 30.06.1998թ.) համաձայն՝ կտակը կարող է կազմվել իշխանության ներկայացուցչի ներկայությամբ: Այդ դեպքում պետք է պահպանվեն հետևյալ վեց պայմանները:

1. Կտակը պետք է գրվի անձամբ կտակարարի ձեռքով կամ նրա խնդրանքով այլ անձի կողմից, որից հետո կտակն անձամբ կտակարարի կողմից պետք է փոխանցվի իշխանության ներկայացուցչին: Կամ կտակը պետք է գրվի իշխանության ներկայացուցչի կողմից՝ կտակարարի բառերից:

2. Կտակը պետք է ամբողջությամբ ընթերցվի իշխանության ներկայացուցչի կողմից՝ կտակարարի ներկայությամբ:

3. Կտակարարը պետք է հայտարարի, որ տվյալ փաստաթուղթը հանդիսանում է իր կտակը:

4. Իշխանության ներկայացուցիչը պարտավոր է գրավոր հաստատել կտակում, որ կտակն ընթերցվել է կտակարարի ներկայությամբ, և կտակարարը հայտարարել է, որ այդ փաստաթուղթը հանդիսանում է իր կտակը:

5. Եթե կտակը գրվել է այն լեզվով, որին կտակարարը չի տիրապետում, ապա այն պետք է թարգմանվի այն լեզվով, որին նա տիրապետում է և ընթերցվի իր ներկայությամբ: Թարգմանիչը պարտավոր է գրավոր հաստատել կտակում, որ այն թարգմանվել է ընթերցվել է կտակարարի ներկայությամբ:

6. Կտակարարն իրավունք ունի անձամբ կարդալու կտակը կամ կտակի թարգմանությունը իշխանության ներկայացուցչի ներկայությամբ: Այդ դեպքում իշխանության ներկայացուցիչը և թարգմանիչը ազատվում են կտակարարի ներկայությամբ կտակն ընթերցելու պարտականությունից:⁴¹

⁴⁰ <http://www.justice.gov.il/MOJEng/Hadracha/MadrichYerusot/>, The Succession Law -1965

⁴¹ Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003, стр.456

Միայն վերոնշված բոլոր վեց պայմանները պահպանելու դեպքում փաստաթուղթը ճանաչվում է իշխանության ներկայացուցչի ներկայությամբ կազմված կտակ: Սակայն, համաձայն արդեն հիշատակված Ժառանգության մասին օրենքի 25-րդ հոդվածի (ալեֆ) (03.04.1985թ. փոփոխություն)՝ եթե իշխանության ներկայացուցչի ներկայությամբ կտակը կազմվել է վերոնշված վեց պայմաններից մեկի խախտմամբ, ապա, չնայած դրան, դատարանն իրավունք ունի ճանաչելու այդ կտակը վավերական, սակայն այն պայմանով, որ դատարանի մոտ չպետք է կասկած հարուցի այդ կտակի իսկությունը: Պետք է նշել այն, որ իշխանության ներկայացուցչի ներկայությամբ կազմված կտակը համարվում է նոտարի կողմից վավերացված:

Չորրորդ ձև. բանավոր կազմված կտակ:

Ժառանգության մասին օրենքի 23-րդ հոդվածի (07.08.1995թ. և 30.06.1998թ. փոփոխություններ) համաձայն՝ կտակը կարող է կազմվել բանավոր, սակայն միայն այն դեպքում, երբ առաջանում է օրենքում նշված հանգամանքներից որևէ մեկը: Առաջին հանգամանքն այն է, երբ կտակարարը մահամերձ է, երկրորդը՝ երբ կտակարարը կարծում է, որ գտնվում է կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակում (օրինակ, զինծառայողը՝ մարտական առաջադրանք կատարելիս):

Բանավոր կտակ կազմելիս պետք է պահպանվեն հետևյալ հինգ պայմանները:

1. Կտակը պետք է արվի կտակարարի կողմից բանավոր՝ երկու վկաների ներկայությամբ:

2. Կտակարարի կողմից ասված խոսքը պետք է գրավոր գրանցվի վկաների կողմից արձանագրության մեջ, որտեղ պետք է նշվեն նաև այն հանգամանքները, որի ժամանակ արվել է բանավոր կտակը, և նշվի այն ամսաթիվը, երբ արվել է բանավոր կտակը:

3. Արձանագրությունը պետք է ստորագրվի անձամբ երկու վկաների կողմից:

4. Արձանագրությունը երկու վկաների կողմից անձամբ պետք է փոխանցվի ժառանգության գործերով ռեգիստրատորին՝ պահպանման համար:

5. Կտակարարի ասված խոսքի գրանցումը արձանագրության մեջ, արձանագրության ստորագրումը և նրա փոխանցումը պահպանման համար պետք է կատարվի վկաների կողմից անհապաղ, կտակարարի կամարտահայտությունից հետո առաջին իսկ հնարավորության դեպքում: Միայն այս հինգ պայմանները պահպանելու դեպքում բանավոր կտակն ունի իրավաբանական ուժ:

Պետք է հիշել, որ վկաներ հանդիսանալու իրավունք չունեն անչափահասները և դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձինք: Սակայն, Ժառանգության մասին օրենքի 25-րդ հոդվածի (ալեֆ) (03.04.1985թ. փոփոխություն) համաձայն՝ եթե բանավոր կտակը կազմվել է վերոնշված երեք պատճառներից որևէ մեկի խախտմամբ կամ սխալներ են թույլ տրվել վկաներ ընտրելիս, ապա, չնայած դրան, դատարանն իրավունք ունի ճանաչելու այդ կտակը վավերական, սակայն այն պայմանով, որ դատարանի մոտ չպետք է կասկած հարուցի այդ կտակի իսկությունը: Բանավոր կտակի վերաբերյալ պետք է ուշադրություն դարձնել երեք կարևոր հանգամանքի: Առաջին. Ժառանգության մասին օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ բանավոր կտակը կարող է կազմվել հոգուտ այն անձի, ով վկա է հանդիսանում կտակ անելիս, կամ այդ անձի անուսնու (կնոջ) օգտին: Երկրորդ. բանավոր կտակի համար ոչ մի նոտարական վավերացում չի պահանջվում: Երրորդ. բանավոր կտակը կորցնում է ուժը, եթե այդ կտակը կազմելու հանգամանքները փոփոխվելուց հետո մեկ ամիս անց կտակարարն, այնուամենայնիվ, ողջ է մնում:

Ժառանգների և ենթաժառանգների նշանակումը կտակում

Իսրայելում կտակարարն իրավունք ունի կազմել կտակը հոգուտ մեկ կամ մի քանի անձանց, որոնք և մտնում են և չեն մտնում ըստ օրենքի ժառանգների շրջանակի մեջ: Բացի այդ, Ժառանգության մասին օրենքով նախատեսված են կտակի մեջ ժառանգների և ենթաժառանգների նշանակման լրացուցիչ հնարավորություններ:

Ժառանգության մասին օրենքի 42-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է ժառանգել երկու ժառանգներին ըստ հերթականության: Այդ դեպքում սկզբում ժառանգությունը պետք է ընդունի առաջին ժառանգը և միայն այդ ժառանգի մահից հետո կամ կտակարարի նշված որոշակի պայմանը կատարվելուց հետո, կամ երբ որ լրանա կտակարարի կողմից կտակում նշված որոշակի պայմանի տևողությունը (կախված նրանից, թե ինչն ավելի վաղ կպատահի), երկրորդ ժառանգը ձեռք է բերում ժառանգի իրավունք⁴²: Ժառանգության մասին օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարն իրավունք ունի կտակում նշել այլընտրանքային ժառանգների, այսինքն՝ նշանակել ենթաժառանգներ այն դեպքերում, երբ նրա կողմից կտակում նշանակված ժառանգը չի կարողանում ընդունել ժառանգությունը հետևյալ պատճառներով. այդ ժառանգը մահանում է կտակարարից շուտ, ժառանգն իրավունք չունի ընդունելու ժառանգությունը որպես անարժան ժառանգ, կամ հրաժարվում է ժառանգությունից ոչ կտակարարի ամուսնու (կնոջ), երեխայի, հարազատ եղբոր (քրոջ), այլ ուրիշ անձանց օգտին: Այդ հրաժարվելը չունի իրավաբանական ուժ: Բոլոր վերոնշյալ դեպքերում ենթաժառանգը ձեռք է բերում ժառանգելու իրավունք նշանակված այն ժառանգի փոխարեն, ով չի կարողանում ընդունել ժառանգությունը: Կտակարարն իրավունք ունի նշանակելու ավելի քան մեկ ենթաժառանգ: Օրենքով չի սահմանափակվում մեկը մյուսին հաջորդող ենթաժառանգների թիվը:

Կտակարարն իրավունք ունի նաև նշանակելու ժառանգ՝ որոշակի պայմաններով: Այսպես, ժառանգության մասին օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է որոշել, որ ժառանգը ձեռք է բերում ժառանգելու իրավունք միայն որոշակի պայման կատարվելու կամ որոշակի ժամկետ լրանալու դեպքում: Ժառանգության մասին օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է որոշել, որ ժառանգը դադարում է ունենալ ժառանգելու իրավունք որոշակի պայման կատարվելու դեպքում կամ կտակում

⁴² Israeli succession Law and inter vivos trusts, Trusts & Trustees, Vol. 14, No. 10, December 2008, p.696

նշված որոշակի ժամկետը լրանալու դեպքում: Այս հոդվածով օգտվում են, որպես կանոն, տարեց ամուսնական զույգերը: Ժառանգության մասին օրենքի 49-րդ հոդվածի համաձայն՝ եթե ըստ կտակի ժառանգ հանդիսացող անձը մահանում է նախքան կտակարարի մահը, և կտակարարը այդ անձի փոխարեն չի նշանակել ժառանգությունն ընդունելու համար այլ անձի, ապա այդ դեպքում հնարավոր են երկու տարբերակներ. եթե կտակարարի մահվան օրը կամ մահացած ժառանգի ազգականներ, ապա նրանք կարող են ընդունել ժառանգությունը, եթե այդպիսի ազգականներ չկան, ապա կտակային կարգադրությունը մահացած ժառանգի օգտին վերացվում է և ճանաչվում է անվավեր:

Ինչպես հայտնի է, կտակը պետք է արվի կտակարարի կողմից անձամբ և կտակարարն իրավունք չունի կտակի մեջ ժառանգ նշանակելու իրավունքը փոխանցել այլ անձի: Սակայն, ժառանգության մասին օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարն իրավունք ունի կտակի մեջ նշելու այն անձին, ում պարտականությունն է՝ ժառանգ ընտրել կտակարարի կողմից կտակի մեջ անձամբ նշված որոշակի մարդկանց շրջանակից⁴³:

Կտակարարն իրավունք ունի կտակել իր ամբողջ գույքը կամ նրա պայմանական մասը: Այդ դեպքում գույքի մնացած մասը ժառանգվում է օրենքով սահմանված կարգով:

Ժառանգության մասին օրենքի 46-րդ, 47-րդ, 48-րդ, 51-րդ և 52-րդ հոդվածների համաձայն՝ եթե կտակարարը իր գույքի պայմանական մասը կտակով ժառանգում է այն ժառանգին, ով միաժամանակ հանդիսանում է ըստ օրենքի ժառանգ, ապա կտակում նշված այդ պայմանական մասը ժառանգվում է նրան ժառանգության այն մասի փոխարեն, որը օրենքով նախատեսված էր ժառանգին, սակայն ոչ ի լրացումն դրան⁴⁴:

⁴³ Israeli succession Law and inter vivos trusts, Trusts & Trustees, Vol. 14, No. 10, December 2008, p.696

⁴⁴ Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003, стр.469-472

Ժառանգության մասին օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարն իրավունք ունի ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգին հանձնարարելու՝ ժառանգության հաշվին կատարել որևէ գույքային բնույթի պարտավորություն (հրիտակ) մեկ կամ մի քանի անձանց (հրիտակառուների) օգտին, որոնք իրավունք են ձեռք բերում պահանջելու այդ պարտավորությունների կատարումը (կտակից հրաժարվելը): Այդ կերպ կտակից հրաժարվելը պետք է սահմանվի կտակում, այսինքն՝ կտակի բովանդակությունը կարող է սպառվել կտակից հրաժարվելու դեպքում:

Կտակ կազմելիս պետք է հաշվի առնել այն, որ կտակի տեքստը պետք է լինի պարզ, հստակ, կրկնակի մեկնաբանությունը բացառող և արտահայտի կտակարարի իսկական կամքը, հակառակ դեպքում կտակը համարվում է անիրագործելի: Հաճախ կտակարարի մահից հետո կտակի տեքստը մեկնաբանելիս առաջանում են որոշակի բարդություններ: Այդ դեպքում ժառանգության գծով ռեզիստրատորը կամ դատարանը (եթե գործը փոխանցվում է դատարանի քննությանը) պարտավոր են հետևել Ժառանգության մասին օրենքի 32-րդ և 54-րդ հոդվածներով սահմանված կանոններին:

Եթե կտակում հայտնաբերվում է վրիպակ կամ սխալ կտակվող գույքի նկարագրության մեջ, ամսաթիվը, թվերը, հաշվի համարը և այլն նշելիս, ինչպես նաև ժառանգի անվան մեջ, սակայն ժառանգության գծով ռեզիստրատորի կամ դատավորի կողմից հաստատվել է, որ նման վրիպակը կամ սխալը չեն ազդում կտակարարի կամարտահայտությունը ըմբռնելու վրա, ապա նրանք իրավունք ունեն ուղղելու այդ անճշտությունները: Այդ դեպքում կտակի մեկնաբանումը նույնպես կատարվում է համաձայն ուղղված տեքստի:

Կտակը մեկնաբանելիս պետք է ուշադրություն դարձնել կտակում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի իմաստին, սակայն, դրա հետ մեկտեղ, պետք է ապահովվի կտակարարի ենթադրյալ կամքի առավել ամբողջական իրականացումը: Իսկ եթե կտակի տեքստով դա չի հաջողվում կատարել, ապա հաշվի են առնում կտակը կազմելու հետ կապված հանգամանքները,

որպեսզի բացահայտվի կտակարարի ենթադրյալ կամքը: Հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ կտակի տեքստը դեռ կարելի է կրկնակի մեկնաբանել, որոնցից մեկով կտակը կհամարվի անվավեր իրավաբանական տեսանկյունից, իսկ մյուս մեկնաբանությամբ այն կարելի է իրականացնել՝ չնայած բառերի և արտահայտությունների տառացի իմաստին և կտակը գրելու հետ կապված հանգամանքներին: Այդ դեպքում, համաձայն օրենքի՝ ուշադրություն է դարձվում կտակի այն մեկնաբանությանը, որը թույլ է տալիս կատարել կտակը, և այդպիսով իրականացնել կտակարարի ենթադրյալ կամքը:

Կտակարարն իրավունք ունի՝ պահել իր կտակը ցանկացած տեղում, որը նա նպատակահարմար է համարում այդ նպատակի համար. դա կարող է լինել իր սեփական բնակարանը, բանկային սեյֆը և այլն: Սակայն օրենքով նախատեսվում է լրացուցիչ տարբերակ՝ կտակը պահելու համար: Ժառանգության մասին օրենքի 21-րդ հոդվածի (07.08.1995թ. և 30.06.1998թ. փոփոխություններ) և 22-րդ հոդվածի 09.04.1976թ., 07.08.1995թ. և 30.06.1998թ. փոփոխություններ) համաձայն՝ պարզ գրավոր ձևով կազմված կտակը, վկաների ներկայությամբ կազմված կտակը և իշխանության ներկայացուցիչների ներկայությամբ կազմված կտակը կարելի է պահելու նպատակով փոխանցել ժառանգության հարցերով ռեզիստրատորին: Սակայն, ի տարբերություն կտակի վերոնշված երեք ձևերի, բանավոր կազմված կտակը, իսկ ավելի ճիշտ, վկաների կողմից կազմված կտակի արձանագրությունը, Ժառանգության մասին օրենքի 23-րդ հոդվածի (բետ) (07.08.1995թ. և 30.06.1998թ. փոփոխություններ) համաձայն՝ պարտադիր կարգով, անհապաղ պետք է փոխանցվի ժառանգության հարցերով ռեզիստրատորին՝ պահելու համար⁴⁵:

Ժառանգության հարցերով ռեզիստրատորին պահելու նպատակով կտակը փոխանցելիս պետք է պահպանվեն որոշակի ընթացակարգային կանոններ, որոնցից հիմնական կանոններն են՝

⁴⁵ Inheritance Law: 5725 - 1965; a Completely Updated Translation, Incorporating All Amendments, Up to and Including Amendment of July 1995, p.14

առաջին. կտակարարը պարտավոր է անձամբ ռեզիստրատորին գրավոր դիմում ներկայացնել, որտեղ պետք է շարադրվի պահելու նպատակով կտակը փոխանցելու մասին խնդրանքը, երկրորդ. պահելու համար կտակը փոխանցելը պետք է կատարվի անձամբ կտակարարի կողմից, երրորդ. կտակը պետք է փոխանցվի կնքված ծրարով, որտեղ դրված է ռեզիստրատորի կնիքը, գրված են կտակարարի անձնական տվյալները, դրված են նրա ստորագրությունը և ռեզիստրատորի ստորագրությունը: Վերոնշյալ կարգը (համապատասխան փոփոխություններով) գործում է նաև պահելու համար բանավոր կտակի արձանագրությունը փոխանցելիս, ինչը պետք է կատարվի այդ արձանագրությունը կազմած երկու վկաների կողմից՝ անձամբ:

Կտակարարն իրավունք ունի ցանկացած պահին առգրավելու (ետ վերցնելու) կտակը պահպանման վայրից իր տնօրինման տակ (որպես կանոն, կտակի բովանդակության մեջ փոփոխություններ մտցնելու համար), սակայն, դրա համար նա պետք է նախապես գրավոր դիմում ներկայացնի ռեզիստրատորին:

Կտակարարն իրավունք ունի վերացնել կամ փոփոխել իր կազմած կտակը ցանկացած ժամանակ՝ չնշելով դրա պատճառները: Կտակը վերացնելու կամ փոփոխելու համար չի պահանջվում որևէ մեկի, այդ թվում՝ այն անձանց համաձայնությունը, ում կտակարարը ժառանգ է նշանակել վերացվող կամ փոփոխվող կտակում: Ժառանգության մասին օրենքի 36-րդ հոդվածով նախատեսվում են կտակը վերացնելու երեք եղանակներ:

Առաջին եղանակ. կտակը կարող է վերացվել դրա մասին կարգադրությամբ, ինչը պետք է կազմվի կտակ անելու համար Ժառանգության մասին օրենքով սահմանված ձևով, այսինքն՝ կտակը վերացնելու մասին կարգադրությունը պետք է լինի կազմված կամ պարզ գրավոր ձևով, կամ՝ վկաների ներկայությամբ, կամ՝ ներկայացուցիչների ներկայությամբ, կամ՝ բանավոր:

Երկրորդ եղանակ. կտակը վերացնելը կտակի տեքստը ոչնչացնելու, օրինակ՝ այրելու միջոցով:

Երրորդ եղանակ. կտակը վերացնելը և փոփոխելը՝ նոր կտակ անելու միջոցով: Կտակարարն իրավունք ունի նոր կտակ անելու միջոցով վերացնել կամ փոփոխել նախորդ կտակը: Նոր կտակը պետք է կազմվի օրենքում նշված ձևերից մեկին համապատասխան, և ցանկալի է, որ նոր կտակում հստակ նշվի, որ նոր կտակով վերացվում է նախորդ կտակը: Պետք է հիշել, որ եթե նույնիսկ նոր կտակը չի պարունակում նախորդ կտակը վերացնելու մասին կամ առանձին կտակային կարգադրությունները վերացնելու մասին ուղղակի հրահանգներ, ապա այն դիտարկվում է որպես նոր կտակ, որով վերացվում է նախորդ կտակն ամբողջությամբ կամ նախորդ կտակի այն մասը, որը հակասում է նոր կտակին, բացառությամբ այն դեպքերի, երբ նոր կտակի տեքստում առկա է միայն նախորդ կտակի կամ առանձին կտակային կարգադրությունների վերաբերյալ լրացում: Վերջին դեպքում նոր կտակը դիտարկվում են որպես նախորդ կտակի լրացում:

Եթե կտակը կազմվել է Ժառանգության մասին օրենքի դրույթների խախտումներով, ապա դա հանգեցնում է կտակի անվավերության: Կտակը կարող է անվավեր ճանաչվել դատարանի կողմից (վիճարկվող կտակ) կամ անկախ այդ ճանաչումից (առոչինչ կտակ): Կտակը կարող է անվավեր ճանաչվել դատարանի կողմից այն անձի հայցով, ում իրավունքները կամ օրինական շահերը խախտվել են այդ կտակով: Կտակի անվավերությունը չի գրկում կտակի մեջ նշված ժառանգներին կամ հրիտակառուներին ըստ օրենքի ժառանգելու կամ այլ՝ վավերական կտակով ժառանգելու իրավունքից: Ժառանգության մասին օրենքի 30-րդ հոդվածի, 31-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ և 38-րդ հոդվածների համաձայն՝ կտակը կամ կտակային առանձին կարգադրությունը, որոնց կատարումը անօրինական է, անբարոյական է կամ անիրականալի, ճանաչվում է անվավեր⁴⁶:

⁴⁶ Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003, стр.461-464

Կտակի միայն առանձին մասի կամ առանձին կարգադրությունների անվավերությունը չի ազդում կտակի մնացած մասի վրա: Վերջինս կարող է ճանաչվել անվավեր միայն այն դեպքում, երբ դատարանի կարծիքով այն անխզելիորեն կապված է կտակի այն մասերի հետ, որոնք ավելի վաղ արդեն անվավեր են ճանաչվել, կամ եթե դատարանի կարծիքով՝ կտակարարը չի ցանկացել թողնել կտակի որևէ մասը ուժի մեջ՝ առանձնացած անվավեր մասից կամ անվավեր կտակային կարգադրությունից: Բնական է, որ այդ դեպքում դատարանը հարկադրված է ամբողջ կտակը անվավեր ճանաչել: Կտակը, բացառությամբ բանավոր արված կտակի, ինչպես նաև կտակային առանձին կարգադրությունը, որն արվել է կտակը կազմելու մեջ մասնակցած անձի, օրինակ, նոտարի, ինչպես նաև այն վկաների օգտին, ովքեր ներկա են եղել կտակը կազմելու ժամանակ, կամ յուրաքանչյուր վերոնշյալ անձանցից ամուսնու (կնոջ) օգտին, ճանաչվում է անվավեր: Այս կանոնի էությունն այն է, որպեսզի կտակարարին կտակ անելիս զերծ պահեն այդ իրավաբանական փաստաթուղթը կազմելիս անմիջականորեն մասնակցած անձանց որևէ ճնշումից: Դրա հետ կապված այդպիսի անձինք՝ նոտարը, ժառանգության հարցերով ռեզիստրատորը, վկաները և այլն, պետք է հանդիսանան բացարձակ չշահագրգռված կողմ: Օրենքով նախատեսված է նաև այն դրույթը, որ եթե կտակը կամ նրա առանձին կարգադրությունը կազմվել է այլ անձի հարկադրանքով կամ սպառնալիքի, խաբեության, խորամանկության, կամ կտակարարի վրա անազնիվ ազդեցության արդյունքում, ապա կտակը ճանաչվում է անվավեր:

Կտակն իրականացվում է, որպես կանոն, կտակով սահմանված ժառանգի կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այն իրականացվում է կտակակատարի կողմից: Ժառանգության մասին օրենքի 81-րդ հոդվածի (30.06.1998թ. փոփոխություն) և 82-րդ հոդվածի, 83-րդ հոդվածի, 91-րդ հոդվածի (30.06.1998թ. փոփոխություն) և 103-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է հանձնարարել կտակի կատարումը իր կողմից կտակում նշված անձին՝ կտակակատարին, անկախ այն հանգամանքից, թե այդ անձը ժա-

ռանգ է հանդիսանում, թե՛ ոչ: Այդ դեպքում դատարանը կամ ժառանգության հարցերով ռեզիստրատորը կտակարարի մահից հետո պետք է ձևականորեն նշանակեն այդ անձին կտակակատարի պաշտոնում, բացի այն դեպքերի, երբ այդ անձը չի կարող կամ համաձայն չէ ընդունելու կտակակատարի պաշտոնը, կամ երբ դատարանը կամ ժառանգության հարցերով ռեզիստրատորը համոզված են, որ կան ծանրակշիռ հիմքեր (այդ մասին շարադրելով գրավոր)՝ չնշանակելու այդ անձին կտակակատարի պաշտոնում, այդպիսով՝ չկատարելով կտակարարի կամարտահայտությունը:

Կտակն իրականացնելու, այսինքն՝ կտակով նախատեսված ժառանգությունն ընդունելու համար, պետք է կատարել մի շարք բավականին բյուրոկրատական ընթացակարգային գործողություններ: Ժառանգության մասին օրենքի 39-րդ, 66-րդ հոդվածների (30.06.1998թ. փոփոխություն, 67 (ալեֆ) (30.06.1998թ. փոփոխություն), 68-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, 75-րդ հոդվածների (07.08.1995թ. և 30.06.1998թ. փոփոխություններ), 76-րդ հոդվածի (30.06.1998թ. փոփոխություն) համաձայն՝ անհրաժեշտ է ստանալ ըստ կտակի ժառանգության վկայագիր, առանց որի կտակի իրականացումն անհնարին է: Այդ վկայագիրը տալու իրավունք ունի ժառանգության հարցերով ռեզիստրատորը: Սակայն, որոշակի հանգամանքների դեպքում, օրինակ, երբ քննվում է բանավոր կտակը կամ հայտնաբերվել են կտակը կազմելու, ստորագրելու կամ հաստատելու կարգի խախտումներ, ժառանգության հարցերով ռեզիստրատորը պարտավոր է վկայագիր տրամադրելու մասին դիմումը փոխանցել դատարանի քննությանը, որտեղ և կքննվի այդ դիմումը⁴⁷:

Օրենքով պահանջվում է, որ այն անձը, ում մոտ գտնվում է կտակը, պետք է այն անհապաղ փոխանցի ժառանգության հարցերով ռեզիստրատորին այն բանից հետո, երբ այդ անձին հայտնի է դառնում կտակարարի մահվան մասին: Նա իրավունք ունի փոխանցել կտակի բնօրինակը կամ դրա վավերացված պատճենը: Անձը, ով չի կատարում այդ պահանջը, ենթակա է քրեական պատասխանատվություն և պատժվում է ազատազրկման ձևով՝ մինչև

⁴⁷<http://www.jl-lawfirm.com/files/pdfs/laws/Israeli-Succession-Law-En.pdf>

երեք ամիս ժամկետով կամ տուգանքով: Ըստ կտակի ժառանգության վկայագիրն ունի իրավաբանական ուժ այնքան ժամանակ, քանի դեռ այն չի փոփոխվել կամ վերացվել դրանում շահագրգռված անձանցից մեկի խնդրանքով, և, բնականաբար, այդ խնդրանքի համար պետք է լինեն ծանրակշիռ պատճառներ:

Եթե կտակը կամ բանավոր կտակի արձանագրությունը փոխանցվել է ժառանգության հարցերով ռեզիստրատորին կամ գտնվել է նրա մոտ պահպանման համար, և կտակարարի մահից հետո երեք ամսվա ընթացքում կամ կտակը ռեզիստրատորին փոխանցելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում ըստ կտակի ժառանգության վկայագիր ստանալու համար դիմում չի ներկայացվել, ռեզիստրատորը պարտավոր է անձամբ տեղեկացնել ժառանգներին այն մասին, որ նրանք հանդիսանում են ժառանգ: Այդ հաղորդագրությունը պետք է հրապարակվի պետական պաշտոնական տեղեկագրերում:

Այդ օրենքի 7-րդ գլխում քննարկվում են միջազգային մասնավոր իրավունքի նորմերի կարգավորմանն առնչվող որոշ հարցեր: Օրինակ, 136-րդ հոդվածը. իսրայելական դատարանը իրավասու է քննել ժառանգության մասին այն գործերը, որոնց դեպքում ժառանգատուի բնակության վայրը նրա մահվան պահին հանդիսացել է Իսրայելը, կամ եթե ժառանգատուի գույքը գտնվում է Իսրայելում: Իսկ եթե ժառանգվող գույքը փոխանցվում է բացառապես նրա գտնվելու վայրի օրենքին համապատասխան, ապա այդ գույքը ժառանգելու վերաբերյալ գործում է գույքի գտնվելու վայրի օրենքը:

Ժառանգության մասին օրենքի 140-րդ հոդվածի (11.06.1976թ. փոփոխություն) համաձայն՝ կտակը (կտակի ձևը) վավերական է, եթե այն համապատասխանում է Իսրայելի օրենքին, կտակը կազմելու վայրի օրենքին, վայրի «կտակարարի բնակության վայրի» օրենքին կամ կտակարարի սովորական բնակության վայրի օրենքին կամ այն պետության օրենքին, որի քաղաքացին է հանդիսանում կտակարարը կտակը կազմելու պահին կամ մահվան պահին, իսկ այն դեպքում, երբ կտակը վերաբերում է անշարժ գույքին, նաև՝ գույքը գտնվելու վայրի օրենքին:

Օտարերկրյա օրենսդրության դրույթները, որոնք ենթակա են կիրառման սույն հոդվածին համապատասխան, անձի՝ կտակ անելու իրավունակության կամ կտակ կազմելիս վկա հանդես գալու վերաբերյալ, վերաբերում են կտակի ձևին: Բոլոր հարցերը, որոնք վերաբերում են ենթադատության և իրավունքի սահմանմանը և կիրառվում են սույն Օրենքի 136-140-րդ հոդվածների նորմերին համապատասխան, իրավաբանական հասկացությունների մեկնաբանությունը կիրականացվի Իսրայելի օրենսդրությանը համապատասխան: Չնայած սույն Օրենքի հրահանգներին, այն դեպքում, երբ կիրառվում է օտարերկրյա պետության իրավունքը, և այդ պետության օրենքով հղում է արվում այլ պետության օրենքին, Իսրայելի դատարանը չի ղեկավարվում այդ հղումով և կիրառում է այդ երկրի ներքին օրենքը: Այն դեպքում, երբ օտարերկրյա պետության իրավունքը հղում է անում իսրայելական իրավունքի նորմերին, ղեկավարվում է այդ հղումով, կիրառվում է Իսրայելի օրենքը (42-րդ հոդվածը): Չնայած օտարերկրյա պետության իրավունքի գործողության վերաբերյալ սույն Օրենքի հրահանգներին, այն չի կիրառվում այն դեպքերում, երբ նրա նորմերը ունեն խտրական բնույթ՝ ռասայի, կրոնի, սեռի կամ ազգության հատկանիշներով կամ հակասում են Իսրայելի հանրային նորմերին (143-րդ հոդված, 30.06.1998թ. փոփոխություն): Օրենքի 144-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա իրավունքի նորմերը չեն կիրառվում այն դեպքերում, երբ ըստ այդ նորմերի ժառանգի իրավունք է ձեռք բերում այն անձը, ով ժառանգատուի հետ կապված չէ արյունակցական կապով կամ ամուսնությամբ, կամ որդեգրմանն առնչվող կապով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ օտարերկրյա իրավունքով ճանաչվում է Իսրայելի օրենքին համապատասխան ըստ օրենքի ժառանգությունը: Անցումային շրջանում կազմված կտակի վերաբերյալ սահմանված է հետևյալը. Ժառանգության մասին օրենքի 157-րդ հոդվածի համաձայն՝ եթե անձը մահացել է մինչև սույն Օրենքը գործողության մեջ մտնելը, ապա նրա ժառանգության վերաբերյալ գործում են մինչև սույն Օրենքը գործողության մեջ մտնելը գործող իրավունքի նորմերը: Իսկ սույն Օրենքի գործողու-

թյունը նախորդ կտակների վերաբերյալ վավերական է հետևյալ դեպքերում.

ա) եթե կտակը կազմվել է մինչև սույն օրենքը գործողության մեջ մտնելը, իսկ կտակարարը մահացել է սույն Օրենքը գործողության մեջ մտնելուց հետո:

1. Կտակը համարվում է վավերական այն դեպքում, երբ այն ձևով և բովանդակությամբ համապատասխանում է մինչև սույն Օրենքը գործողության մեջ մտնելը կիրառվող օրենսդրության նորմերին, կամ վավերական է՝ սույն Օրենքի նորմերին համապատասխան:

2. Կտակը չի ճանաչվում անվավեր այն թերությունների հետևանքով, որոնք առկա են սույն Օրենքում որպես հիմք կտակն անվավեր ճանաչելու համար.

բ) Անձը, ով կազմել է կտակը մինչև սույն Օրենքը գործողության մեջ մտնելը, իրավունք ունի փոփոխել այդ կտակը սույն Օրենքը գործողության մեջ մտնելուց հետո դրա նորմերին համապատասխան (159-րդ հոդված)⁴⁸: Իսկ ժառանգության հարցերով դատավարությունները, որոնք սկսվել են մինչև սույն Օրենքը ուժի մեջ մտնելը, կշարունակվեն՝ անկախ սույն Օրենքի ընդունումից: Իսրայելում անշարժ գույքը ժառանգելը սահմանափակված չէ ժամանակով: Չնայած Իսրայելում ժառանգելու ժամկետը անսահմանափակ է, եթե չկան ժառանգների կողմից ներկայացված դիմումներ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, անշարժ գույքը անցնում է պետությանը:

2.2. Ժառանգումը ըստ կրակի Պորտուգալիայում

Պորտուգալիայի Հանրապետությունում ժառանգման հետ կապված իրավահարաբերությունները հիմնականում կարգավորվում են Պորտուգալիայի Հանրապետության քաղաքացիական օ-

⁴⁸ Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003, стр.537

րենսգրքով: Ժառանգման հետ կապված նորմերը հիմնականում ամրագրված են քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գրքում (2024-ից 2334 հոդվածներ) և 1-ին գրքում (62-ից 65 հոդվածներ)⁴⁹:

Բացի դրանից, Պորտուգալիայի Հանրապետությունում միացել է «Կտակների գրանցման համակարգ ստեղծելու մասին» Բազելի 1972թ. կոնվենցիային (Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills)⁵⁰ և «Միջազգային կտակի ձևի նկատմամբ կիրառվող միասնական օրենքի մասին» Վաշինգտոնի 1973թ. կոնվենցիային (Convention Providing a Uniform Law on the Form of an International Will)⁵¹:

1. Պորտուգալիայի Հանրապետության միջազգային կոնվենցիաներով պարտավորվածությունները.

Բազելի կոնվենցիայից բխող պարտավորությունները.

Բազելի կոնվենցիայի անդամ պետությունների քաղաքացիները կոնվենցիայի անդամ մյուս պետություններում պետք է ունենան անարգել կտակներ կազմելու հնարավորություն: Բազելի կոնվենցիայի անդամ ցանկացած երկրի քաղաքացու մահվան դեպքում նրա կողմից կոնվենցիայի անդամ այլ երկրում թողնված կտակի հայտնաբերումը պետք է երաշխավորված լինի:

Վերը նշված նպատակներին հասնելու համար կոնվենցիայի անդամ բոլոր պետությունները պետք է ստեղծեն համապատասխան պետական մարմիններ (կամ արդեն իսկ գոյություն ունեցող պետական մարմիններին պետք է օժտեն համապատասխան լիազորություններով), որտեղ կոնվենցիայի անդամ մյուս պետությունների քաղաքացիները կկարողանան գրանցել իրենց կտակները:

⁴⁹ <http://www.globalpropertyguide.com/Europe/Portugal/Inheritance>

⁵⁰ Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills - Chart of signatures and ratifications, <http://conventions.coe.int/Treaty/Commun/ChercheSig.asp?NT=077&CM=1&DF=&CL=ENG>:

⁵¹ Status of the Convention Providing a Uniform Law on the Form of an International Will - signatures, ratifications, <http://www.unidroit.org/status-successions>:

Այդ պետական մարմինները պարտավոր են համագործակցել միմյանց հետ և անհրաժեշտության դեպքում միմյանց տրամադրել տեղեկատվություն:

Բազելի կոնվենցիային միանալով՝ Պորտուգալիայի Հանրապետությունը պարտավորվել է՝

1) Բազելի կոնվենցիայի անդամ մյուս երկրների հետ համատեղ աշխատանքներ կատարել կտակների գրանցման միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ՝ միջազգային մակարդակի վրա ապահովելով կտակների փոխադարձ հայտնաբերումը,

2) ստեղծել համապատասխան պետական մարմին(ներ)՝ Բազելի կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարման (մասնավորապես՝ օտարերկրյա քաղաքացիների թողած կտակների գրանցման և հայտնաբերման), ինչպես նաև՝ միջազգային համագործակցության ապահովման նպատակով⁵²:

Ներկայումս Բազելի կոնվենցիայից բխող պարտավորվածությունների կատարումը ՊՀ-ում ապահովվում է Conservatgria dos Registos Centrais կոչվող մարմնի կողմից: Թողնված կտակների վերաբերյալ ինֆորմացիան առկա է՝ սկսած 1982թ. հուլիսի 21-ից⁵³:

Վաշինգտոնի կոնվենցիայից բխող պարտավորությունները.

Վաշինգտոնի կոնվենցիայի նպատակն է՝ ապահովել կոնվենցիայի մասնակից երկրների քաղաքացիների կողմից կազմված կտակների վավերականությունը կոնվենցիայի անդամ մյուս պետություններում:

Վաշինգտոնի կոնվենցիան իր անդամ պետություններից պահանջում է միասնականացնել միջազգային կտակների վավերականությանը վերաբերող իրենց օրենսդրությունը:

Վաշինգտոնի կոնվենցիային միանալով՝ Պորտուգալիայի Հանրապետությունը պարտավորվել է 6 ամսվա ընթացքում իր ազ-

⁵² Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills, Basle, 16.V.1972, <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/077.htm>:

⁵³ Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills - List of declarations, reservations and other communications, <http://conventions.coe.int/Treaty/Commun/ListeDeclarations.asp?NT=077&CM=1&DF=&CL=ENG&VL=1>:

գային օրենսդրություն ներմուծել միջազգային կտակի վավերականությանը վերաբերող հետևյալ կոնվենցիոն կանոնները.

1) անկախ կտակի կազմման վայրից, ժառանգության զանգվածի գտնվելու վայրից, կտակ կազմողի ազգությունից և/կամ քաղաքացիությունից՝ կտակը ձևին ներկայացվող պահանջների առումով պետք է վավեր լինի, եթե այն կազմվել է Վաշինգտոնի կոնվենցիայում սահմանված միջազգային կտակի կազմման կանոններից համապատասխան,

2) ընդ որում, եթե կտակը չի համապատասխանում միջազգային կտակին ներկայացվող պահանջներին և որպես միջազգային կտակ անվավեր է, ապա դա որևէ կերպ չի ազդում կտակի վավերականության վրա՝ որպես հասարակ (ոչ միջազգային) կտակ,

3) միջազգային կտակը պետք է կազմվի գրավոր, ընդ որում՝ այն կարող է կազմվել ցանկացած լեզվով,

4) կտակ կազմող անձը երկու վկաների և միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձի ներկայությամբ պետք է հայտարարի, որ կտակում արտահայտված է իր կամքը, և որ ինքը տեղյակ է դրա բովանդակության մասին,

5) կտակ կազմող անձը պարտավոր չէ որևէ մեկին տեղյակ պահել կտակի պարունակության (բովանդակության) մասին,

6) միջազգային կտակը պետք է ստորագրվի վերը երկու վկաների և միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձի ներկայությամբ, իսկ եթե կտակն արդեն ստորագրված է, ապա կտակ կազմող անձը նշված անձանց ներկայությամբ պետք է հաստատի իր ստորագրությունը,

7) երկու վկաները և միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձը պետք է կտակ կազմող անձի ներկայությամբ ստորագրեն կտակը՝ վավերացնելով այն,

8) միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձը պետք է միջազգային կտակին կցի սերտիֆիկատ, որի ձևը սահմանված է Վաշինգտոնի կոնվենցիայի հավելվածով: Սերտիֆիկատի մեկ օրինակը պահվում է իրավասու

պաշտոնատար անձի մոտ, մյուսը տրվում է կտակ կազմող անձին: Սերտիֆիկատը հավաստում է, որ կտակը վավեր է որպես միջազգային կտակ⁵⁴:

Համաձայն Պարտուգալիայի Հանրապետության օրենսդրությանը ժառանգման գործընթացը որպես կանոն կարգավորվում է ժառանգատուի քաղաքացիության երկրի օրենսդրությամբ, ինչը թույլ է տալիս խուսափել հնարավոր օրենսդրական հակասություններից:

Պորտուգալական օրենսդրությունն այս կանոնից շեղման հնարավորություն չի նախատեսում, հետևաբար, անձը չի կարող իր ցանկությամբ ընտրել այլ օրենսդրություն, որն իր մահվան դեպքում կիրառելի կլինի իր թողած ժառանգության նկատմամբ:

Եթե մահացած անձն ունի Պորտուգալիայի քաղաքացիություն, ապա նրա գույքի ժառանգման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կկիրառվի պորտուգալական օրենսդրությունը, եթե անձն այլ երկրի քաղաքացի է, ապա անհրաժեշտ կլինի պարզել, թե որն է կիրառման ենթակա օրենսսրությունը՝ համաձայն վերջինիս քաղաքացիության երկրի օրենքի⁵⁵:

Եթե ամուսինները տարբեր երկրների քաղաքացիություն ունեն, ապա կիրառվում է այն պետության օրենսդրությունը, որտեղ նրանք որպես կանոն մշտապես բնակվում են: Մշտական բնակության երկրի բացակայության դեպքում Պորտուգալիայի օրենսդրությունը նախատեսում է, որ կիրառելի է այն երկրի օրենքը, որում ամուսիններն ունեն ավելի սերտ ընտանեկան կապեր:

Որոշակի իրավիճակներում ժառանգման գործընթացի նկատմամբ կարող է կիրառվել գույքի գտնվելու վայրի օրենքը: Օրինակ, եթե ժառանգատուն անշարժ գույք ունի Պորտուգալիայում, և նրա քաղաքացիության երկրի օրենսդրությունը սահմանում է, որ ժառանգության նկատմամբ կիրառելի է անշարժ գույքի գտնվելու

⁵⁴ Convention Providing a Uniform Law on the Form of an International Will (Washington, D.C., 1973), <http://www.unidroit.org/instruments/succession>:

⁵⁵ http://www.successions-europe.eu/en/portugal/topics/which-law-applies_can-i-choose-the-applicable-law-to-my-inheritance:

վայրի օրենսդրությունը, ապա այդպիսի իրավիճակների նկատմամբ կիրառելի կլինի Պորտուգալիայի ժառանգման իրավունքը:

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների ժառանգման հետ կապված բոլոր հարցերը, ներառյալ Պորտուգալիայում գտնվող, ինչպես նաև Պորտուգալիայի Հանրապետության տարածքից դուրս, սակայն պորտուգալական օրենքի ներգործության շրջանակներում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ վեճերը ենթակա են լուծման Պորտուգալիայի քաղաքացիական դատարանների կողմից:

Ժառանգության հետ կապված վեճերի լուծումը դատարաններում սովորաբար տևում է 1-ից 2 տարի՝ կախված ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքի արժեքից և բազմազանությունից, ժառանգների քանակից և նրանց վարքագծից: Եթե վեճերը բազմաթիվ և շարունակական են, ապա դատարանի որոշման կայացման գործընթացը կարող է տևել ավելի երկար⁵⁶:

2. Ժառանգումն ըստ օրենքի.

Ժառանգությունը բացվում է հանգուցյալի մահվան փաստի ուժով: Ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը ժառանգին փոխանցվում է այն դեպքում, եթե վերջինս համաձայն է ընդունել ժառանգությունը: Այդ համաձայնությունը կարող է դրսևվորվել լռությամբ կամ համապատասխան ժամանակահատվածում ժառանգությունից չիրաժարվելու փաստի ուժով: Ժառանգության ընդունման համար սահմանված առավելագույն ժամկետը 10 տարի է՝ սկսած այն պահից, երբ ժառանգին հայտնի է դարձել հանգուցյալի մահվան և իր՝ ժառանգ հանդիսանալու փաստի մասին:

Որպես կանոն, ժառանգը պատասխանատու է նաև հանգուցյալի պարտքերի համար: Այնուամենայնիվ, ժառանգները ժառանգատուի թողած պարտքերի մասով կարող են սահմանափակել իրենց պատասխանատվությունը՝ ընդունելով ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքի այն մասը, որը պարտքերով ծանրաբեռնված չէ: Այս դեպքում ժառանգը պետք է ստորագրի համապատասխան դեկլարացիա:

⁵⁶ <http://www.globalpropertyguide.com/Europe/Portugal/Inheritance>:

Համատեղ ժառանգած անձինք հանգուցյալի պարտքերի համար պատասխանատվություն են կրում՝ ըստ վերջիններիս բաժին հասած ժառանգական գույքի համամասնության⁵⁷:

Կտակի բացակայության դեպքում գործում են հետևյալ սկզբունքները.

- եթե ժառանգատուն չունի ամուսին և երեխաներ, ապա ըստ օրենքի ժառանգներ են համարվում նրա ծնողները,

- եթե ժառանգատուն չունի ամուսին, սակայն ունի երեխաներ, ապա երեխաները ժառանգում են հավասար չափերով,

- եթե ժառանգատուն ունի ամուսին, ապա նա հանդիսանում է միակ ըստ օրենքի ժառանգը (երեխաների և ծնողների (նախնիների) բացակայության դեպքում),

- եթե ժառանգատուն ունի ամուսին և երեխաներ, ապա նրանք ժառանգում են համատեղ. մեկ երեխայի առկայության դեպքում ամուսինը ժառանգում է ամբողջ ժառանգական գույքի կեսը, իսկ երեխան՝ մյուս կեսը: Մի քանի երեխաների առկայության դեպքում ժառանգական գույքը հավասար բաժանվում է ամուսնու և երեխաների միջև, սակայն ամուսնու բաժինը չի կարող լինել գույքի 25 տոկոսից պակաս⁵⁸:

Օրենքով սահմանված կարգով չգրանցված (փաստացի) ամուսնության դեպքում փաստացի ամուսինը չի համարվում ըստ օրենքի ժառանգ, սակայն կարող է ժառանգել կտակի միջոցով:

Պորտուգալիայի օրենսդրության համաձայն՝ մահացած անձի (ժառանգատուի) ամուսինը, ծնողները (նախնիները) և զավակներն ունեն ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝ ժառանգական գույքի այն մասի նկատմամբ, որը չի կարող ազատորեն տնօրինվել ժառանգատուի կողմից⁵⁹:

⁵⁷ <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/how-and-when-do-you-become-an-heir>:

⁵⁸ http://www.successions-europe.eu/en/portugal/topics/in-the-absence-of-a-will_who-inherits-and-how-much

⁵⁹ <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/restrictions-on-the-freedom-to-dispose-of-ones-succession-by-will>:

Ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա մասը, որպես կանոն, կազմում է ժառանգության զանգվածի մեջ մտնող ամբողջ գույքի առնվազն 50%-ը, սակայն այն կարող է նաև գերազանցել 50%-ը, ինչը երևում է ստորև բերված աղյուսակից:

Ժառանգության բացման պահին առկա ըստ օրենքի ժառանգներ	Ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա մաս
1. ամուսին	1. 50%
2. ամուսին և երեխաներ	2. 60%, սովորաբար բաշխվում է ըստ շնչի Եթե մահացածն ունի ավելի քան 3 երեխա, ապա ամուսինը իրավասու է ժառանգել ժառանգական գույքի 1/6-րդ մասը, իսկ ժառանգական գույքի 50%-ը բաժանվում է զավակների միջև:
3. միայն երեխաներ	3. Մեկ երեխայի դեպքում՝ 50%, իսկ մեկից ավելի երեխաների դեպքում՝ 60%:
4. ամուսին և ծնողներ (նախնիներ)	4. 60%, բաժանվում է ըստ շնչի
5. միայն ծնողներ (նախնիներ)	5. 50%՝ ծնողների, 1/3-րդ մասը՝ այլ նախնիների դեպքում 60

Ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա մասը ժառանգատուի մահվան դեպքում պետք է բաշխվի օրենքով սահմանված կարգով՝ անկախ կտակի պայմաններից կամ հանգուցյալի կամքից:

Կտակի բացակայության դեպքում, եթե հանգուցյալը չունի ամուսին, զավակներ կամ ծնողներ (նախնիներ), ժառանգական

⁶⁰ <http://www.globalpropertyguide.com/Europe/Portugal/Inheritance>:

զանգվածի մեջ մտնող գույքն անցնում է հանգուցյալի քույրերին և եղբայրներին, նրանց զավակներին, ընտանիքի այլ անդամներին՝ մինչև արյունակցական կապի 4-րդ աստիճանը: Վերջիններիս բացակայության դեպքում ժառանգական գույքն անցնում է պետությանը: Ժառանգների յուրաքանչյուր հերթը կարող է ժառանգել, նախորդող միայն հերթի ժառանգների բացակայության դեպքում:

Ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի՝ սնօրինման ոչ ենթակա մասից դուրս, կտակի ազատությունը որևէ կերպ չի սահմանափակվում, սակայն որոշ անձինք չեն կարող ժառանգներ լինել. օրինակ՝ նրանք ովքեր ճանաչվում են անարժան ժառանգներ, հանգուցյալին բուժող վերջին բժիշկը, այն եկեղեցու քահանան, որտեղ հանգուցյալը հաճախել է և այլն:

3. Ժառանգումն ըստ կտակի.

Կտակները որպես կանոն կազմվում են այն դեպքում, երբ ժառանգատուն ցանկանում է իր մահից հետո իր գույքը փոխանցել այնպիսի անձի, ով օրենքի ուժով ժառանգ չի հանդիսանում և կտակի բացակայության պայմաններում ժառանգելու իրավունք չունի:

Ժառանգատուն իրավունք ունի կտակ կազմելու միջոցով ժառանգությունից զրկել այն անձանց, ովքեր ժառանգության զանգվածից պարտադիր բաժին ստանալու իրավունք ունեն: Նման քայլը պետք է պայմանավորված լինի ժառանգի անարժան վարքագծով: Այդպիսի կտակը հետագայում կարող է շահագրգիռ անձանց (ժառանգությունից զրկված ժառանգների) կողմից վիճարկվել դատական կարգով:

Պորտուգալիայում կտակները դասակարգվում են հետևյալ տեսակների.

- հրապարակային կտակ, որը կազմվում է նոտարի միջոցով և պահպանվում է վերջինիս գրասենյակում (պահոցում),

- փակ կտակ, որը արվում է մասնավոր կարգով, ստորագրվում է կտակարարի կողմից և հանձնվում է նոտարի վերանայմանը (քննարկմանը),

- միջազգային կտակ՝ կազմված Վաշինգտոնի կոնվենցիային համապատասխան,

- բացառիկ իրավիճակներում կազմված արտոնյալ կտակներ:

Կտակը վավեր է, եթե այն համապատասխանում է այն երկրի օրենքներին, որտեղ կազմվել է: Կտակների վերաբերյալ ինֆորմացիան կենտրոնացվում է Արդարադատության նախարարությանը կից գործող կտակների կենտրոնական ռեգիստրում (Conservatgria dos Registos Centrais): Նոտարները պարտավոր են յուրաքանչյուր կտակի մասին տեղեկատվական թերթիկ ուղարկել այս մարմին⁶¹:

Օտարերկրացիների համար Պորտուգալիայում առանձին կտակ կազմելու անհրաժեշտություն որպես կանոն չկա, քանի որ Պորտուգալիայի օրենսդրությունը նախատեսում է, որ ժառանգման հարաբերությունների հետ կապված հարցերը կարգավորվում են ժառանգատուի քաղաքացիության երկրի օրենսդրությամբ: Ժառանգատուի քաղաքացիության երկրում կազմված կտակն ընդհանուր առմամբ որպես կանոն բավարար է:

Այնուամենայնիվ, Պորտուգալիայի Հանրապետության դատարաններում ժառանգության հետ կապված վեճ քննվելիս խնդիրներ կարող են առաջանալ այն դեպքում, երբ հանգուցյալի կողմից իր քաղաքացիության երկրում թողած կտակը բավարար չափով պարզ և հասկանալի չէ: Նման դեպքերում Պորտուգալիայի դատարանները կիրառում են ըստ օրենքի ժառանգության կանոնները, անգամ եթե դա հակասում է ժառանգատուի կամքին: Հաշվի առնելով ասվածը, խիստ ցանկալի է, որպեսզի կտակը ձևակերպված լինի պարզ և հստակ՝ դատավորի մոտ այդ կապակցությամբ կասկածներ առաջանալուց խուսափելու նպատակով:

Անշարժ գույքը դրա սեփականատիրոջ կողմից կարող է օտարվել նախքան իր մահը կատարված նվիրատվության միջոցով: Նման նվիրատվությունը թույլատրելի է՝ համապատասխան հարկերը վճարելու և սեփականատիրոջ կողմից իր ժառանգության

⁶¹ <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/how-is-a-will-drawn-up-and-can-i-register-it>:

զանգվածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա մասը հաշվարկելու և պահպանելու պայմանով:

4. Ժառանգումն անչափահասների կողմից.

Փոքրահասակների կամ չափահասության տարիքի չհասած այլ անձանց կողմից ժառանգված գույքը կարող է որպես սեփականություն գրանցվել վերջիններիս անունով, սակայն փոքրահասակները/անչափահասները իրավունք չունեն ինքնուրույն տնօրինել և կառավարել իրենց ունեցվածքը՝ մինչև չափահասության տարիքը լրանալը: Նման անձանց նկատմամբ պետք է նշանակվի խնամակալ (guardian):

Խնամակալ կարող է նշանակվել փոքրահասակի ընտանիքի անդամներից որևէ մեկը, պայմանով, որ նա ի վիճակի է կատարել խնամակալի համապատասխան պարտականությունները: Եթե փոքրահասակի ընտանիքի անդամներից (կամ արյունակից հարազատներից) որևէ մեկը չի կարող հանդես գալ որպես փոքրահասակի խնամակալ, ապա դատարանի կողմից կարող է խնամակալ նշանակվել անկախ անձ, որը կստանձնի պարտավորությունների կատարումը:

5. Ժառանգության հարկումը.

Ընդհանուր առմամբ, Պորտուգալիայի Հանրապետությունում նվիրատվության և ժառանգման հետ կապված հարկեր գոյություն չունեն: Ժառանգության վրա տարածվող հարկը Պորտուգալիայում վերացվել է 2003 թ. նոյեմբերին (Օրենք NԵ 287/2003, 12.11.2003): Սակայն ակտիվները, որոնք ձեռք են բերվում ժառանգության միջոցով ենթակա են հարկման «selo» կոչվող հարկատեսակով, բացառությամբ այն դեպքերի, երբ ժառանգական գույքը ժառանգվում է հանգուցյալի ամուսնու, զավակների կամ ծնողների կողմից⁶²:

Պորտուգալիայում գործում է Stamp Tax կոչվող հարկատեսակն, որը զանձվում է գույքի անհատույց փոխանցման դեպքում (բացառությամբ այն անհատույց փոխանցումների, որոնք կատար-

⁶² <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/what-is-the-amount-of-succession-rights>:

վում են ամուսինների, զավակների և ծնողների (նախնիների) միջև): Stamp Tax կոչվող հարկատեսակը զանձվում է անհատույց փոխանցվող գույքի արժեքի 10%-ի չափով⁶³:

Իրավասու մարմիններ.

Այն դեպքում, երբ ժառանգման հարաբերությունները վիճելի են, ժառանգության հետ կապված հարցերով իրավասու մարմիններ են հանդիսանում դատարանները: Յուրաքանչյուր տարածաշրջանում բացված ժառանգությունից բխող վեճերը ենթակա են այդ տարածաշրջանի դատարանին:

Անվիճելի ժառանգման իրավահարաբերությունների դեպքում իրավասու մարմիններ են հանդիսանում նոտարները և «քաղաքացիական ռեգիստր» (Registo civil) կոչվող մարմինները: 2010թ. հունվարի 18-ից սկսած՝ նոտարները և «քաղաքացիական ռեգիստր» կոչվող մարմիններն օրենքի ուժով (Law 29/2009, of 29/6) իրավասու են ժառանգության հետ կապված բոլոր հարցերով⁶⁴: Նոտարները, ինչպես նաև «քաղաքացիական ռեգիստր» կոչվող մարմինները իրավասու են տալ ժառանգության իրավունքի վկայագրեր:

Եթե ժառանգությունը բացվել է արտասահմանում, ապա անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. եթե հանգուցյալն իր մահվանից հետո Պորտուգալիայում թողել է անշարժ գույք, ապա իրավասու դատարան է համարվում անշարժ գույքի կամ դրա մեծամասնության գտնվելու վայրի շրջանային դատարանը, իսկ եթե հանգուցյալը Պորտուգալիայում չի թողել անշարժ գույք, սակայն թողել է շարժական գույք, ապա իրավասու դատարան է համարվում վերջինիս շարժական գույքի մեծամասնության գտնվելու վայրի շրջանային դատարանը, եթե հանգուցյալն իր մահվանից հետո որևէ գույք չի թողել Պորտուգալիայում, ապա իրավասու դատարան է համարվում վերջինիս բնակության երկրի դատարանը:

⁶³ <http://www.globalpropertyguide.com/Europe/Portugal/Inheritance>:

⁶⁴ <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/which-is-the-competent-authority-who-should-i-contact>:

2.3. Ժառանգումը ըստ կրակի Հնդկաստանում

Սույն գլխում կվորձենք վեր հանել Հնդկաստանում գտնվող հայերի կտակների իրավական ասպեկտները՝ սահմանված միջազգային իրավունքով, միջազգային մասնավոր իրավունքով և միջազգային պայմանագրերով:

Կտակը հանդիսանում է կարևորագույն գործիք, որի միջոցով կտակարարը կարող է թողել իր կարողությունը համաձայն իր ցանկության: Հիմնդրների կտակի ծագման և աճի մասին շատ քիչ է հայտնի: Սակայն նրանք առաջնորդվել են մահմեդականների կտակի մասին օրենքներով, որտեղ արդեն իսկ իրավահաջորդության օրենքը լայն տարածում ուներ, հետագայում արդեն ուղղորդվել են եվրոպական երկրների կտակի մասին օրենքով: 1925⁶⁵ թվականի Հնդկաստանի կտակային իրավահաջորդության մասին օրենքը լրացնում է նախկինում ավելի վաղ գործող օրենքին, որը այժմ կիրառելի է:

Կտակը կազմվում է սեփականատիրոջ կենդանության օրոք, որով կտակարարի կազմած կտակի համաձայն իր ողջ կարողությունը կտակում է իր ցանկությամբ: 1925թ Հնդկաստանի կտակային իրավահաջորդության մասին Ակտը⁶⁶ նախատեսում է, որ ժառանգման իրավունքում ձևավորված բնորոշման համաձայն, կտակը իր գույքի վերաբերյալ քաղաքացու անձնական կարգադրությունն է, իր մահվանից հետո, որով նշանակվում են ժառանգներ, կատարվում օրենքով հաստատված կարգով և հաստատվում օրենքում նշված պաշտոնատար անձանց կողմից: Կտակը հանդիսանում է միակողմանի գործարք և այլ անձի համաձայնությունը բոլորովին պարտադիր չէ: Դրա վավերությունը բոլորովին կախված չէ բովանդակության հետ ժառանգի (ան)համաձայնությունից: Էական չէ նաև այն հանգամանքը արդյոք ժառանգը տեղյակ է կտակի, դրա բովանդակության մասին: Պաշտոնատար անձիք, ովքեր զբաղվում են կտակի վավերացման հարցով պարտավոր են ա-

⁶⁵ The Indian Succession Act, 1925

⁶⁶ The Indian Succession Act, 1925, No. 39 OF 1925 I [30th September, 1925.]

պահովել դրա գաղտնիությունը: Կտակում արտահայտվում է միայն կտակարարի կամքը:

Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականատիրոջ իրավունքերի պաշտպանությունը նաև նրա մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավագործությունների հաջորդայնությունը: Միևյուր ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրոքն պաշտպանված հնարավորություն: Միջազգային իրավունքի իրավահաջորդության նորմերի ամբողջականությունը կարգավորվում է իրավահաջորդության հարաբերությունները՝ կապված երկու կամ ավել երկրների օրենքի գերակացությունից: Նման հարաբերությունները մտնում են միջազգային մասնավոր իրավունքի գործողությունների բնագավառի մեջ: Իրավահաջորդության հարաբերությունները քաղաքացիության շրջանակի ավելի պահպանողական ոլորտ է: Դրանք սերտորեն կապված են հասարակության բարոյական գաղափարների՝ ընտանեկան արժեքների և ազգային ավանդույթների ընկալման հետ: Շատ երկրների (այդ թվում նաև Հնդկաստանի) ժառանգության ընդհանուր օրենքում տեղ չի գտել իրավահաջորդության և կտակի ակտիվների տնօրինումը: Այն իրականացվում է հատուկ ընթացակարգով և գտնվում է դատարանի վերահսկողության տակ:

Ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի: Ժառանգությունը իրականացվում է օրենքով, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը:

Կտակը իր մեջ պարունակում է միայն մեկ անձի կարգադրություններ: Արգելվում է երկու և ավելի անձանց կողմից կտակ կազմելը: Կտակը հանդիսանում է միակողմանի գործարք, որի վավերությունը որոշվում է ժառանգությունը բացվելու պահին: Աղմինիստրացիոն աշխատանքները հետո միայն գույքը կարող է փոխանցվել ժառանգատուներին:

Կոլիզիոն իրավունքի միակ կամ հիմնական կանոնակարգը մի շարք երկրներում հանդիսանում է տվյալ երկրի ժառանգության մասին օրենքը: Ժառանգության օրենքը կարգավորում է ինչպես

ընդհանուր իրավահաջորդության հարցերի լուծումը* այնպես էլ այնպիսի հարցեր, որոնք վերաբերվում են ժառանգության որոշակի հիմքերին՝ հիմնվելով իրավահաջորդության կտակի վրա: Իրավահաջորդության մասին օրենքը սահմանվում է թե որպես ժառանգության ընդհանուր կանոններով, այնպես էլ ժառանգության որոշակի տեսակների՝ հողային գույքի, բանկային ավանդների, բացառիկ իրավունքների և այլ հատուկ կանոններով:

Իրավահաջորդության օրենքը տալիս է համապատասխան կարգավորում մահացած անձի անշարժ և շարժական գույքի վերաբերյալ: Հնդկաստանում մահացած անձի անշարժ գույքի տնօրինումը կատարվում է Հնդկաստանի օրենքով⁶⁷, անկախ այն հանգամանքից թե, որտեղ է եղել նրա բնակության վայրը իր մահվան ժամանակ: Շարժական գույքի ժառանգությունը կարգավորվում է այն երկրի օրենքով, որտեղ նա ունեցել է մշտական բնակություն մինչև մահը, օրինակ անձը ունենալով Հնդկաստանի քաղաքացիություն, սակայն ապրելով Անգլիայում, իր մահից հետո թողնելով անշարժ և շարժական գույք, այդ ամենը կարգավորվում է Հնդկաստանի օրենքով: Եթե մարդը մահանում է թողնելով շարժական գույք Հնդկաստանում, սակայն չունենալով որևէ ապացույց նրա մշտական բնակության վայրի, նրա գույքի իրավահաջորդությունը կատարվում է նույնպես Հնդկաստանի օրենքով:

Միջազգային մասնավոր իրավունքը առանձնանում է իր երեք հիմնական գործոններով՝ կտակարարի անհատական իրավունքով, ժառանգության գույքի և կտակարարի մահվան վայրի գտնվելու օրենքով:

Վաղ ֆեոդալական պետություններում գործում էին հողային տիրույթներ, որոնցով կարելի էր ազատ տիրապետել և տնօրինել այն: Եթե տիրապետողը կամ տնօրինողը մահանում էր և չունեի ժառանգորդներ, ապա այդ տիրույթները վերադարձվում էին սենյո-

* Դրանք կարող են լինել ժառանգարար սեփականության փոխանցման հիմքերը, ժառանգության կառուցվածքը, ժառանգության բացման պայմանները, ժառանգորդները և այլն:

⁶⁷ Subs. by Act 3 of 1951, s. 3 and Sch., for "the States"

րին՝ որպես անժառանգ գույք: Ինչպես նաև պայմանական հողային տիրույթներ, որոնք տրվում էին որոշակի ծառայությունների դիմաց: Այս բոլորը թույլ է տալիս մեզ կարգավորել մասնավորապես օտարերկրյա քաղաքացիների գույքի տնօրինումը (անշարժ թե շարժական) միջազգային մասնավոր իրավունքի դրույթներով: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ համաձայն հնդկաստանի օրենսդրության⁶⁸ քաղաքացու ապրելավայրը հանդիսանում է, այն վայրը, որտեղ նա մշտապես բնակություն է հաստատել:

Համաձայն իրավահաջորդության օրենքի սահմանումով ժառանգություն ասելով հասկանում ենք կտակարարի իրավունքների և գույքի պարտականությունների անցումը այլ մարդկանց (ժառանգներին): Այդպիսի անցումը իրականացվում է համընդհանուր իրավահաջորդության սկզբունքով: Խնդիրները, որոնց կարող ենք բախվել օտարերկրյա տարրով ժառանգության կարգավորման ընթացքում, կապված են մի շարք հանգամանքներից:

Հազգայում հոկտեմբերի 5-ին⁶⁹, 1961 թ. ընդունված ժառանգության ոլորտում միջազգային կոնվենցիաների թվին է պատկանում կոլիզիոն իրավունքի կոնվենցիան, որը վերաբերվում է կտակային կարգադրությունների ձևերին:

Տվյալ կոնվենցիան փաստորեն դիտարկում է կոլիզիոն իրավունքին կապող բոլոր հնարավոր ձևերը, որոնցով կառավարվում է կտակի ձևը: Կապված ստեղծված իրավիճակից սույն կոնվենցիան թույլ է տալիս օգտագործելու այն պետության օրենսդրությունը, որ երկրի քաղաքացին է հանդիսացել տվյալ անձը կտակը կազմելու պահին, կամ/թե որտեղ է եղել նրա հիմնական բնակության վայրը:

1961 թ.⁷⁰ կոնվենցիան նույնպես ընդունում է, որ այն երկրի օրենսդրությունը, որտեղ մշտական գտնվել է նրա կտակի առարկա հանդիսացող անշարժ գույքը, նույնպես կարող է օգտակար լինել ի-

⁶⁸ Constitution of India, December, 2007, <http://lawmin.nic.in/coi/coiason29july08.pdf>

⁶⁹ Convention of 5 October 1961 Abolishing the Requirement of Legalisation for Foreign Public Documents

⁷⁰ The Hague Conference on Private International Law, http://www.hcch.net/index_en.php

քավապահ մարմինների կոմպետենտ ստեղծմանը, չնայած որ կոնվենցիան նաև ենթադրում է օրենքի ընտրության այլ տարբերակներ: Մասնավորապես թույլատրվում է կիրառել այն երկրի օրենսդրությունը, որի հետ տվյալ անձը ունի սերտ կապ: Ենթադրենք ոմն անձ, 5 տարուց ոչ պակաս բնակվում է որևէ պետության տարածքում, միաժամանակ հանդիսանալով մեկ այլ պետության քաղաքացի: Հաագայի 1961թ. կոնվենցիան նման իրավիճակներում թույլ է տալիս կիրառել այլ պետության իրավունքը: Այդ պարագայում հաշվի է առնվում այն, որ տվյալ անձը ունի նախընտրած իրավական համակարգի ընտրության իրավունք:

Հատկանշական է, որ կոլիզիոն նորմերի կիրառումը 1961 թ. կոնվենցիայում, կախված չէ փոխադարձության պահանջներից: Այլ կերպ ասած տվյալ ակտը կիրառվում է անկախ այն հանգամանքից, արդյոք ժառանգները, կտակարարը և այլ շահագրգիռ անձիք հանդիսանում են տվյալ կոնվենցիայի անդամ պետության քաղաքացիներ:

1973 թ. հոկտեմբերի 26-ի Վաշինգթոնի⁷¹ կոնվենցիան վերաբերվում է միասնական օրենքի միջազգային կտակի ձևին: Այս կոնվենցիան ուղղված է ստեղծելու միասնական նյութական և իրավական նորմեր, որոնք կարգավորում են ժառանգության ձևը: Այն պարունակում է անդամ պետությունների համար նախատեսված երկու տիպի պահանջներ: Առաջին հերթին տվյալ պետությունը իր օրենսդրության մեջ ներառում է միջազգային կտակի կազմման կանոններ՝ նախատեսված 1973 թ կոնվենցիայով, կամ էլ այն օգտագործում է տվյալ պետության պաշտոնական լեզվով թարգմանությունից:

1973 թ Վաշինգթոնի կոնվենցիան ընդունում է ի փոփոխումն իրավական փաստաթղթերի, որպեսզի ապահովի կոնվենցիայի Հավելվածի ուժի մեջ մտնելը:

⁷¹ Convention Providing a Uniform Law on the form of an International Will (Washington, D.D., 1973), <http://www.unidroit.org/instruments/succession> (22.12.2014)

Երկրորդը՝ բանակցող պետությունները պարտավոր են ստեղծել լիազորված անձանց հաստատություն, որը կվերաբերվի միջազգային կտակին առընչվող հարցերի:

Համաձայն 1973 թ. Վաշինգթոնի⁷² կոնվենցիայի, կտակը պետք է գրված և ստորագրված լինի կտակարարի կողմից: Կտակարարի պարտականությունն է հայտարարել այն 2 վկաների և վստահված անձի ներկայությամբ: Վստահված անձիք և վկաները պարտադիր չէ իրազեկված լինել կտակի պարունակության մասին: Այն դեպքում եթե կտակարարը ունակ չէ ինքնուրույն ստորագրելու կտակը, նա տեղեկացնում է այդ մասին վստահված անձին և նշում է թե ով պետք է ստորագրի այդ փաստաթուղթը: Ընդ որում կտակարարը առաջնորդվում է այն պետության իրավական կանոնակարգերով, որ երկրի տարածքում է գտնվում վստահված անձը: Վերոնշյալ բազմակողմանի համաձայնագիրը հանդիսանում է ինքնակամ կտակի սկզբունքի լուրջ երաշխիք:

1973 թ հոկտեմբերի 2-ի Հաագայի կոնվենցիան⁷³ վերաբերվում է մահացած անձանց գույքի միջազգային կարգավորմանը: Սույն կոնվենցիան ենթադրում է միջազգային հավաստագրի հանձնումը, այն վստահված անձանց, ովքեր թույլատրված են կարգավորելու մահացածի գույքը: Այդպիսի հավաստագիրը պետությունում, որպես կանոն, կազմվում է դատական կամ վարչական իրավասու մարմնի կողմից, համաձայն իր մշտական բնակության վայր իրավունքից: Ընդունվում է նաև տվյալ պետության իրավունքի կիրառումը, որ երկրի քաղաքացին հանդիսանում է կտակարարը: Այդ իսկ պատճառով այն պետությունը, որի քաղաքացին հանդիսանում է նա և այն երկիրը, որտեղ նա բնակություն է հաստատել պետք է կատարեն ընդհանուր հայտարարություն: Քաղաքացիության օրենքը կիրառվում է այն դեպքում, եթե անձը մինչ նրա մահը ապրել է 5 տարուց ոչ պակաս այն երկրում որտեղ նրան տրվել է հավասար

⁷² Uniform International Wills Act, Washington Convention of 1973, <http://www.uniformlaws.org/Shared/Docs/UIWA%201977%20Final.pdf> (23.12.2014)
⁷³ Hague Convention of 1. October 1973 concerning the International Administration of the Estates, <http://www.unidroit.org/english/conventions/1973wills/1973wills-explanatoryreport-e.pdf>

տագիրը: Հավաստագրի ընդունումը կատարվում է հրապարակման միջոցով: Իհարկե հնարավոր է հավաստագրի ընդունման այլ ձև, երբ այդ մասին որոշումը ընդունում է իրավասու մի մարմին: Հավաստագրի ընդունման ակտը սեփականատիրոջը հնարավորություն է ընձեռում, ուղղակի ներկայացման ժամանակ ընդունել, (ինչպես նաև հասնել ընդունմանը) ցանկացած պաշտպանողական և անհապաղ միջոցներ ժառանգվող գույքի վերաբերյալ, հավաստագրի ուժի մեջ մտնելու պահից և իր ընդունման ողջ ընթացակարգի ժամանակ:

Ինչպես 1961 թ կոնվենցիայի⁷⁴ դեպքում, այնպես էլ 1973 թ. Հաագայի կոնվենցիայի անվանումն էլ մատնանշում են այն դեպքերը, որոնք մտնում են իր կիրառման ոլորտը: Այսպիսով միջազգային հավաստագիրը թույլ է տալիս հավաքել տեղեկատվություն ժառանգի գույքի մասին, գույքի չափի, որը պետք է կառավարվի և օգնում է գույքի վաճառքի ժամանակ որոշել ավելի խելամիտ գին, կտակարարի պարտքերի մարման, վարձավճարների դրույքի խելամիտ օգտագործման նպատակով:

1973 թ. կոնվենցիայի⁷⁵ համաձայն հավաստագիրը սեփականատիրոջը իրավունք է ընձեռում ներկայացնել հակառակ հայցեր և պահանջներ տվյալ երկրում, այն վայրում, որտեղ տրվել է միջազգային կառավարման հավաստագիրը:

Գույքի նկատմամբ կիրառվող իրավունքի մասին Հաագայի 1985 թ. հուլիսի⁷⁶ 1-ի կոնվենցիան, որի օգտագործումը իրականացվում է վստահության սկզբունքով և նրա ընդունմամբ: Տվյալ կոնվենցիան առաջարկում է օրենքի մեկ այլ կարգավորման եղանակ, այն բաղկացած է բազմաթիվ յուրօրինակ մանրություններից:

⁷⁴ International Succession, Edited by Louis Garb and John Wood, 840 pages (281-282)

⁷⁵ Convention of 2 October 1973 Hague Conference on Private International Law

⁷⁶ Convention of 1 July 1985 on the Law Applicable to Trusts and on their Recognition, Hague Conference, http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=59 (19.12.2014)

Հաագայի 1989 թ. օգոստոսի 1-ի կոնվենցիան⁷⁷ անշարժ գույքի կիրառման իրավունքի մասին, շատ չի տարբերվում 1961 թ կոնվենցիայից⁷⁸ այն նույնպես հնարավորություն է ընձեռում ընտրության օրենքի առավել սերտ կապված հարաբերությունների կարգավորմանը անշարժ գույքի ժառանգության ոլորտում: Տվյալ ընտրության իրավական ձևակերպումը իրականացվում է համապատասխան դիմումի միջոցով: Դիմումի ձևը և նրա պարունակությունը սահմանվում են այն երկրի օրենքներով, որտեղ ընդունվել են: Տվյալ կոնվենցիան թույլ է տալիս նաև այլ երկրի օրենքի կիրառումը, որտեղ նա բնակություն է հաստատել: Այդ ամենի հետ մեկտեղ Հաագայի 1989 թ. օգոստոսի 1-ի կոնվենցիան ենթադրում է, որ պետության օրենքների կիրառումը հնարավոր է միայն այն դեպքում երբ այդ պետության իրավունքը չի մատնանշում, կոնկրետ որ նորմատիվ ակտերով պետք է առաջնորդվել:

1989թ. կոնվենցիան ունի յուրահատուկ հատկություններ, մասնավորապես, այնտեղ հաստատված է, որ ներկայացված կոլիզիոն սկզբունքները կոչված են կարգավորելու ժառանգության համաձայնագրի իրողությունը, որպես հատուկ փաստաթուղթ, որը սահմանում է, թե երբ է ծագում ժառանգության իրավունքը, ինչպես են դրանք փոփոխվում կամ դադարեցվում:

Համաձայն 1925 թ. հնդկական ժառանգության Ակտի 112 և 117 բաժինների⁷⁹, ցանկացած անձ, ով ի վիճակի է ունենալ/կառավարել սեփականություն, կարող է հանդիսանալ ժառանգ, սակայն այս ակտում գործում են որոշակի սահմանափակումներ եթե ժառանգը հանդիսանում է անչափահաս կամ անգործունակ, այս դեպքերում կտակը կարող է ճանաչվել անվավեր: Եթե անչափահաս անձը ճանաչվել է որպես կտակարարի ժառանգ, ապա նշանակվում է խնամակալ, ով պետք է կառավարի սեփականությունը, մինչև ժառանգի չափահաս դառնալը:

⁷⁷ Hague Conference on Private International Law (HCCH) .. Convention of 1 August 1989, http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=62

⁷⁸ Convention of 5 October 1961 Abolishing the Requirement of Legalisation for Foreign Public Documents, Hague Conference on Private International Law (HCCH)

⁷⁹ Sections 112 to 117 of 'Indian Succession Act, 1925'

Այդպիսի ժառանգություն կարող է հանդիսանալ ցանկացած անշարժ և շարժական գույք: 1956թ. Հնդկաստանի ժառանգության Ակտը, իր 30-րդ⁸⁰ բաժնում օրենքով սահմանվում է, որ յուրաքանչ-յուր ոք կարող է տնօրինել ցանկացած սեփականություն, որը անցել է նրան համաձայն կտակարարի ցանկությամբ:

Այժմ կփորձենք ուսումնասիրել այն ընթացակարգերը, որոնք պետք է ներառված լինեն կտակ կազմելիս: Առաջին քայլը դա այն է, որ կտակարարը պետք է իր կտակում տեղեկացնի, որ կտակը կազմելիս եղել է լիարժեք սթափ վիճակում և չի գտնվել մեկ այլ անձի ճնշման տակ: Կտակում պետք է նշվի կտակարարի անունը, ազգանունը, հասցեն տարիքը և այլ մանրամասներ կապված նրա անձի հետ:

Կտակարարի հաջորդ քայլը այն է, որ նա պետք է ներկայացնի իր կարողության՝ տան, հողի, բանկային ավանդների, ներդրումների, բաժնետոմսերի ցանկը, որտեղ նշված կլինեն դրանց ընթացիկ արժեքները: Կտակարարը պետք է փաստի նաև այն վայրը, որտեղ են պահվում այդ փաստաթղթերը: Կտակ կազմողի կարևորագույն պարտականությունն է տեղեկացնել իր ընտանիքի անդամներին կամ էլ վստահված անձին կտակի վերաբերյալ:

Կտակը կազմելիս կտակարարը պետք է մասնավորապես նշի⁸¹, թե ով է տնօրինելու իր ամբողջ կարողությունը իր մահից հետո՝ չխախտելով իրավահաջորդների շահերը: Եթե կտակարարը իր կտակում նշում է անչափահասի անուն, որպես շահառու, ապա այդ պարագայում նշանակվում է ողջ գույքի պահառու, ով կառավարում է գույքը:

Ամփոփելով կտակի կազմման դրույթները, կտակարարը պետք է ստորագրի իր կտակը երկու անկախ վկաների ներկայությամբ, ովքեր էլ իրենց հերթին պետք է ստորագրեն կտակարարի ստորագրությունից հետո՝ հավաստելով, որ կտակարարը ստորագրել է իրենց ներկայությամբ: Կտակի վերջում անպայման պետք է

⁸⁰ Section 30 in The Indian Succession Act, 1925, <http://indiankanoon.org/doc/530170/> (23.12.2014)

⁸¹ Private International Law in India, K B Agrawal; Vandana Singh, (Lawyer) ©2010.

դրվի ամսաթիվ: Կտակարարի մահից հետո ժառանգները կարող են դիմել համապատասխան մարմիններին կտակի վավերացման նպատակով: Եթե առարկություններ չեն լինում, դատարանը տալիս է կտակի պաշտոնական վավերացում, որը հանդիսանում է կտակի պատճեն՝ հաստատված դատարանի կողմից: Եվ միայն դրանից հետո կտակի վավերացումը ուժի մեջ է մտնում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանում⁸² է կոլիզիոն կապը ըստ կտակի ժառանգության դեպքում: Այս դրույթի պրակտիկ կիրառման դեպքում կարող են առաջ գալ մի շարք խնդիրներ, հատկապես եթե ի նկատի ունենանք, որ արտերկրում բնակվող մեր հայրենակիցների թիվը բավականին մեծ է և ՀՀ տարածքում ժառանգության բացվելու դեպքում կարող է առաջանալ օտարերկրյա իրավունքի կիրառման խնդիր, որնին անհրաժեշտ է համապատասխանաբար կարգավորում նախատեսել՝ կիրառելով միջազգային մասնավոր իրավունքի լավագույն փորձը: Միջազգային մասնավոր իրավունքի քաղաքացիա-իրավական ոլորտի փոփոխությունները նաև անհրաժեշտություն են ստեղծում քաղաքացիական դատավարությունում համապատասխան իրավակիրառ գործիքների նախատեսման համար, որոնք հնարավորություն կտան դատավորներին ճիշտ ընկալելու միջազգային մասնավոր իրավունքի կիրառման հաջորդական քայլերը: Այդ առումով աշխատանքային խմբի հետագա քայլերը կարող են դրսևորվել դատավորների, նոտարների և այլ մասնագետների համար կիրառման մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ, որը թույլ կտա կիրարկել քարտեզի միջոցով հերթականությամբ ուրվագծել միջազգային մասնավոր իրավունքի կիրառման առանձնահատկությունները:

Հնդկաստանի օրենքը իր հերթին նման խնդիրներից խուսափելու նպատակով, սահմանել է որոշակաի դրույթներ՝ մինչ կտակարարի կտակ կազմելը տեղեկացնել անշարժ և շարժական գույքի գրանցման ձևերին, համաձայն իրավահաջորդության մասին օրենքի: Ըստ էության իրավահաջորդության օրենքի բոլոր կանոն-

⁸² Տես ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 12-րդ բաժին:

ները ու ընթացակարգերը (կտակով թե առանց կտակի) սահմանված են Հնդկաստանի Ժառանգական Ակտում:

Հատկանշական է, որ Հնդկաստանը ունի դրամի փոխանակման կանոնակարգ, որը իրականացվում է Արտարժույթի կառավարման օրենքով⁸³ կարգավորելով բոլոր մուտքային և ելքային օտարերկրյա փոխանակմանը առնչվող գործարքները: Ըստ այդմ ոչ ռեզիդենտների հնդկական ակտիվների ձեռքբերումը, տնօրինումը և փոխանցումը կատարվում է Արժույթների կառավարման օրենքի ներքո:

Ինչպես արդեն նշել էինք 1925 թ. սահմանվել է հնդկական իրավահաջորդության օրենքը, որպես կտակարարի պաշտոնական հավաստագիր, այն մասին թե ինչպես պետք է տնօրինվի իր ունեցվածքը, իր մահից հետո: Այլ կերպ ասած, այդ հավաստագիրը կյանքի է կոչվում միայն, երբ կտակարարը համարվում է մահացած: Կտակը պետք է գրված լինի օրենքի սահմաններում և պետք է իրականացվի այն անձի կողմից, ով իրավաբանորեն իրավունք է կատարելու այն:

Հնդկաստանի իրավահաջորդության մասին օրենքը⁸⁴ չի սահմանափակում ոչ ռեզիդենտ անձի համար հանդիսանալու վախճանված անձի իրավահաջորդ, անկախ նրա քաղաքացիությունից: Բացի այդ, ոչ ռեզիդենտ անձը կարող է Հնդկաստանում ստանալ և ունենալ ցանկացած տեսակի անշարժ գույք համաձայն կտակարարի ժառանգության: Մակայն, մինչ Արժույթների կառավարման օրենքի կիրառումը ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտների համար, կարող են առաջ գալ մի քանի խնդիրներ ժառանգությանը հետ կապված, ինչպիսիք են.

- Հնդկաստանում մահացած քաղաքացու ժառանգների վերաբերյալ՝ լինելով օտարերկրյա ռեզիդենտներ/ Հնդկաստանի բնիկ կամ ոչ հնդկական ծագումով քաղաքացիներ
- Հնդկաստանի ոչ ռեզիդենտը ունենալով անշարժ գույք Հնդկաստանում, սակայն առանց կտակ թողնելու վախճան-

ված, փոխանցելով իր կարողությունը, օտարերկրյա ռեզիդենտներին կամ այն ժառանգներին ովքեր համարվում են քաղաքացիներ,

- Օտարերկրյա քաղաքացի, հնդկաստանի ռեզիդենտ կամ չունենալով անշարժ գույք Հնդկաստանի տարածքում, բայց առանց կտակ կազմելու վախճանված, կամ
- Օտարերկրյա քաղաքացիները պահանջում են իրենց ժառանգությունը Հնդկաստանի քաղաքացուց, ով համարվում էր Հնդկաստանում ժառանգած գույքի սեփականատեր:

Ժառանգական հարցերով, երբ մահացող անձը չի թողնում ժառանգություն, զբաղվում է հիմնական քաղաքացիական իրավասության դատարանը (տվյալ շրջանի դատարանը), որտեղ գտնվում են ակտիվները, կամ որտեղ հանգուցյալը մինչև մահը ապրել է, կամ մինչև երկրից մեկնելը: Օտարերկրացին, ով ունի անշարժ գույք Հնդկաստանում մախընտրելի է, որ կազմի կտակ, հետագայում ժառանգության կարգավորման դյուրինացման նպատակով: Հնդկաստանում ակտիվներ ունեցող օտարերկրյա քաղաքացին կարող է և կտակ չկազմել, քանի որ այդ ակտիվները անցնում են մահացողի իրավահաջորդներին: Օտարերկրյա մահն կտակի կատարումը Հնդկաստանում, ենթադրում է օտարերկրյա դատարանի կողմից հաստատում, որը ունի նույն համապատասխան իրավագործությունը և միայն դրանից հետո ներկայացվում է Հնդկաստանի համապատասխան իրավասության դատարանին: Կանոնները, որոնք վերաբերվում են օտարերկրյա կտակների կարգավորմանը, հաստատված են դատարանի մախադեպային օրենքով:

2.4. Ժառանգումը ըստ կրակի Կիպրոսում

Կիպրոսի Հանրապետությունում ժառանգման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Կտակների և ժառանգման մասին» օրենքով (The Wills and Succession Law), «Ժառանգական գույքի կառավարման մասին» օրենքով (The Administ-

⁸³ Foreign Exchange Management Act, 1999-2000 (FEMA)

⁸⁴ Section 2 of The Indian Succession Act, 1925, <http://indiankanoon.org/doc/1481078/>

Բազելի կոնվենցիային միանալով՝ Կիպրոսի Հանրապետությունը պարտավորվել է՝

1) Բազելի կոնվենցիայի անդամ մյուս երկրների հետ համատեղ աշխատանքներ կատարել կտակների գրանցման միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ՝ միջազգային մակարդակի վրա ապահովելով կտակների փոխադարձ հայտնաբերումը,

2) ստեղծել համապատասխան պետական մարմին(ներ)՝ Բազելի կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարման (մասնավորապես՝ օտարերկրյա քաղաքացիների թողած կտակների գրանցման և հայտնաբերման), ինչպես նաև՝ միջազգային համագործակցության ապահովման նպատակով⁸⁸:

Ներկայումս Բազելի կոնվենցիայից բխող պարտավորվածությունների կատարումը Կիպրոսի Հանրապետությունում ապահովվում է Կտակների Գլխավոր Ռեգիստր (Principal Probate Registry) կոչվող մարմնի կողմից, որը գործում է ԿՀ-ի Գերագույն Դատարանին կից:

Թողնված կտակների վերաբերյալ ինֆորմացիան Կտակների Գլխավոր Ռեգիստրում պահպանվում է՝ սկսած 1982թ. հոկտեմբերի 11-ից⁸⁹:

1.2. Վաշինգտոնի կոնվենցիայից բխող պարտավորությունները.

Վաշինգտոնի կոնվենցիայի նպատակն է՝ ապահովել կոնվենցիայի մասնակից երկրների քաղաքացիների կողմից կազմված կտակների վավերականությունը կոնվենցիայի անդամ մյուս պետություններում:

Վաշինգտոնի կոնվենցիան իր անդամ պետություններից պահանջում է միասնականացնել միջազգային կտակների վավերականությանը վերաբերող իրենց օրենսդրությունը:

⁸⁸ Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills, Basle, 16.V.1972, <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/077.htm>:

⁸⁹ Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills - List of declarations, reservations and other communications, <http://conventions.coe.int/Treaty/Commun/ListeDeclarations.asp?NT=077&CM=1&DF=&CL=ENG&VL=1>:

Վաշինգտոնի կոնվենցիային միանալով՝ Կիպրոսի Հանրապետությունը պարտավորվել է 6 ամսվա ընթացքում իր ազգային օրենսդրություն ներմուծել միջազգային կտակի վավերականությանը վերաբերող հետևյալ կոնվենցիոն կանոնները.

1) անկախ կտակի կազմման վայրից, ժառանգության զանգվածի գտնվելու վայրից, կտակ կազմողի ազգությունից և/կամ քաղաքացիությունից՝ կտակը ձևին ներկայացվող պահանջների առումով պետք է վավեր լինի, եթե այն կազմվել է Վաշինգտոնի կոնվենցիայում սահմանված միջազգային կտակի կազմման կանոններին համապատասխան,

2) ընդ որում, եթե կտակը չի համապատասխանում միջազգային կտակին ներկայացվող պահանջներին և որպես միջազգային կտակ անվավեր է, ապա դա որևէ կերպ չի ազդում կտակի վավերականության վրա՝ որպես հասարակ (ոչ միջազգային) կտակ,

3) միջազգային կտակը պետք է կազմվի գրավոր, ընդ որում՝ այն կարող է կազմվել ցանկացած լեզվով,

4) կտակ կազմող անձը երկու վկաների և միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձի ներկայությամբ պետք է հայտարարի, որ կտակում արտահայտված է իր կամքը, և որ ինքը տեղյակ է դրա բովանդակության մասին,

5) կտակ կազմող անձը պարտավոր չէ որևէ մեկին տեղյակ պահել կտակի պարունակության (բովանդակության) մասին,

6) միջազգային կտակը պետք է ստորագրվի վերը երկու վկաների և միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձի ներկայությամբ, իսկ եթե կտակն արդեն ստորագրված է, ապա կտակ կազմող անձը նշված անձանց ներկայությամբ պետք է հաստատի իր ստորագրությունը,

7) երկու վկաները և միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձը պետք է կտակ կազմող անձի ներկայությամբ ստորագրեն կտակը՝ վավերացնելով այն,

8) միջազգային կտակների հետ կապված հարցերով իրավասու պաշտոնատար անձը պետք է միջազգային կտակին կցի սեր-

տիֆիկատ, որի ձևը սահմանված է Վաշինգտոնի կոնվենցիայի հավելվածով: Սերտիֆիկատի մեկ օրինակը պահվում է իրավասու պաշտոնատար անձի մոտ, մյուսը տրվում է կտակ կազմող անձին: Սերտիֆիկատը հավաստում է, որ կտակը վավեր է որպես միջազգային կտակ⁹⁰:

2. Ժառանգումն ըստ Կիպրոսի Հանրապետությունն օրենսդրության.

Անձի մահից հետո նրա շարժական և անշարժ գույքը, որպես մեկ ամբողջություն, անցնում է մահացած անձի ժառանգներին՝ օրենքի ուժով կամ մահացած անձի թողած կտակի հիման վրա⁹¹:

«Կտակների և ժառանգման մասին» օրենքը կարգավորում է.

- իրենց մահվան պահին Կիպրոսի Հանրապետությունում մշտապես բնակվող անձանց՝ Կիպրոսի Հանրապետությունում գտնվող շարժական գույքի ժառանգման հետ կապված իրավահարաբերությունները,

- իրենց մահվան պահին Կիպրոսի Հանրապետությունում մշտապես բնակվող անձանց՝ Կիպրոսի Հանրապետությունում դուրս գտնվող շարժական գույքի ժառանգման հետ կապված իրավահարաբերությունները,

- Կիպրոսի Հանրապետությունում գտնվող անշարժ գույքի ժառանգման հետ կապված իրավահարաբերությունները՝ անկախ այն հանգամանքից, թե մահացած անձը որտեղ է մշտապես բնակվում կամ որ պետության քաղաքացի է հանդիսանում⁹²:

Ընդ որում, «Կտակների և ժառանգման մասին» Կիպրոսի Հանրապետության օրենքի իմաստով «անշարժ գույք» են համարվում.

1) հողը,

2) հողին ամրակցված շենքերը, շինությունները և կառույցները,

⁹⁰ Convention Providing a Uniform Law on the Form of an International Will (Washington, D.C., 1973), <http://www.unidroit.org/instruments/succession>:

⁹¹ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդվածներ 3, 4:

⁹² The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 5:

3) ծառերը, խաղողի որթերը և հողին ամրակցված (հողի վրա աճող) այլ բուսականությունը,

4) աղբյուրները, ջրհորները, ջրային ռեսուրսները և ջրային ռեսուրսների նկատմամբ ունեցած իրավունքները,

5) հողի կամ անշարժ գույքի հետ կապված արտոնությունները, ազատությունները և իրավունքները,

6) վերը նշված գույքերի տեսակներում մահացած անձի ունեցած բաժնեմասը⁹³:

«Կտակների և ժառանգման մասին» օրենքը կարգավորում է նաև մահացած անձի մշտական բնակության վայրի (domicile) որոշման հետ կապված հարցերը՝ մասնավորապես սահմանելով, որ.

1) ոչ ոք չի կարող միաժամանակ ունենալ երկու մշտական բնակության վայր,

2) եթե երեխան ծնվում է իր հոր կենդանության օրոք, ապա նրա սկզբնական մշտական բնակության վայր (domicile of origin) է համարվում հոր մշտական բնակության վայրը՝ երեխայի ծննդյան պահին,

3) եթե երեխան ծնվում է հոր մահվանից հետո, ապա նրա սկզբնական մշտական բնակության վայր է համարվում մոր մշտական բնակության վայրը՝ երեխայի ծննդյան պահին,

4) յուրաքանչյուր անձ կարող է իր գործողություններով փոխել իր սկզբնական մշտական բնակության վայրը,

5) եթե Կիպրոսի Հանրապետությունում ծնված անձը որևէ այլ երկրում փաստացի ձեռք է բերել կացարան և ցուցաբերել է բավականաչափ հստակ մտադրվածություն՝ տվյալ երկիրն իր մշտական բնակության վայրը դարձնելու ուղղությամբ, ապա նրա սկզբնական մշտական բնակության վայրը փոխվում է (domicile of choice),

6) բոլոր մնացած դեպքերում անձի մշտական բնակության վայր է համարվում նրա սկզբնական մշտական բնակության վայրը՝ այն երկիրը որտեղ նա ծնվել է (domicile of origin)⁹⁴:

⁹³ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 2:

Հանաձայն սույն օրենքի ժառանգության բացման պահ է համարվում անձի մահվան պահը:

Կիպրոսի Հանրապետությունում անձի մահը գրանցվում է Ծնունդների և մահերի ռեգիստրի այն տարածքային բաժնում, որտեղ տվյալ անձը բնակվում էր իր մահվան պահին: Մահվան փաստը հաստատվում է Ծնունդների և մահերի ռեգիստրի կողմից տրված մահվան վկայականով:

Անձը կարող է մահացած հայտարարվել նաև այն համայնքի ղեկավարի (mukhtar) կողմից, որտեղ անձը բնակվում էր իր մահվան պահին: Այդ դեպքում համայնքի ղեկավարը պետք է պատրաստի համապատասխան զեկույց, որը պետք է պարունակի անձի մահվան մանրամասները⁹⁵:

Անձը կարող է դատարանի կողմից մահացած հայտարարվել հետևյալ դեպքերում.

1) նա 10 տարուց ավել ժամանակ է, ինչ անհայտ կորած է, և նրա ողջ լինելու մասին որևէ տեղեկություն առկա չէ,

2) նա զինված ուժերում ծառայելու ընթացքում մասնակցել է ռազմական գործողությունների (պատերազմի), անհայտ կորել է պատերազմի ընթացքում, և պատերազմի ավարտի (խաղաղության հաստատման) պահից սկսած երեք տարվա ընթացքում նրա՝ ողջ լինելու մասին որևէ տեղեկություն առկա չէ,

3) նա հանդիսացել է անհայտ կորած նավի կամ օդանավի ուղևոր, և այդ նավից/օդանավից ավելի քան մեկ տարի որևէ նորություն չի ստացվել՝ սկսած այն պահից, երբ նավը կամ օդանավը անհայտ կորել է: Նավը/օդանավը համարվում է անհայտ կորած, եթե այն չի հասել իր ժամանման նշանակված վայր: Իսկ եթե նավը կամ օդանավը չունի հստակ ժամանման վայր, ապա այն համար-

⁹⁴ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդվածներ 6, 7, 8, 9, 10, 11, 13:

⁹⁵ Cyprus Legislation: Wills, Succession and Administration of Estates, [88](http://www.totalserve.eu/Download.aspx?tableName=tblNewsDocuments&id=19&fileName=Article%20No.1%20Cyprus%20Law%20on%20Succession-%20EN.pdf&shopFolder=true, էջեր 3, 4:</p></div><div data-bbox=)

վում է անհայտ կորած, եթե ճանապարհորդությունը սկսվելուց հետո երեք տարվա ընթացքում չի վերադարձել:

4) նա գտնվել է իր կյանքի համար վտանգավոր վիճակում, և այդ վիճակում գտնվելու պահից սկսած երեք տարվա ընթացքում նրա ողջ լինելու վերաբերյալ որևէ նորություն չի ստացվել:

Անձին դատական կարգով մահացած ճանաչելու դեպքում, եթե չկան հավաստի ապացույցներ առ այն, թե կոնկրետ երբ է տվյալ անձը մահացել, ապա անձը մահացած է համարվում՝

1) վերը նշված 1-ին կետով նախատեսված դեպքում՝ այն պահին, երբ շահագրգիռ անձն անհայտ կորած անձին մահացած ճանաչելու մասին դատարանին դիմում ներկայացնելու իրավունք է ստացել,

2) վերը նշված 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ այն պահին, երբ կնքվել է հաշտության պայմանագիր, կամ, եթե հաշտության պայմանագիր չի կնքվել, ապա՝ այն տարվա ավարտին, երբ պատերազմն ավարտվել է,

3) վերը նշված 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ այն պահին, երբ նավը կամ օդանավն օրենքի իմաստով համարվել են անհայտ կորած,

4) վերը նշված 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ այն պահին երբ տեղի է ունեցել անձի կյանքին վտանգ սպառնացող իրադարձությունը⁹⁶:

Անձին մահացած ճանաչելու իրավասություն ունի նրա վերջին հայտնի բնակության վայրի տարածաշրջանային դատարանը կամ տրիբունալը: Անձին մահացած ճանաչելու վերաբերյալ դիմում կարող են ներկայացնել միայն Կիպրոսի Հանրապետության գլխավոր ատտորնեյը (Attorney General) և շահագրգռված անձինք (այն անձինք, ում համար անհայտ կորած անձի մահն առաջացնում է իրավական հետևանքներ)⁹⁷:

Անձին մահացած հայտարարելու դեպքում առաջանում է վստահելի կանխավարկած առ այն, որ տվյալ անձն իրականում

⁹⁶ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 14:

⁹⁷ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 14:

մահացել է: Անձին մահացած ճանաչելու մասին դատարանի որոշումն իր նշանակությամբ հավասար է Ծնունդների և մահերի ռեգիստրի կողմից տրված մահվան վկայականին:

Եթե մի քանի անձինք մահացել են ընդհանուր վտանգի առկայության պայմաններում, ապա գործում է կանխավարկած առայն, որ նրանք մահացել են միաժամանակ: Եթե շահագրգիռ անձանց միջև վեճ է առաջանում առայն, թե ով է այդ անձանցից առաջինը մահացել, ապա այն կողմը, որը պնդում է որևէ մեկի ավելի շուտ մահանալու մասին, պետք է համապատասխան ապացույցներ ներկայացնի: Հավաստի ապացույցներ չներկայացնելու դեպքում կհամարվի, որ նրանք մահացել են միաժամանակ⁹⁸:

Անձի մահվան դեպքում նրան պատկանող գույքը որպես ժառանգություն կարող է փոխանցվել մեկ կամ մի քանի անձանց: Ժառանգումը կարող է տեղի ինչպես կտակի ուժով կամ օրենքի հիման վրա, այնպես էլ՝ միաժամանակ երկու հիմքերով⁹⁹:

«Կտակների և ժառանգման մասին» օրենքի համաձայն՝ կտակը կտակարարի (կտակ կազմած անձի)՝ իրավաբանական ուժ ունեցող գրավոր հայտարարությունն է՝ իր մահվան դեպքում իր շարժական և/կամ անշարժ գույքի իրավաբանական ճակատագիրը որոշելու մտադրության վերաբերյալ¹⁰⁰:

Բացի կտակարարի գույքի իրավաբանական ճակատագիրը որոշելու վերաբերյալ դրույթներից, կտակը կարող է պարունակել նաև կտակարարի հայտարարությունները և այլ կարևոր դրույթներ: Օրինակ՝ երեխայի հայրը կամ մայրը կարող են կտակի միջոցով իրենց երեխայի նկատմամբ խնամակալ նշանակել ամբողջ այն ժամանակահատվածի համար, երբ երեխան անգործունակ է կամ անկարող է գիտակցել և/կամ ղեկավարել իր արարքները:

Դատարանը կարող է հիմնավոր պատճառաբանությամբ փոխել կտակում նշված խնամակալին¹⁰¹:

Կիպրոսի Հանրապետությունում կտակ կազմելու իրավունք ունի 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ, ով չի տառապում հոգեկան խանգարմամբ և խնդիրներ չունի իր գործողությունների նշանակության գիտակցման և ղեկավարման, ինչպես նաև հիշողության հետ: Նման անձը կարող է կազմել վավեր կտակ և որոշել իր գույքի կամ դրա մի մասի ճակատագիրն իր մահվան դեպքում¹⁰²:

Կտակը համարվում է վավեր հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) այն պետք է կազմվի գրավոր,
- 2) այն պետք է ստորագրված լինի կտակարարի կողմից կամ կտակարարի անունից հանդես եկող մեկ այլ անձի կողմից՝ կտակարարի ներկայությամբ և հանձնարարությամբ,
- 3) կտակարարի տորագրությունը պետք է հաստատվի միաժամանակ ներկա գտնվող երկու կամ ավելի վկաների կողմից,
- 4) վերը նշված վկաները պետք է ստորագրեն և վավերացնեն կտակը կտակարարի և միմյանց ներկայությամբ,
- 5) եթե կտակը բաղկացած է մեկից ավել թերթերից, ապա դրա յուրաքանչյուր էջը պետք է ստորագրվի կտակարարի և վկաների կողմից:

Վերը նշված կանոնների խստիվ պահպանումը պարտադիր է. հակառակ դեպքում ԿՀ-ում կազմված կտակը կհամարվի անվավեր¹⁰³:

Կտակը, որը կազմվել է խաբեության, բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, համարվում է առոչինչ¹⁰⁴:

Մշտական բնակության վայրը (domicile) փոխելը կտակը չի դարձնում անվավեր¹⁰⁵:

⁹⁸ Cyprus Legislation: Wills, Succession and Administration of Estates, <http://www.totalserve.eu/Download.aspx?tableName=tblNewsDocuments&id=19&fileName=Article%20No.1%20Cyprus%20Law%20on%20Succession-%20EN.pdf&shopFolder=true>, էջեր 4, 5:

⁹⁹ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդվածներ 3, 4:

¹⁰⁰ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 2:

¹⁰¹ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 34:

¹⁰² The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 22:

¹⁰³ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 23:

¹⁰⁴ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 29:

¹⁰⁵ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 35:

Կիպրոսի Հանրապետությունում, որպես կանոն, ժառանգ լինել և ժառանգել կարող են բոլորը, բացի այն անձանցից, ովքեր իրենց հակաիրավական և սխալ արարքների պատճառով զրկվել են այդ հնարավորությունից:

Ժառանգելու իրավունքից զրկվում են այն անձինք, ովքեր.

1) դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ նրա դեմ մահափորձ են կատարել,

2) դատապարտվել են ժառանգատուի երեխայի, ծնողի կամ ամուսնու (կնոջ) սպանության կամ նրանց դեմ ուղղված մահափորձի համար,

3) խաբեության, բռնության կամ սպառնալիքի միջոցով ժառանգատուին ստիպել են կտակ կազմել կամ վերացնել նախկինում կազմած կտակը,

4) ժառանգատուին որևէ կերպ խանգարել են կտակ կազմելու, կտակը փոփոխելու կամ այն վերացնելու հարցում,

5) կեղծել են ժառանգատուի կազմած կտակը,

6) ապօրինաբար փոփոխել կամ վերացրել են ժառանգատուի կողմից կազմված կտակը,

7) որևէ անձի դրդել են կատարելու վերը նշված արարքներից որևէ մեկը կամ օժանդակել են նրան այդ հարցում:

Վերը նշված անձինք համարվում են անարժան ժառանգներ և մեկուսացվում են ժառանգությունից¹⁰⁶:

Անարժան ժառանգը կարող է օգտվել ժառանգելու իրավունքից միայն այն դեպքում, եթե ժառանգատուն իր կամքով զրավոր հայտարարությամբ հստակորեն ներել է անարժան ժառանգին: Ներումը կարող է տեղի ունենալ նաև կտակում այդ մասին հատուկ նշում անելու միջոցով¹⁰⁷:

Անարժան ժառանգի հետնորդները չեն զրկվում ժառանգելու իրավունքից և չեն մեկուսացվում ժառանգությունից: Նրանք ժառանգում են այնպես, ինչպես կժառանգեին եթե անարժան ժառանգը մահացած լիներ ժառանգատուի կենդանության օրոք:

¹⁰⁶ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 17:

¹⁰⁷ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 18:

Թեպետ անարժան ժառանգի հետնորդները չեն մեկուսացվում ժառանգությունից, այդուհանդերձ նրանց ժառանգելու դեպքում անարժան ժառանգն ամեն կերպ մեկուսացվում է ժառանգական գույքից օգտվելու, օգուտներ ստանալու հնարավորությունից¹⁰⁸:

Շատ երկրների իրավական համակարգեր, այդ թվում նաև Կիպրոսի Հանրապետության, որոշակիորեն սահմանափակում են կտակ կազմելու ազատությունը՝ նպատակ ունենալով ժառանգության զանգվածի մեջ գտնվող գույքի մեծ մասը պահել ժառանգատուի ընտանիքում¹⁰⁹:

«Կտակների և ժառանգման մասին» օրենքը սահմանում է «ժառանգության զանգվածի ազատ տնօրինման ենթակա մաս» հասկացությունը, որի մեջ ներառվում է ժառանգության զանգվածի մեջ մտնող այն շարժական և անշարժ գույքերը, որոնց ճակատագիրը կտակ կազմողը կարող է ազատորեն որոշել:

Նույն օրենքը սահմանում է նաև «ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի տնօրինման ոչ ենթակա մաս», որի մեջ ներառվում է ժառանգության զանգվածի այն մասը, որի ճակատագիրը ժառանգատուի մահվան դեպքում կանխորոշվում է օրենքով. ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի այդ մասի վերաբերյալ կտակ կազմվել չի կարող¹¹⁰:

Եթե որևէ անձի օգտին թողնվել է կտակ, ապա այդ ժառանգը չի կարող մեկուսացվել մնացած հիմքերով ժառանգումից, եթե նա դրա իրավունքն ունի: Խոսքը մասնավորապես վերաբերում է ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի տնօրինման ոչ ենթակա մասից բաժին ստանալու իրավունքին և ժառանգության զանգվածի մեջ մտնող և կտակով չտնօրինված գույքից մաս ստանալու իրավունքին:

¹⁰⁸ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 19:

¹⁰⁹ Cyprus Legislation: Wills, Succession and Administration of Estates,

<http://www.totalserve.eu/Download.aspx>

?tableName=tblNewsDocuments&id=19&fileName=Article%20No.1%20Cyprus%20Law%20on%20Succession-%20EN.pdf&shopFolder=true, էջ 6:

¹¹⁰ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 2:

«Կտակների և ժառանգման մասին» օրենքը հատակ սահմանում է, որ եթե ժառանգատուն ունի ամուսին (կին) և երեխա կամ ամուսին (կին) և թոռ, կամ չունի ամուսին (կին) բայց ունի երեխա կամ թոռ, ապա նա կարող է կտակի միջոցով ազատ տնօրինել ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի ոչ ավելի, քան մեկ երրորդ մասը¹¹¹: Հետագայում, 1989թ. օգոստոսի 2-ին ընդունված թիվ 14 օրոգնանսով սահմանվեց, որ վերը նշված դեպքերում անձը կարող է կտակի միջոցով տնօրինել ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի ոչ ավել, քան մեկ քառորդ մասը¹¹²:

Եթե ժառանգատուն ունի ամուսին (կին) կամ հայր կամ մայր, բայց չունի երեխա կամ թոռ, ապա ապա նա կարող է կտակի միջոցով ազատ տնօրինել ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի ոչ ավելի, քան կեսը:

Եթե ժառանգատուն չունի մայր, հայր, ամուսին (կին), երեխա կամ թոռ, ապա նա կարող է կտակի միջոցով ազատ տնօրինել ժառանգության զանգվածի մեջ մտնող ամբողջ գույքը:

Եթե ժառանգատուն այնուամենայնիվ փորձում է կտակի միջոցով տնօրինել ավելի շատ գույք, քան ժառանգության զանգվածի ազատ տնօրինման ենթակա մասն է, ապա նման կտակն անվավեր չի համարվում: Կտակի միջոցով տնօրինված գույքի ավել մասն այդ դեպքում համամասնորեն նվազեցվում է բոլոր ըստ կտակի ժառանգների համար այնքան, մինչև կտակով տնօրինված գույքի ընդհանուր զանգվածը կհասնի օրենքով թույլատրելի առավելագույն չափին¹¹³:

Վերը նշված կանոնը չի կիրառվում այն դեպքերում, եթե ժառանգատուն չունի երեխաներ, թոռներ, ծնողներ և կտակի միջոցով իր ամբողջ գույքը թողնում է իր կենդանի մնացած ամուսնուն (կնո-

ջը): Այս նորմը սահմանվել է 1971թ. փետրվարի 27-ին ընդունված թիվ 3 օրոգնանսով¹¹⁴:

Ժառանգատուի կենդանի մնացած ամուսինը (կինը) ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝ հետևյալ չափերով:

«Կտակների և ժառանգման մասին» Կիպրոսի Հանրապետության օրենքի համաձայն՝ եթե ժառանգատուն ունի երեխա կամ թոռ, ապա ժառանգատուի կենդանի մնացած ամուսինը (կինը) ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի տնօրինման ոչ ենթակա մասի 1/6-ի չափով և կտակի միջոցով չտնօրինված գույքի 1/6-ի չափով, իսկ եթե ժառանգատուն ունի հինգից ավելի երեխաներ, ապա՝ այդ երեխաներից որևէ մեկին հասանելիք բաժնի չափով¹¹⁵: Հետագայում սույն նորմը փոփոխվեց (1989թ. օգոստոսի 2-ի թիվ 14 օրոգնանսով)՝ սահմանելով որ վերը նշված դեպքում ժառանգատուի ամուսինը (կինը) ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝ ժառանգատուի յուրաքանչյուր երեխայի հետ հավասար չափով¹¹⁶:

Եթե ժառանգատուն չունի երեխա կամ թոռ, բայց ունի ծնողներ կամ արյունակցական մինչև 3-րդ աստիճանի կապով ազգականներ ապա ժառանգատուի կենդանի մնացած ամուսինը (կինը) ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա մասի 1/2-ի չափով և կտակի միջոցով չտնօրինված գույքի 1/2-ի չափով:

Եթե ժառանգատուն չունի երեխա, թոռ, ծնողներ կամ արյունակցական մինչև 3-րդ աստիճանի կապով ազգականներ, սակայն ունի արյունակցական 4-րդ աստիճանի կապով ազգականներ, ապա ժառանգատուի կենդանի մնացած ամուսինը (կինը) ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝ ժառանգության զանգ-

¹¹¹ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 41:

¹¹² Supplement No 2 to The Sovereign Base Areas Gazette, No 859 of 19th August, 1989. An Ordinance to Amend the Wills and Succession Ordinance (02.08.1989, ordinance 14 of 1989):

¹¹³ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 41:

¹¹⁴ Supplement No 2 to The Sovereign Base Areas Gazette, No 324 of 5th March, 1971. An Ordinance to Amend the Wills and Succession Ordinance (27.02.1971, ordinance 3 of 1971):

¹¹⁵ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 44:

¹¹⁶ Supplement No 2 to The Sovereign Base Areas Gazette, No 859 of 19th August, 1989. An Ordinance to Amend the Wills and Succession Ordinance (02.08.1989, ordinance 14 of 1989):

վածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա մասի 3/4-ի չափով և կտակի միջոցով չտնօրինված գույքի 3/4-ի չափով:

Եթե ժառանգատուն չունի երեխա, թոռ, ծնողներ, արյունակցական մինչև 3-րդ աստիճանի կապով ազգականներ և արյունակցական 4-րդ աստիճանի կապով ազգականներ, ապա ժառանգատուի կենդանի մնացած ամուսինը (կինը) ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա ամբողջ մասի չափով և կտակի միջոցով չտնօրինված ամբողջ գույքի չափով¹¹⁷:

Ժառանգության զանգվածի մեջ ամուսնու (կնոջ) ունեցած պարտադիր բաժնի չափը որոշելիս հաշվի չի առնվում այն գույքը, որն ամուսինը (կինը) ստացել է ժառանգատուի հետ կնքված ամուսնական պայմանագրով¹¹⁸:

Մինչդեռ ժառանգատուի երեխան կամ թոռը, ով ժառանգում է ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի՝ տնօրինման ոչ ենթակա մասից կամ ժառանգական գույքի՝ կտակի միջոցով չտնօրինված մասից, իր բաժինը որոշելու համար պետք է հաշվի առնի նաև այն գույքը, որը նա ցանկացած ժամանակ ստացել է ժառանգատուից՝ որպես մահվան սպասումի ընթացքում արված նվեր, օժիտ կամ ամուսնական պայմանագրի հիմքով:

Այս կանոնը չի կիրառվում այն դեպքերում, երբ ժառանգատուն կտակ է կազմել և իր կտակի մեջ հատուկ նշել է, որ վերը նշված գույքերը չպետք է հաշվի առնվեն ժառանգի՝ ժառանգական գույքում ունեցած բաժինը որոշելիս¹¹⁹:

Կիպրոսի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ լեգատը մեկնաբանվում է որպես ժառանգատուի կողմից արված նվեր՝ շարժական կամ անշարժ գույքի տեսքով, իսկ լեգատառուն այն անձն է, ում օգտին արվել է լեգատը:

Լեգատն անվավեր է, եթե լեգատառուն ժառանգատուի մահվան պահի դրությամբ դեռևս (կամ արդեն) գոյություն չունի: Բա-

¹¹⁷ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 44:

¹¹⁸ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 45:

¹¹⁹ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 51:

ցառություն են կազմում միայն ժառանգատուի մահվանից հետո ծնված նրա երեխաները:

Լեգատը պետք է արվի հստակ արտահայտված նպատակով: Այն կարող է արվել նաև պայմանով: Երբ լեգատը պայմանով է, իսկ այդ պայմանը կատարելն անհնար է, կամ դրա կատարումը հակասում է օրենքին կամ բարոյականությանը, ապա պայմանը համարվում է առչինչ, իսկ լեգատը՝ վավեր¹²⁰:

10. Մահվան սպասումի ընթացքում արված նվեր.

Կիպրոսի Հանրապետության օրենսդրության համաձայն մահվան սպասումի ընթացքում արված նվերն այն նվերն է, որն արվել է իր մոտավոր վախճանին սպասող հիվանդ անձի կողմից: Մահվան սպասումի ընթացքում արված նվեր կարող է լինել միայն շարժական գույքը: Այդ նվերը կարելի է պայմանական անվանել այն առումով, որ հանձնվում է նվիրառուին միայն հիվանդ անձի՝ հիվանդությունից մահանալու դեպքում:

Նման նվիրատվություն կարող է կատարել միայն 18 տարին լրացած և հոգեպես առողջ վիճակում գտնվող անձը: Այդպիսի նվիրատվությունը պետք է կատարվի նվազագույնը երկու վկաների ներկայությամբ, ովքեր նույնպես գտնվում են հոգեպես առողջ վիճակում և նվազագույնը 18 տարեկան են:

Մահվան սպասումի ընթացքում արված նվերը ցանկացած պահի կարող է հետ կանչվել: Այդպիսի նվիրատվությունը կորցնում է իր ուժը, եթե հիվանդ անձը հիվանդության արդյունքում կենդանի է մնում, կամ եթե նվիրառուն (նվեր ստացողը) նվիրատուից ավելի շուտ է մահանում:

Այսպիսի նվերների նկատմամբ կիրառվում են լեգատներին վերաբերող կանոնները¹²¹:

Կիպրոսի Հանրապետությունում կազմված կտակը կարող է վերացվել.

¹²⁰ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդվածներ 31, 32:

¹²¹ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 40:

1) նոր կտակով, որը պարունակում է հստակ ցուցում՝ նախորդ կտակը վերացնելու մասին,

2) նոր կտակով, որի դրույթները չեն համապատասխանում նախորդ կտակի դրույթներին (այս դեպքում նախորդ կտակը վերացված է համարվում միայն նոր կտակին չհամապատասխանող դրույթների մասով),

3) կտակն այն կազմողի (կամ կազմողի ներկայությամբ՝ նրա նշանակած անձի) կողմից վառելու, պատռելու կամ այլ կերպ նպատակադրված ոչնչացնելու միջոցով:

Կտակը համարվում է վերացված օրենքով նախատեսված որոշ իրադարձությունների տեղի ունենալու ուժով, օրինակ՝ եթե կտակ կազմելուց հետո անձն ամուսնացել է կամ երեխա է ունեցել (եթե մինչ այդ նա երեխաներ չուներ):

Վերը նշված իրադարձությունների ի հայտ գալու դեպքում կտակը չի վերացվում, եթե ակնհայտ երևում է, որ այն կազմվել է՝ հաշվի առնելով ապագա ամուսնությունը կամ երեխայի ծնունդը:

Կտակի վերացման դեպքում այն այլևս չի կարող գործել, բացառությամբ այն դեպքերի, երբ վերացված կտակը նորից կազմվել է օրենքով սահմանված կարգով և կտակ կազմող անձը նպատակ ունի վերականգնել այն¹²²:

«Կտակների և ժառանգման մասին» Կիպրոսի Հանրապետության օրենքը ժառանգներին բաժանում է 4 դասի՝ հիմնվելով ժառանգատուի հետ նրանց ունեցած արյունացական կապի վրա: Օրենքը նաև սահմանում է այն ժառանգության զանգվածի մեջ մնող գույքի այն բաժինը, որի նկատմամբ յուրաքանչյուր դասի ժառանգները կարող են հավակնել:

Նույն դասին պատկանող ժառանգները, որպես կանոն, ժառանգում են հավասար բաժիններով: Ժառանգների յուրաքանչյուր դասի հրավիրման դեպքում մյուս դասերը չեն կարող հավակնել ժառանգությանը¹²³:

¹²² The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդվածներ 37, 38, 39:

¹²³ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 46:

Կիպրոսի Հանրապետությունում ըստ օրենքի ժառանգների դասերը հետևյալն են¹²⁴:

Դաս	Ընդգրկված անձինք
1-ին	ա) ժառանգատուի՝ օրինական ամուսնությունից ծնված երեխաները, որոնք կենդանի են ժառանգատուի մահվան պահին, բ) ժառանգատուի՝ օրինական ամուսնությունից ծնված և նրա կենդանության օրոք մահացած երեխաների այն հետնորդները, ովքեր կենդանի են ժառանգատուի մահվան պահին
2-րդ	ա) ժառանգատուի հայրը և մայրը, ովքեր կենդանի են ժառանգատուի մահվան պահին (իսկ նրանց մահացած լինելու դեպքում՝ ժառանգատուին արյունակցական կապերով ամենամոտիկ նախնին, ով կենդանի է ժառանգատուի մահվան պահին), ժառանգատուի հարազատ և համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները, ովքեր կենդանի են ժառանգատուի մահվան պահին, բ) ժառանգատուի կենդանություն օրոք մահացած եղբայրների և քույրերի հետնորդները, ովքեր ժառանգատուի մահվան պահին կենդանի են
3-րդ	ժառանգատուի մահվան պահին կենդանի և ժառանգատուին արյունակցական կապով ամենամոտ նախնիները
4-րդ	ժառանգատուի մահվան պահին կենդանի և ժառանգատուին արյունակցական կապով ամենամոտիկ հարազատները՝ մինչև արյունակցական կապի 6-րդ աստիճանը (ընդ որում, արյունակցական կապով ավելի մոտիկ հարազատների առկայությունը բացառում է ավելի հեռու արյունակցից հարազատների ժառանգումը)

Անձի հետ արյունակցական կապ ունեցող մինչև 6-րդ աստիճանի հարազատների աղյուսակը ներկայացված է «Կտակների և ժառանգման մասին» օրենքի 2-րդ հավելվածում:

Եթե անձը չունի ամուսին (կին) և/կամ արյունակցական կապի մինչև 6-րդ աստիճանի հարազատ, ապա նա համարվում է անժա-

¹²⁴ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հավելված 1:

ռանգ և նրա չտնօրինված ժառանգությունը դառնում է Կիպրոսի Հանրապետության սեփականությունը¹²⁵:

«Կտակների և ժառանգման մասին» օրենքը սահմանում էր, որ կտակով իրենց գույքը առանց որևէ սահմանափակման տնօրինելու լիազորություն ունեն այն անձինք, ովքեր (կամ ում հայրերը) ծնվել են Մեծ Բրիտանիայի միացյալ թագավորությունում կամ դրա ինքնակառավարվող տարածքներից (dominion) որևէ մեկում, անկախ նրանց՝ Կիպրոսում մշտապես բնակվելու հանգամանքից¹²⁶:

1971թ. փետրվարի 27-ի թիվ 3 օրոնմանսը վերաշարադրեց վերը նշված նորմը՝ սահմանելով, որ.

1) կտակով իրենց շարժական և անշարժ գույքը տնօրինելու լիակատար ազատություն ունեն այն անձինք, ովքեր (կամ ում հայրերը) ծնվել են.

- Մեծ Բրիտանիայում, կամ

- կտակի կազմման պահի դրությամբ (կամ ժառանգատուի կենդանության օրոք) Բրիտանական համագործակցության (Commonwealth) անդամ հանդիսացող անկախ երկրներից որևէ մեկում (բացի Կիպրոսի Հանրապետությունից),

2) կտակով իրենց շարժական գույքը տնօրինելու լիակատար ազատություն ունեն օտարերկրացիները¹²⁷:

Այդուհանդերձ, Կիպրոսի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա քաղաքացիներն իրավունք ունեն նշանակել հավատարմագրային կառավարիչներ և իրենց մահվանից հետո իրենց գույքը հանձնել հավատարմագրային կառավարման: Հավատարմագրային կառավարիչները պարտավոր են ժառանգական գույքը կառավարել ժառանգատուի նշանակած շահառուների օգտին և տնօրինել ժառանգական գույքը՝ ժառանգատուի կարգադրությունների համաձայն¹²⁸:

2000թ. ընդունված օրենքով Կիպրոսի Հանրապետությունում վերացվեց ժառանգության հարկն այն անձանց համար, ովքեր մահացել են 2000թ. հունվարի 1-ից հետո¹²⁹: Մինչև այդ ամսաթիվը մահացած անձանց թողած ժառանգությունը հարկվում է «Ժառանգական գույքի հարկման մասին» Կիպրոսի Հանրապետության 1962թ. օրենքով սահմանված չափով:

Յուրաքանչյուր անձ կարող է իր կենդանության օրոք համապատասխան վճարի դիմաց իր կտակը հանձնել պահպանման: Կտակների պահպանումն իրականացվում է Կտակների ռեգիստր (Probate Registry) կոչվող պետական մարմինների կողմից, որոնք գործում են տարածքային դատարաններին կից:

Կտակների ռեգիստրները կատարում են տարբեր պարտականություններ, այդ թվում՝ կտակների ընդունում և պահպանում, կտակը հաստատելու վերաբերյալ դիմումների ընդունում, այդ մասին Կտակների գլխավոր ռեգիստրին (Principal Probate Registry) տեղեկացում և այլն: Կտակների գլխավոր ռեգիստրը համակարգում է Կիպրոսի Հանրապետությունում գործող Կտակների ռեգիստրների աշխատանքը և գործում է Կիպրոսի Հանրապետության գերագույն դատարանին կից:

Ռեգիստրին հանձնվելուց հետո կտակը չի կարող բացվել այլ կերպ, քան կտակ թողած անձի համաձայնությամբ և Կտակների ռեգիստրի համապատասխան պաշտոնյայի ներկայությամբ¹³⁰:

Կիպրոսի Հանրապետության իրավական համակարգի և ժառանգման ոլորտը կարգավորող իրավական նորմերի առանձնահատկություններից մեկն այն է, որ ժառանգատուի մահվանից հետո ժառանգական գույքն ուղղակիորեն չի փոխանցվում ժառանգին:

Ժառանգատուի մահվանից հետո շահագրգիռ անձինք պետք է դիմեն դատարան՝ կտակի հաստատման և/կամ ժառանգական գույքի կառավարման լիազորություն ստանալու նպատակով:

¹²⁵ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 47:

¹²⁶ The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws, հոդված 42:

¹²⁷ Supplement No 2 to The Sovereign Base Areas Gazette, No 324 of 5th March, 1971. An Ordinance to Amend the Wills and Succession Ordinance (27.02.1971, ordinance 3 of 1971):

¹²⁸ <http://eureseau.com/practice-areas/inheritance/inheritance-cyprus.html>:

¹²⁹ Inheritance in Cyprus, <http://www.cypruslawfirm.com/inheritance-in-cyprus/>:

¹³⁰ Cyprus Legislation: Wills, Succession and Administration of Estates, [100](http://www.totalserve.eu/Download.aspx?tableName=tblNewsDocuments&id=19&fileName=Article%20No.1%20Cyprus%20Law%20on%20Succession-%20EN.pdf&shopFolder=true, էջեր 10-11:</p></div><div data-bbox=)

Կիպրոսի Հանրապետության օրենսդրության մեջ օգտագործվում է «պոռբատ» (probate) հասկացությունը, որը մեկնաբանվում է որպես ռեզիստրի կամ դատարանի կողմից տրված գրավոր փաստաթուղթ, որը հավաստում է, որ մահացած անձի կտակը հաստատվել է օրենքով սահմանված կարգով, իսկ ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի կառավարումը հանձնվել է այդ փաստաթղթում նշված ժամանակավոր կառավարչին: Կիպրոսի Հանրապետությունում կտակը չի կարող ուժի մեջ մտնել առանց հաստատման (պոռբատի)¹³¹:

Եթե ժառանգատուի մահվանից հետո ողջամիտ, սակայն չորս ամիսը չգերազանցող ժամկետում որևէ մեկը քայլեր չի ձեռնարկել ժառանգատուի թողած կտակը բացելու ուղղությամբ, ապա դատարանը իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ հրապարակել կտակը և դրա պարունակությունը՝ այդ մասին ծանուցելով շահագրգիռ անձանց¹³²:

Բացի «պոռբատ» հասկացությունից, Կիպրոսի Հանրապետության օրենսդրությունն օգտագործում է նաև «գրանտ» (grant) հասկացությունը, որը մեկնաբանվում է որպես պոռբատի կամ կառավարման իրավունքի տրամադրում¹³³: Ընդ որում, կառավարման իրավունքը կարող է սահմանափակվել (ժամկետներով, ժառանգության զանգվածի մեջ գտնվող կոնկրետ գույքերով կամ նպատակներով)¹³⁴:

Գրանտներ արձակելու հարցում Կիպրոսի Հանրապետության դատարանները և Կտակների ռեզիստրները հետևում են անգլիական պրակտիկային:

Գրանտները չեն կարող արձակվել, քանի դեռ ժառանգման հարկը վճարված չէ¹³⁵: Այս կանոնը վերաբերում է միայն 2000թ. հունվարի 1-ից առաջ մահացած անձանց:

¹³¹ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 14:

¹³² The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 10:

¹³³ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 2:

¹³⁴ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 19:

¹³⁵ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 12:

Եթե համապատասխան Կտակների ռեզիստրը չի կարողանում կողմնորոշվել պոռբատ տրամադրելու կամ չտրամադրելու տարու հարցում, ապա նա դիմում է դատարան, որը կարող է հարցի քննարկման նպատակով կազմակերպել համապատասխան լսումներ¹³⁶:

Կիպրոսի Հանրապետությունում ժառանգական գույքի կառավարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Կտակների և ժառանգման մասին» օրենքով, «Ժառանգական գույքի կառավարման մասին» օրենքով և «Կտակների հաստատման մասին» օրենքով:

Եթե ժառանգատուն մահանում է առանց կտակ թողնելու կամ իր թողած կտակով չի նշանակում կտակակալ կամ ժառանգներից որևէ մեկը (կամ ժառանգական գույքով շահագրգռված անձանցից որևէ մեկը) անչափահաս կամ անգործունակ է, ապա դատարանը նշանակում է ժառանգական գույքի կառավարիչ և նրան հանձնում է ժառանգական գույքի կառավարման իրավունքը հաստատող փաստաթուղթ:

Անչափահաս և/կամ անգործունակ ժառանգների առկայության դեպքում դատարանի կողմից նշանակվում է ժառանգական գույքի առնվազն երկու կառավարիչ:

Այն դեպքում, եթե ժառանգատուն կտակով սահմանել է կտակակատար, ապա դատարանը ժառանգական գույքի կառավարման իրավունքը հանձնում է կտակակատարին:

Ժառանգական գույքի կառավարման իրավունք տրամադրելիս դատարանը պետք է հաշվի առնի բոլոր շահագրգիռ անձանց շահերը: Ժառանգական գույքի կառավարման իրավունքը կարող է սահմանափակվել դատարանի հայեցողությամբ:

Դատարանը կարող է շահագրգիռ անձի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ ազատել կառավարչին կամ կտակակատարին, եթե նրանք պատշաճ չեն կատարում իրենց պարտականությունները: Դատարանն իրավունք ունի ազատված կամ մահացած կառավարչի փոխարեն նշանակել նոր կառավարիչ:

¹³⁶ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 13:

Ժառանգատուի հուղակավորության ծախսերը հոգալու և պարտքերը վճարելու նպատակով կառավարիչն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում վաճառել, այլ կերպ օտարել կամ գրավ դնել ժառանգական զանգվածի մեջ գտնվող գույքը¹³⁷: Եթե դատարանն այս հարցում սահմանափակել է կառավարչի իրավունքները, ապա այս գործողությունները կարող են կատարվել դատարանի որոշմամբ:

Ժառանգական գույքի կառավարիչը, բացի վերը նշված գործողությունների կատարումից, նաև.

1) հավաքագրում է ժառանգատուի այն պարտքերը, որոնք նրան կենդանության օրոք չեն վճարվել,

2) օրենքի համաձայն ժառանգների միջև բաշխում է ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի տնօրինման ոչ ենթակա մասը և կտակի միջոցով չտնօրինված գույքը¹³⁸:

Ժառանգատուի հուղակավորման ծախսերը և ժառանգության պահպանման ու կառավարման ծախսերը (այդ թվում նաև՝ կառավարչի կամ կտակակատարի վարձատրությունը) հոգալուց հետո ժառանգատուի մնացած պարտքերը մարվում են հետևյալ հերթականությամբ.

- ժառանգատուի հիվանդ լինելու ընթացքում առաջացած բժշկական ծախսերը և վերջինիս տնային աշխատողների ոչ ավելի, քան վեց ամսվա աշխատավարձը,

- ապահովված պարտքերը՝ ըստ առաջնահերթության,

- ժառանգատուի մյուս պարտքերը¹³⁹:

Այն դեպքում, երբ ժառանգատուն ունի անգործունակ կամ արտասահմանում բնակվող ժառանգներ, ժառանգատուի վերջին բնակության վայրի գյուղապետը կամ համայնքի ղեկավարը պետք է համապատասխան հարցումներ կատարի՝ ժառանգների կազմը

ճշտելու նպատակով: Դրանից հետո նա Կտակների ռեգիստրին պետք է ներկայացնի հաշվետվություն՝ նշելով ժառանգատուի մահվան ամսաթիվը, բոլոր անգործունակ և արտասահմանում գտնվող ժառանգների ցուցակը, ժառանգական գույքի կազմը և դրա մոտավոր արժեքը:

Այս պարտականությունները չկատարելու դեպքում համապատասխան պաշտոնյան (գյուղապետը կամ համայնքի ղեկավարը) պետք է ենթարկվի տուգանքի¹⁴⁰:

Ժառանգը կարող է առանց որևէ պատճառի հրաժարվել ժառանգությունից՝ այն պահից սկսած երեք ամսվա ընթացքում, երբ նա իմացել է ժառանգատուի մահվան և իր՝ ժառանգ հանդիսանալու մասին:

Ժառանգությունից հրաժարումը տեղի է ունենում Կտակների ռեգիստրին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով:

Ժառանգությունից հրաժարված ժառանգը պատասխանատվություն չի կրում ժառանգատուի պարտքերի համար և չի կարող որևէ հավակնություն ներկայացնել ժառանգական զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ¹⁴¹:

¹³⁷ Cyprus Legislation: Wills, Succession and Administration of Estates,

<http://www.totalserve.eu/Download.aspx>

?tableName=tblNewsDocuments&id=19&fileName=Article%20No.1%20Cyprus%20Law%20on%20Succession-%20EN.pdf&shopFolder=true, էջ 12:

¹³⁸ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 41:

¹³⁹ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 42:

¹⁴⁰ Cyprus Legislation: Wills, Succession and Administration of Estates,

<http://www.totalserve.eu/Download.aspx>

?tableName=tblNewsDocuments&id=19&fileName=Article%20No.1%20Cyprus%20Law%20on%20Succession-%20EN.pdf&shopFolder=true, էջ 12:

¹⁴¹ The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws, հոդված 51:

Գլուխ 3.

Հայերի թողած կտակների ուսումնասիրությունը (Իսրայելի, Պորտուգալիայի, Հնդկաստանի և Կիպրոսի օրինակներով)

Հայկական բարեգործությունը սկիզբ է առնում քաղաքակրթության ակունքներից և ունի հարուստ պատմություն: Նրա առանձնահատկությունների վրա, անշուշտ, ազդել են Հայաստանի բարդ և երբեմն ողբերգական պատմության ընթացքը: Կոնկրետ պատմական ժամանակաշրջանների գործոններով պայմանավորված գերակայել է բարեգործության մերթ մասնավոր, մերթ հասարակական ձևը, բայց ամեն դեպքում, մարդասիրությունը և մեկենասությունը, ինչպես բուն Պատմական Հայաստանի, այնպես էլ դրա սահմաններից դուրս, ի սկզբանե հանդիսացել են հայկական հանրության կարևոր և անհրաժեշտ բաղադրիչը: Ընդ որում, օտարների արշավանքների և միջնադարում պետականության կորստի արդյունքում աշխարհի շատ երկրներում հայտնի համայնքների ձևավորումը կանխորոշել է հայկական փոխաջակցության չափազանց լայն շրջանակ:

Հայ ժողովրդի պատմությունն ունի բարեգործության, մեկենասության անհերքելի փաստեր, որոնք հսկայական դեր են ունեցել ազգային մշակույթի, գրականության և արվեստի պահպանման մեջ: Այս ասպարեզում անվիճարկելի է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը: Սակայն, ինչպիսին էլ որ լինի եկեղեցու դերը, աստվածահաճո գործերի, մեկենասության և բարեգործության համար անհրաժեշտ են բավականին շատ միջոցներ: Մեկենասության, բարեգործության ավանդույթները պահպանվել են մինչև մեր օրերը, ստանալով առարկայական բնույթ, մասնավորապես, գրավոր կտակներում: 19-րդ դարի երկրորդ կեսին մարդասիրական գործունեության նման միջոցը դարձավ ամենատարածված միջոցներից մեկը: Պետք է նշել, որ գաղութներում լայն տարածում գտավ բարեգործական կտակների ինստիտուտը, ինչը վկայում է Հայրենիքից դուրս ապրող հայերի կողմից ժողովուրդ, հայրենիք հասկացու-

թյունների խորը արժեքային վերաիմաստավորման, ինչպես նաև ոչ միայն իր ընտանիքին ու գերդաստանին, այլև Հայաստանին, ողջ հայ ժողովրդին, որոնցից նրանք իրենց չեն տարբերակել, որևէ իրական և կոնկրետ աջակցություն ցուցաբերելու մասին: Կտակը բարեգործական միջոցառում իրականացնելու առավել պարզ միջոցն է, որը բարեգործի կյանքի ընթացքում ծախսեր չի պահանջում, սակայն պարունակում է կրոնական բարոյականության պարտավորվածություն: Միջոցների փոխանցման ընթացքը լիովին պայմանավորված է կտակի տեքստում: Հարկ է նշել, որ այդ բոլոր կտակներում կտակարարի կամքով առանձնացված կապիտալը մնում է անփոփոխ, բարեգործական նպատակներով օգտագործվում են զուտ ընդհանուր գումարի տոկոսները: Որոշ դեպքերում նշված է սահմանված գումարի անձեռնմխելիության սպառման ժամկետը: Բոլոր կտակները կազմված են Հայ Առաքելական Եկեղեցու ավանդույթների ոգով, ինչը բազմիցս նշվում է տեքստերում: 19-րդ դարի վերջում առևտրական կապիտալի կայունությունը և աճը թույլ տվեցին ֆինանսական միջոցները և գույքը առատորեն բաշխել բարեգործության նպատակով: Հարկ է նշել նաև, որ դրան նպաստել է տնտեսական վիճակը: Բարեփոխումներից առաջ ընկած ժամանակաշրջանում առևտրական գերդաստանները, ինչպես նաև դրանց կապիտալը տարբերվել են ծայրաստիճան անկայունությամբ, իսկ բուն բարեփոխումների շրջանում, երբ ձևավորվեցին շուկայական ինստիտուտները և զարգացավ բանկային համակարգը, դրանք ձեռք բերեցին կայունություն և աճի միտում:

Մասնավոր անձանց բարեգործությունը ունեցել է իրականացման տարբեր ձևեր և միջոցներ: Առաջին՝ մասնակցություն բարեգործական հաստատությունների գործունեությանը, երկրորդ՝ հայերն անձամբ են շահագրգիռ մասնակցություն ունեցել բարեգործական նախագծերի ստեղծմանը՝ կահավորել են անկելանոցներ, հիվանդանոցներ, դպրոցներ, մասնակցել են տաճարների կառուցմանն ու կահավորմանը: Այս դեպքում բարեգործական գործունեությունը կենսագործվել է տարբեր եղանակներով, ինչպիսին է բանկային ավանդի ստեղծումը և դրա հետագա ամրապնդումը, օրի-

նակ՝ տաճարների կահավորման, դպրոցների, կրթության, գրականության և մշակույթի զարգացման, Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորների կենսամակարդակի բարձրացման համար: Մյուս եղանակով նախատեսվում է որոշակի բարեգործական նպատակների համար կտակների ձևակերպում՝ կապիտալի և գույքի մասերի փոխանցելու միջոցով:

C O P I E

Alexandrie (Egypte) le 29 Février 1920⁸
Boite Postale 86

K. et G. Melkonian

055.05

Délégation Arménienne

S. E. Boghos Pacha Nubar et Mr. Aharonian

Paris.

J'ai l'honneur d'annexer à la présente la copie de la dépêche de mon frère, ainsi que celle de la mienne.

Mon frère Krikor est un peu malade, et pourtant, grâce à Dieu, il va mieux de jour en jour.

J'ai en son temps quitté la sujétion turque et embrassé officiellement celle de la Grèce, et cela pour pouvoir faire librement mon testament. Je viens de léguer donc par testament toute ma fortune à la nation arménienne, après en avoir enlevé une somme de 10, 12.000 Livres. Elle ^{est} égale à celle de mon frère.

Ci-inclu la liste des proches parents vivants de mon frère Krikor, y compris moi-même.

Que Dieu garde encore mon frère; et pourtant je me permets de vous demander que, si par hasard mon frère vient de cesser de vivre, sans pouvoir faire son testament, qui sera ou qui seront ses héritiers, d'après la loi de la République Arménienne? Si la loi me connaît comme seul héritier pour toute sa fortune, je n'en accepterai ni même un seul centime et je quitterai entièrement à la nation, respectant la volonté de mon frère. Pour être plus sûre à ce que je viens de dire, veuillez m'envoyer, si vous désirez, une déclaration en ce sens, rédigée par vous-mêmes, et je la signerai et vous retournerai, légalisée par le Patriarcat d'Alexandrie.

Veuillez demander, si possible, par fil, au Gouvernement

9

d'Erivan, un exemplaire de la loi testamentaire et me faire parvenir à la première occasion, en m'indiquant les frais que je ne manquerai pas de vous rembourser immédiatement.

J'ai l'honneur d'être respectueusement

Votre humble serviteur,

G. Melkonian.

005036

Liste des proches parents de Mr. Krikor Melkonian

Vivants

- Garabed Melkonian..... son frère
- Un garçon et une fille..... de son grand frère (mort)
- Un garçon et une fille..... de sa grande soeur (morte)
- Deux garçons et une fille..... de sa seconde soeur (morte)

29/2/1920

Կտակներում որոշակի գումար է հատկացվում եկեղեցիներին և վանքերին, երբեմն՝ առանց նշելու նպատակը, օրինակ՝ Էջմիածնի տաճարին, Մուրթ Հակոբի եկեղեցուն և Երուսաղեմի տաճարին և այլն: Ունևոր հայերը առանձնակի հոգատարություն են դրսևորել երիտասարդ սերնդի դաստիարակության, կրթության հարցերին: Կտակված գումարները նախատեսվել են ծխական դպրոցներ բացելու և պահպանելու, տեղի քաղաքային դպրոցներում ու զիննագիաներում ուսանելու, քենական հոգևոր դպրոցներին օգնելու (կտակներում կոչվում է «ակադեմիա»), Ռուսաստանի և Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու համար:

Կտակարարները բավականին շատ միջոցներ են հատկացրել բարեգործական նպատակով: Դա արվել է ինչպես բարեգործական ընկերությունների և տեղի եկեղեցիների, այնպես էլ առանձին անձանց և կտակատարների միջոցով: Բավական խոշոր նվիրաբերություններ անելով, միևնույն ժամանակ, կտակարարները արտահայտել են շատ համեստ ցանկություններ. օրինակ՝ իրենց կողմից մատնանշված եկեղեցուն ամեն տարի իրենց հիշատակին պատարագ մատուցել, իրենց կամ իրենց մերձավորների անուններով կոչել կրթաթոշակներ, հիվանդանոցներ, շինություններ և այլն: Ընդ որում, կտակված միջոցների գերակշռող մասը վերաբերել է ոչ բուն հայկական տարածքներին:

Բացի տնտեսական հանգամանքներից, անհրաժեշտ է նշել նաև բարեգործների հոգեբանական առանձնահատկությունները: Կրոնական բարոյական խրատը կարգադրում է կենդանության օրոք հարստություն չկուտակել, այլ հավաքել այն դրանից հետո: Հավանաբար, դրանով է նաև բացատրվում կտակների մեծ թիվը: Հոգևոր կտակները բարեգործական համակարգում գտել են լայն տարածում և զբաղեցրել են ամուր դիրքեր:

Մեզ հայտնի է, որ Հնդկաստանում, Պորտուգալիայում, Կիպրոսում և Իսրայելում բնակվել և բնակվում են մեծ քանակությամբ հայեր, ովքեր իրենց մահից հետո թողել են բազմաթիվ բարեգործա-

կան կտակներ: Այժմ կցանկանաինք ներկայացնել ձեզ վերոնշյալ երկրներում հայերի թողած կտակների մի մասը:

Մասեհ Բաբաջանի կտակի մասին

Կալկաթայի բնակիչ Համադանցի վաճառական բարեգործ և հայենասեր Մասեհ Բաբաջանը 1794 թ. մայիսի 30-ին իր կտակում¹⁴² նշել է, որ իր ունեցվածքի մի մասը կտակում է Նոր Նախիջևանի հայերին (եկեղեցի, որբանոց, անկելանոց, հիվանդանոց, դպրոց և այլն), մյուս մասն էլ կտակել է Կալկաթայի¹⁴³ տեղաբնակ և գաղթական հայերի կարիքների համար և տեղի քրիստոնյա բանտարկյալներին, ովքեր բանտ են ընկել պարտքերի պատճառով: Հսկայական գույքը, հողային սեփականությունը և պետական արժեթղթերը գտնվում են Բենգալի գլխավոր կառավարչի ձեռքերում, ով համաձայն Մասեհ Բաբաջանի կտակի տարեկան գումար է փոխանցել Նոր Նախիջևանի հոգաբարցուների գրական և բարեգործական հաստատություններին, մոտ 1.300 ռուփի փոխանցել է Կալկաթայի Հայոց եկեղեցու օժանդակության հիմնադրամին, ինչպես նաև Կալկաթայի գերագույն դատարանի կարգադրությամբ մոտ 4.000 ռուփի տարեկան փոխանացվել է առաջին ատյանի բարեգործական միությանը:

1861թ. Կալկաթա է մեկնում Միքայել Նալբանդյանը¹⁴⁴ ստանալու Նոր Նախիջևանի կրթական կենտրոնների համար Մասեհ Բաբաջանի թողած ժառանգությունը: Միևնույն ժամանակ, նա գիտակցում էր, որ Բաբաջանի գույքի կուտակած եկամուտը կազմում էր մոտ 80.000 ռուփի¹⁴⁵, որն պետք է օգտագործվեր համաձայն

կտակի դրույթների, որպես գրական և բարեգործական հաստատություններում, մինչդեռ այդ հաստատությունները մտահոգված էին վերոնշյալ դրույթների անտեսման պատճառով: Մակայն այդ կտակի եկամուտի գումարները Նոր Նախիջևան տեղափոխելը մեծ դժվարությունների հետ կապված լինելու պատճառով հնարավոր չի եղել: Միքայել Նալբանդյանին հաջողվել է մեծ ջանքեր գործադրելուց հետո փոխադրել միայն մի մասը՝ ութսուն հազար ռուփի: Այժմ այդ կտակը հնդկական բանկում հասել է ութ հարյուր հազար ռուփի:

Մեկ այլ բացթողումն կայանում է նրանում, որ չի տեղադրվել Մասեհ Բաբաջանի գերեզմանի շիրմաքարը, դրա պատճառով էլ մեզ ստույգ հայտնի չէ նրա մահվան տարեթիվը:

¹⁴² History of the Armenians in India from the Earliest Times to the Present Day, Mesrovb Jacob, 1897, pg. 105-117

<https://archive.org/stream/historyarmenian00sethgoog#page/n141/mode/2up/search/Baba>

¹⁴³ Տե՛ս ՀԱԱ, ֆ.57, ց.1, գ.544, քք.20-25

Տե՛ս Հայոց լեզվի և գրականության հանրագիտարան, Միքայել Նալբանդյան, http://www.armenianlanguage.am/am/Encyclopedia_Nalbandyan_miqayel

¹⁴⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.5704, ք.13

003755

Ceci est mon testament.

J'institue pour mon légataire universel mon neveu Agop Margossian, à charge d'exécuter les legs particuliers ci-après et notamment la fondation dont il va être parlé; mais je prie Mr. Paul Esmerian d'être mon exécuteur testamentaire avec saisine et de veiller à ce qu'il soit fait usage de ma fortune dans les conditions qui vont être indiquées. Je veux que mon légataire universel verse à Mr. Paul Esmerian une somme de deux millions et cent mille francs (2.100.000) qui sera consacrée à la fondation et à l'entretien d'un établissement scolaire pour les enfants arméniens (garçons). Je veux que mon légataire universel verse à Mr. Paul Esmerian une somme de trois cents mille francs (300.000) qui sera consacrée en souvenir du Jeune Bedros Esmerian, qui était mon pupil, à la fondation et à l'entretien d'un orphelinat destiné aux enfants arméniens (garçons). L'établissement scolaire cité plus haut et l'orphelinat seront contigus et placés autant que possible sous la même direction; pour l'exécution de ces deux volontés, Mr. Paul Esmerian s'adjoindra, si possible, le concours de Mr. Badrig Gulbenkian, Mr. Yervant Tinguir, Mr. Léon Gumushgurdan, Mr. Vahan Esmerian et Agop Margossian, ils décideront du lieu où seront installés ces deux établissements et de l'époque où ces fondations pourront être réalisées; au cas où les personnes que je viens de désigner ne pourraient par suite de circonstances quelconques accomplir la mission que je leur confie, je désire que les établissements en question soient fondés par les soins et sous les auspices, ainsi que sous l'autorité de notre patriarcat de Constantinople. J'entends, en outre, que la part qui me revient dans la maison de commerce que j'exploite actuellement revienne à mon neveu Agop Margossian mais je désire que jusqu'à ce qu'il ait l'âge de 24 ans cette maison continue à être exploitée et conduite par Mr. Paul Esmerian qui fut mon collaborateur et qui est d'ailleurs mon exécuteur testamentaire, cette exploitation se fera de compte à demi entre lui et mon neveu.

Je lègue à la fondation scolaire dont je parle au début de mon testament tous les manuscrits arméniens que je possède.

Je lègue à Mr. Paul Esmerian tous les objets mobiliers se trouvant dans l'appartement de la rue Chauchat composés d'armes diverses objets de vitrine faïences et porcelaines tableaux tapis meubles anciens et modernes etc.. bien entendu ce legs étant bien distinct des sommes qui reviendraient à Mr. Paul Esmerian d'après les livres de la maison de commerce et en qualité de créancier.

Je lègue à mon frère Roupen Margossian la somme de cent cinquante mille francs et je lègue à sa femme Mme. Zakouhi la somme de cinquante mille francs. Je lègue à Mme Eliza Paul Esmerian la somme de cent mille francs. Je lègue à Mme Braxia Esmerian la somme de vingt cinq mille francs.

003756

Je lègue à Mme Yeranouhi Esmerian la somme de vingt cinq mille francs. Je lègue à Mr. Raphael Esmerian la somme de cinquante mille francs. Je lègue à Mr. Arthur Margossian la somme de cinquante mille francs. Je lègue à Mme. Mari Margossian la somme de vingt cinq mille francs. Je lègue à ma nièce Mme. Janive T. Hampartzoumian la somme de cinquante mille francs. Je lègue à ma nièce Mme. Verkine Jevahirdjian la somme de vingt cinq mille francs. Je lègue à Mme. Yefkine Jevahirdjian ou à ses enfants la somme de vingt cinq mille francs. Je lègue à ma nièce Mlle. Isgouhi Nazarethian la somme de dix mille francs. Je lègue à mon neveu Vahan Bakayan la somme de dix mille francs. Je lègue à Mr. Artine Mitoumian la somme de cinq mille francs. Je lègue à la Société Riatsial de Constantinople la somme de vingt mille francs. Je lègue à la Société Hayouhiats dix mille francs. Je lègue à la Société Tebrotsasser dix mille francs. Je lègue à la société de secours aux pauvres bijoutiers arméniens de Constantinople dix mille francs. Je lègue à l'Hôpital arménien de Yédi-kouals la somme de vingt cinq mille francs. Je lègue aux pauvres arméniens de Balata dix mille francs. Je lègue à l'église arménienne de Paris la somme de vingt mille francs. Je lègue aux pauvres du 9^e arron. la somme de dix mille francs. Je désire que la fondation de l'établissement scolaire et de l'orphelinat pour lesquels je lègue les sommes de (2.100.000) et 300.000 n'ait pas lieu avant l'année 1925.

Paris, le 21 Février 1914

(signé): Raphael Margossian

Paris, le vingt et un février mille neuf cent quatorze

(signé): Raphael Margossian.

Հովսեփ Անուշյանի կտակի մասին

Հովսեփ Անուշյանի կտակի¹⁴⁶ մասին մեզ հայտնի է, որ նա մորեղբորից՝ Հակոբ Օղաբաշյանից Կալկաթայում ժառանգել է 4մլն. ֆունտ սեռնինգ: Հայտնի է, որ 1913 թ. նրա կարողությունը հասել է 60 մլն.: Նա իր ունեցվածքը կտակել է եղբոր որդու՝ Ավելիքի ժառանգներին¹⁴⁷, ինչպես նաև 1 մլն. ռուպի Տրապիզոնի եկեղեցուն: Դրանք գտնվում է Լոնդոնի Օստ-Ինտիս ընկերությունում: Ավելիքը Պարսկաստանում ստացել է Խան տիտղոսը և այնուհետև կոչվել Խան-Անուշյան:

Ըստ իրավաբան Սեդրակ Աբգարյանի (Բոմբեյ) ունեցած տեղեկությունների, Խան-Անուշյանն իր կտակը գրել է տվել ոմն Եղիշե վարդապետի ձեռքով՝ հայերեն լեզվով, մասնավորապես 1896թ¹⁴⁸. և հենց այդ թվականին էլ Խան-Անուշյանը տեղափոխվել է Լոնդոն, որտեղ և վախճանվել է 1896թ.:

Խաչիկ Պողոս Աստվածատուրյանի (Խաչիկ Պոլ Չեքրի) կտակի մասին

1926թ. մարտի 22-ին Հոն-Կոնգում մահացել է հնդկահայ մեծահարուստ Խաչիկ Պողոս Աստվածատուրյանը (Խաչիկ Պոլ Չեքրի)¹⁴⁹, որը 20.000 ֆունտ ստերլինգ կտակել է Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցուն և 10.000 ֆունտ ստերլինգ՝ Ս. Էջմիածին Մայր Աթոռին:

1949 թ. փետրվար 20-ին Բոմբեյից ստացած տեղեկությունների համաձայն, Խաչիկ Պոլ Չեքրի երկար տարիներ ապրել է Հոն-Կոնգում, ով ունեցել է մեծ հարստություն: Իր կենդանության օրոք նա 11.000.000 ռուպի նվիրել է Կալկաթայի բողոքական Լա Մարտիներ քոլեջին, որտեղ նա ստացել է իր կրթությունը: Հարստության

ամենամեծ մասը կտակել է Կալկաթայի հայկական Ս. Բազարեթ եկեղեցուն: Թողել է մեծ արժեք ունեցող շենքեր, որոնց վարձի տուկոսները անցնում է Կալկաթանին:

Նա իր քույրերին է կտակել հինգ ու կես մլն.¹⁵⁰ ֆունտ ստերլինգ, ովքեր ապրում էին Լոնդոնում, սակայն նրանց մահից հետո այդ գումարը անցնում է Կալկաթայի հայոց եկեղեցուն, որից 2.000.000-ը գտնվում է Հոն-Կոնգի բանկի Կալկաթայի մասնաճյուղում, իսկ 2.500.000 ֆունդ ստերլինգը՝ Հոն-Կոնգի համանուն բանկում:

Հարություն Նիկողոսի Բլբուլյանի (Բյուլբյուլ) կտակի մասին

Հաջորդ կտակարարը ում մասին կցանականաինք գրել՝ Հարություն Նիկողոսի Բլբուլյանն է (Բյուլբյուլ):¹⁵¹ Նրա մասին շատ քիչ է հայտնի մեզ, միայն այն, որ նա ունեցել է հոգեզավակ, որի մահից հետո իրեն է անցել նրա ողջ ունեցվածքը: Բյուլբյուլը եղել է բապտիստ, 1896 թ. մահացել է և թաղվել է բապտիստների հասարակաց գերեզմանատանը: Համաձայն այն փաստաթղթերի, որոնք պահվում են Հայաստանի Ազգային Արխիվում նրա կտակը գրվել է 1896 թ.¹⁵² հունվարի 27-ին: Ըստ Հարություն Բոլդի նամակի, եթե ժառանգները չհայտնվեն, ապա նրա թողած կարողությունը պետք է անցնեք Սուրբ Էջմիածին Մայր Աթոռին:

Հովհաննես Գրիգորի Աբգարյանի (Աբգար) կտակի մասին

Կալկաթայի ածխահանքերի սեփականատեր Հովհաննես Գրիգորի Աբգարյանը (Աբգար)¹⁵³ 10.000 ֆունտ ստերլինգ կտակել է Ս. Էջմիածին Մայր Աթոռին, այդ գումարը գտնվում է Լոնդոնի Լլոյդ բանկում: Այս մասին, 1924 թ. փետրվարի 5-ին, հայտնում են

¹⁴⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.4600, ք.1:

¹⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.5703, ք.3-ի շրջ.:

¹⁴⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ. 4620, քք. 8-9:

¹⁴⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.5703, ք. 3:

¹⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ. 4556, ք.1-9

¹⁵¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.5703, քք.28-30

¹⁵² Տե՛ս ՀԱԱ, ֆ.420, ց.27, գ.2, քք. 1-22

¹⁵³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4924, 5640, 5630

Արգարի զավակները Վեհափառին գրած իրենց նամակում: Ուսումնասիրելով արխիվային նյութերը գտնվեցին այնպիսի փաստաթղթեր, որոնցում նշված էին, որ խոսքը 58.000¹⁵⁴ անգլիական ոսկու մասին է:

Առաքել-Հարություն Աղամալյանի (Աղամալյանց) կտակի մասին

Համաձայն 1948 թ. տեղեկությունների, մոտավորապես 1880-1882 թթ. Կալկաթայում վախճանվել է Առաքել-Հարություն Աղամալյանը (Աղամալյանց), ծնունդով Շուշիից: Նա մահից հետո թողել է մեծ ժառանգություն՝ անշարժ և շարժական գույք, ինչպես նաև թղթադրամ: Մեզ հայտնի է, որ գումարը գտնվում է Բենգալի կենտրոնական բանկում: Նրա ժառանգությունը գնահատվում է 70 մլն. հնդկական ռուփի¹⁵⁵: Աղամալյանցը իր ժառանգությունը թողել է իր եղբոր երեխաներին:

Եղիա Ամիրխանյանի կտակի մասին

Եղիա Ամիրխանյանը, Մադրասում, 1864 թ.¹⁵⁶ իր ժառանգների է կտակել 30 լաք ոսկի ռուբլի: Գումարը գտնվում է Ավինգլենտ բանկում: Դրանից բացի թողել է կալվածքներ, հանքեր և դաշտեր:

Ռաֆայել Մարկոսյանի կտակի մասին

Վախճանվել է 1920 թ. նոյեմբերի 19-ին: Հիմնել է «Ռաֆայել Մարկոսյան» բարեգործական ընկերություն, որի միջոցներով Հա-

յաստանում պիտի բացվեն արհեստագործական դպրոցներ¹⁵⁷: Այդ նպատակի համար նա հիմնադիր ժողովին է տրամադրել արժեթղթեր, որոնք 1922թ. դեկտեմբերի դրությամբ կազմել են 2.731.760 ֆրանսիական ֆրանկի գումար¹⁵⁸: Ռաֆայել Մարկոսյանի կտակում նշված է, որ նա 365.000 ֆր. կտակում է Հայաստանում բացվելիք արհեստագործական դպրոցների ստեղծման համար, 195.000 ֆր.՝ որբանոց բացելու, 1.000.000 ֆր.՝ հայ չքավոր ուսանողների ուսանողական թոշակների հատկացման, տարեկան 1500ֆրանկի եկամուտ, որ պիտի բաշխվի Փարիզում գտնվող հայ աղքատներին: Կտակում առկա են նաև 24 հայկական ձեռագրեր¹⁵⁹:

¹⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 5631, 5632, 5633, 5634

¹⁵⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 4620, քք . 9-10

¹⁵⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց.1, գ. 5703, ք. 31

¹⁵⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ.113, ց.3, գ.82, ք.347:

¹⁵⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.643:

¹⁵⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.113, ց.3, գ.228, քք.1-34:

№. 1367/20

15 0 զոսոսո 9 23 152

25

004310

Վսեմաբուր
ՉԱՐՄԵԼ ԷՅ. ԵՈՐՏՈՒԿԵԵԵ
Մտնազահ "զգ. Պատուիրակութեան եւ.
Եւղամ "Ռաֆայէլ Մարկոսեան ընկերակցութեան"
Բ Մ Ի Զ

Պատուական Միրոնի,
Զեր 1923 Փետրուար 24 Քուակիր Պարտուագրին պատաս-
խաներ էինք Մարտ 15ին: Մեր Բղթակցութեան Նիւթն էր "Մարկոսեան Կտա-
կին" ապահովութեան համար մեր ծառանգաւորաց Վարժարանին իբրեւ Կտակ-
ընկալ Մարմին տրամադրուիւմ, բուրոզին առժամանակեայ կերպով, բայց
"Նիւթական օ աւղակութիւն մը ստանալու. ապամտաւ":

Այլից ի վեր կսպասէինք աղւոր լուրեր ստանալ Մարկու-
եան Կտակիրազարական տուրք՝ ազատ մնացած ըլլալու, մասին, եւ ահա
"Ապագայ" Շարքաբերի 30. Ընդ 28ի Քիւն մէջ տեսանք փոքրիկ տեղեկա-
գիտ մը, որ կը քահագրուէ: Մեզ: Այնպէս որ, կը փութանք Ձեր Վսեմու-
թեան ուշադրութիւնը հրահրել այդ տեղեկագրին վրայ եւ Ձեզ յիշեցնել
մեր Մարտ 15 Քուակիր Նամակին սա տողերը - "Ձեր Վսեմութեան կողմէ
եղած հոստման համաձայն թէ՛ առժամաբար Նիւթական օգնութիւն մը պիտի
ստանայ Վսեմ, պիտի մախքի որ հանգուցեալի յիշատակին հարկ մը աւե-
լի ընծայուած ըլլալու. համար, եթէ յարմար կը դատուի, բաղձացուած
յաջողութիւնը ձեռք բերուելի յետոյ, միանգամ ընդ միտք զուժար մը
ընդհուր Ն. Յակոբեանց Վսեմին, պայմանաւ որ մեր "Ընդանգաւորաց"ին
մէջ, որը ընդհանրապէս որբերէ կը բաղկանայ, հինք Մարկոսեան Սաներ
դաստիարակուէին միտք":

Ձեւք զիտեր թէ Կտակիրազար Մարմինը ինչ ինքնեցաւ.
մեր այս առաջարկի մասին, կամ յիշ կարգադրութիւններ եղան: Բայց
բանի որ "Ապագայ"ի մէջ հրատարակուած տեղեկագրին Առաջին երկու յօդ-
ուածներուն համեմատ ուսանող պահելու եւ. Դարոք բանալու ինդիքները
հրատարակ զրուած են, շատ զոհ պիտի ըլլանք, եթէ մեր օրած առաջարկը-

№. 1367/20

- 2 -

15/8/23

102

26

004311

Նկատի աղնուի եւ. զործնական կարգադրութիւն մը ըլլայ յառաջիկայ Դարո-
ցական տարւոյն առհիւ:

Պարձեալ, հրատարակուած տեղեկագրին Դ. Գօրուածին մէջ յիշ-
ուած 24 հայերէն ջեռագիրները կը ինդրեն որ յանձնուին Ն. Յակոբայ
հայերէն ջեռագրաց Մատենադարանին: Ի յիշատակ Մարկոսեանին:

Գիտէ Ձեր Վսեմութիւնը թէ՛ առնաբահի մէջ, կ'ըմբռնեն ետքը
Նախնեաց զործերուն: Զեռագիր հաւաքածոյից ամենէն ճոխը Ն. Յակոբայ
Մատենադարանին է. կարծէ ուշեմն որ, ի պէտս բուրոք հասկցող, զնահա-
տող եւ. բանասէր հայոք, եւ. հայազէտ օտարներու, ճոխացնենք մեր հաւա-
քածոն, յօգուտը հայագիտութեան: Երդէն բարեյախառակ Մարկոսեան: ալ այդ
նպատակ եւ. նպատակով կը զնէր Նախնեաց ջեռագիրները եւ. կը հաւաքէր:

Վստահ ենք որ թէ Ձեր Վսեմութեան եւ. թէ միւս Մեծապարզ
Կտակիրազարներու. ընտրուի. պիտի հանդիպիր Ներկայիս յայտնուած մեր
բաղձան ընտրուին:

Մարթելով Ձեր Վսեմութեան յաջողութիւններ, կը Նուիրենք
Ձեզ մեր սիրոյ ողջոյններն ու. օրհնութիւնները:

ԱՆ. ԵՐՈՐ
ՊՍՏՈՒՄՔ ԵՈՐՏՈՒԿԵՐ
Երանաշահ

Յ. Գ. Ընդհանրապէս ընդունեցինք Ձեր Վսեմութեան օգոստ,
2 Քուակիր պատուական Նամակը:

Գրիգոր Մելքոնյանի կտակի մասին

Վախճանվել է 1920 թ.¹⁶⁰ հունիսի 2-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս)։ Քանի որ նա օսմանահպատակ է, ըստ օսմանյան օրենքի, նա իր հարստության մի որոշ մասը միայն կարող է կտակել, ուստի հեռագրել էր Պ.Նուբարին ու Ավ.Ահարոնյանին, խնդրելով իրեն հայկական քաղաքացի ճանաչել, որպեսզի իր ողջ հարստությունը մոտ 300 հազար ոսկի, թողնի Հայաստանի Հանրապետությանը¹⁶¹։

Հիշատակելի են՝ Կիպրոսի Մելքոնյան որբանոցը (գտնվում է Նիկոզիայի շրջակայքում), Կիպրոսի Մելքոնյանի անվամբ երկու դպրոց-վարժարանները (մեկը՝ արական, մյուսը՝ իգական), Երուսաղեմի պատրիարքարանին կտակած 1000 եգիպտական լիրը՝ աշակերտներ պահելու համար, կտակած 3000 եգիպտական լիրը՝ Երևանի պետհամալսարանին հայ գրականություն և պատմություն ուսուցանելու համար։ Կտակում նշված է նաև, որ Կիպրոսում հիմնվեն հայկական դպրոցներ¹⁶²։

Կարապետ Մելքոնյանի կտակի մասին

Ըստ 1920 թ.¹⁶³ մարտի 31-ին գրած կտակի, որ գտնվում է Ալեքսանդրիայի Հելլենական հյուպատոսարանում, 12 հազար ոսկի և այլ իրեղեն հարստությունը՝ փոխադրելի և ոչ փոխադրելի, կտակել է իր ազգին¹⁶⁴։ Ուներ Հելլոնական հպատակություն¹⁶⁵։ Ցանկանում էր ստանալ ՀՀ քաղաքացիություն, որպեսզի իր կտակած գումարն ու անշարժ գույքը մնար Հայաստանին¹⁶⁶։

¹⁶⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.559:

¹⁶¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.558, քք.20-21:

¹⁶² Տե՛ս ՀԱԱ, ֆ.20, ց.4ա, գ.2, քք.1-95:

¹⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.558, քք.20-21, 50-51:

¹⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.559:

¹⁶⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ.20, ց.4ա, գ.2, քք.1-95:

¹⁶⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ.122, ց.2ա, գ.58, քք.1-18; գ.70, քք.1-27; գ.89, քք.1-62:

Ավետ Սարգսի Սկրտչյանի կտակի մասին

Նոր Ջուղայեցի Ավետ Սարգսի Սկրտչյանը 1921 թ. հունվարի 31-ին, Կալկաթայում գրել է իր կտակը¹⁶⁷։ Վախճանվել է 1925 թ. հունիսի 22-ին, Լոնդոնում։ Իր մահից հետո, տարեկան 1000 ռուպի կտակել է Կալկաթայի հայոց եկեղեցու հանձնաժողովին, ովքեր ամեն տարի Ս.Ծննդյան տոներին այդ գումարից պիտի վճարեն Ն.Ջուղայի կամ նրա մերձակա բնակավայրերի հայ աղքատ բնակչությանը, տարեկան 1000 ռուպի՝ Կալկաթայի հայոց եկեղեցու հանձնաժողովին, ովքեր ամեն տարի Ս.Ծննդյան տոներին այդ գումարից պիտի վճարեն Կալկաթայի կամ նրա մերձակա բնակավայրերի հայ աղքատ բնակչությանը։

Խոջա Ղազարի Գրիգորյանի կտակի մասին

Խոջա Ղազարի Գրիգորյանը Բոմբեյում, թողել է 850.000 ռուպի ժառանգություն։ Վախճանվել է 1750 թ.¹⁶⁸։ 1864 թ. Ղազարի եղբայրը մեկնել է Հնդկաստան, եղբոր թողած ժառանգությունը ստանալու, սակայն ճանապարհին վախճանվում է, թողնելով 140.000 ռուպի Կալկաթայի, թե Բոմբեյի անգլիական բանկում։ Այդ ժառանգությունից որոշ մաս ստացել են Կ.Պոլսի հիվանդանոցը և Հայոց եկեղեցին։

Սարգիս Գալուստի Սկրտումյանի կտակի մասին

Ծնվել է Պարսկաստանի Շիրազ քաղաքում։ Վերաբնակվել է Հնդկաստանի Ռանգուն քաղաքում։ Վախճանվել է 1905 թ. ապրիլի 25-ին և թաղվել Ռանգուն քաղաքի հայ գաղութի սեփական հանգստարանում։

¹⁶⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.4564, քք.1-30:

¹⁶⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.4567, քք.1-18:

3

Rangoon _____ 192 .

որչախան Ջոնի շարք թիւ 1170-ը ու Երևան
Ջոնի թիւ 1170-ը:

Կամ խոսքի յարմարութեամբ

Վերջին յիշատակ

Կառավարիչ Քառասուն Հայոց Կ. Երևան

Source: ՀԱԱ, ֆ.409, ց.1, գ.3778

Գևորգ Աղա Մանուկյանը, 1825 թ. Կալկաթայում, ի օգուտ
Ս.Էջմիածնի կտակել է 25.000 ռուպի: Վախճանվել է 1882 թ. հուն-
վարի 1-ին¹⁷⁰: 1898 թ. հունվարի 2-ի գրության համաձայն Մանկա
Պետերբուրգի միջազգային առևտրական բանկը 11.140¹⁷¹ ռուբլի է
փոխանցել պետական բանկի Երևանյան մասնաճյուղին՝ այն փո-
խանցելու Ս.Էջմիածնի սինոդին¹⁷²: Մայր Տաճարի սինոդը հետա-
մուտ է եղել որպեսզի Գ.Մանուկյանի կտակած գումարների տո-
կոսները փոխանցվեն Լոռերում ռուսական դեսպանի միջոցով¹⁷³:

¹⁷⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ.56, ց.7, գ.1656, ք. 1-22

¹⁷¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.57, ց.2, գ.1549, ք.1-3:

¹⁷² Տե՛ս ՀԱԱ, ֆ.56, ց.7, գ.1656, ք.19:

¹⁷³ Տե՛ս ՀԱԱ, ֆ.57, ց.3, գ.162, ք.1-42:

МИНИСТЕРСТВО
ВНУТРЕННИХ ДѢЛЪ.

ДЕПАРТАМЕНТЪ
ДУХОВНЫХЪ ДѢЛЪ
ИНОСТРАННЫХЪ ИСПОВѢДАНІЙ.

19^{го} Сентября 1891 г.

№ 4720

Слѣдуетъ извѣстить
о томъ, что въ 17 2549 отъ 11140
губ. 30 к.].

6 2 1891 (6)

Изъ Священноначалія Архіепо-Томарскаго Синода.

въ послѣдствіи додѣланы Патріарха Католика-си и епископа Архіепа о полученіи прообразцовъ, начиная съ 1 Января 1892 г., съ ксерокопій, выданныхъ Губернатору Архидіакону Священноначалія Синода, Архіепископа Департамента Министерствъ Иностранныхъ Дѣлъ доставить копію въ 17 2549, изданный П. П. М. Ротшильдъ и Синодомъ, въ Сентябрь, въ 11140 г. 30 к., поклау Священноначалія Архіепо-Томарскаго Синода.

Крепостная или снѣжъ означенный чеки. Департамента Иностранныхъ Исполнѣній имѣютъ часть уведомить Главнаго Синода, что нѣкоторые валюты по снѣжу чекъ не могутъ быть проканцеляры лишь по учиненіи Синодомъ прообразцовой на нихъ П. Петербургскаго Международнаго Коммерческаго Банка радиши въ оборотѣ копій съ чека, имѣющей быть выданный на поименнаго разбойной бумажѣ | достоянствомъ въ 13 в. 30 к.].

Изъ этого Департамента посылать, что по полученіи помянутыхъ Коммерческаго Банка чека, валюты съ копій, означенною обрѣзочною подписью, таковыя будутъ проведены въ Сентябрь 11140 г. 30 к. за удержаніемъ изъ этой сумы телеграфныхъ расходовъ.

По Завѣдующаго.

Source: ՀԱԱ, ֆ.56, գ.7, զ.1656

Հովան Պապեի կտակի մասին

Հովան Պապեի Թիֆլիսից գաղթել է Կալկաթա, որտեղ և վախճանվել է: Իր կտակում որոշակի գումար է կտակել Կալկաթայի հայոց եկեղեցուն, հայ քահանաներին, աղքատներին, Թիֆլիսի Մուղնու Ս.Գևորգ եկեղեցուն և այլն¹⁷⁴: Թողել է նաև տասնյակ միլիոն ռուբլու կարողություն, որի մի մասը բարեգործության նպատակների համար, մյուս մասը Ս.Էջմիածնի վանքին, հայկական դպրոցներին և այլն¹⁷⁵:

Տեր Խորեն Ծ.Վարդապետ Լազարյանի կտակի մասին

Իր կտակի մի որոշ մասը հատկացրել է Երուսաղեմի Ս.Հակոբ հայ առաքելական եկեղեցուն հայոց լեզվի և պատմության վերաբերյալ ու նաև հին ձեռագրերի հրատարակություններ իրականացնելու համար: Նաև կտակում նշել է, որ կտակի որոշ մասը տնօրինի Ամենայն հայոց Կաթողիկոսը: Կտակից առաջացած տոկոսների եկամուտները տնօրինել է ծախսել զուտ հայկական հրատարակություններ իրականացնելու նպատակով:

Հովհաննես Կումըշյան (Գումըշյան, Քումըշյան) կտակի մասին

Կտակել է երեք կալվածքներ, որոնց եկամուտի 40%-ն ըստ կտակի հատկացվել է Կեսարիայի որբանոցներին, 10%-ը՝ Ս. Էջմիածնին, 10%-ը՝ Երուսաղեմին, 15%-ը՝ աղքատ երեխաներին, 5%-ը՝ Ազգային հիվանդանոցին և այլն¹⁷⁶:

¹⁷⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, գ.1, զ.3852, ք.1-3:

¹⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ.56, գ.17, զ.21, ք.1-49:

¹⁷⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ.409, գ.1, զ.2287, ք.1-3:

Extrait des Minutes du Greffe des
Actes Notariés du Tribunal Mixte
d'Alexandrie

N° 1316
Oct. 1925
N° 6514 du Reg.

Acte de cession et de Parausfert.

L'an mil neuf cent vingt cinq et
le dix huit huit D'écembre à 11 h. am.

Devant le Greffe des Actes Notariés du
Tribunal Mixte de 1^{re} Instance
d'Alexandrie

Pardevant nous soussigné
Greffier près le dit Tribunal fai-
sant fonction de notaire et en pré-
sence des sieurs:

- 1) Ahmed Abotel Aziz, fils d'Alidel
Aziz agent d'affaires
- 2) Neghib el din fibote assaad en
plaine

deux demeurés et domiciliés à A-
lexandrie

Ces deux sieurs ont requis aux effets de pré-
sentes réconnaissent toutes les quali-
tés requises par la loi et font serment
sur l'identité des comparans.

20 R
1117
N° 1316
2980
360
3240
28.12.25

- 5. L'ensemble porté seul n° 6 leg. 800
- - - - 7 leg. 600
- - - - 8 leg. 2500
- Les livres seuls lettres B. leg. 160000
- - - - C. leg. 70000
- Les notes - - D. leg. 25000
- Les livres - - E. leg. 30000
- - - - F. leg. 700
- Les monnaies de fabrique B leg 5000

Dont acte signé après lecture par
nous donné et traduit en lan-
gue arabe par Mr. l'Interprète
arabe.

Le présent acte contient vingt et
un mots et six lignes.

signés: arch. Zaven Der Yegh-
ayan; St. Karyan; Haazig. Ina-
jetian; Garalad Melkounian; A. Aziz
N. Sian.

L'Interprète (ar.) F. Awad.

Le Greffier (ar.) Hourissou
filie de Constantinos - Junnot regis-
tré au titre total - filie mètre carré.
filie Nord - filie Arminian - (c. off.)



El Mon Gen d'Arminian de Beauvais et
Grand le 27.12.25

10 Greffier
Hourissou

Վերջաբան

Ժառանգման ինստիտուտը իրավունքի, մասնավորապես, միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում, հայտնի է հնագույն ժամանակներից: Դրա նորմերով կարգավորվում են մահացածի գույքային իրավունքները և պարտավորությունները իրավունքի այլ սուբյեկտներին փոխանցելու հարաբերությունները: Յուրաքանչյուր ոք ինքն է տնօրինում իր կարողությունը, թե ում է այն անցնելու՝ համաձայն իր կամքի, իր մահից հետո: Յանկացած անձ զբաղվելով գործարարությամբ կամ աշխատելով տարբեր ոլորտներում ձեռք է բերում որոշակի սեփականություն: Որոշ ժամանակ անց, նրա առջև ծառանում է մի հարց, թե ում և ինչ հաջորդականությամբ պետք է անցնի իր գույքը: Այս խնդիրը դառնում է էլ ավելի բարդ, պայմանավորված լինելով միգրացիայի կտրուկ աճի, խառը ամուսնությունների, ընդլայնված ձեռնարկատիրական գործունեության իրականացմամբ, ներառելով միջազգային քաղաքացիական ոլորտը, որի հետևանքով անձին պատկանող գույքը կամ գույքի իրավունքը, գտնվում են տարբեր երկրներում և ենթարկվում են անհամապատասխան իրավական համակարգերով: Տվյալ իրավիճակը ստեղծում է անհրաժեշտություն ապահովելու ժառանգների շահերի և այլ շահագրգիռ կողմերի հավասարությունը: Պատմության մեջ ըստ օրենքի ժառանգումը առաջացել է ըստ կտակի ժառանգումից առաջ և դարեր շարունակ գտնվել է ժառանգական իրավունքի կենտրոնում: Միաժամանակ, մարդկային քաղաքակրթության զարգացմամբ բացահայտվում է այն, որ ըստ կտակի ժառանգության իրավական կարգավորման նկատմամբ հետաքրքրության աճը անհատի զարգացման հետևանքներից մեկն է:

19-րդ դարի երկրորդ կեսին օտարերկրյա տարրով ժառանգական գործերի քիվը անընդհատ ավելանում էր, ինչի անուղղակի պատճառը բնակչության միգրացիան էր: Պետք է նշել, որ հայկական գաղութներում լայն տարածում գտավ բարեգործական կտակների ինստիտուտը, ինչը վկայում է Հայրենիքից դուրս ապրող հայերի կողմից ժողովուրդ, հայրենիք հասկացությունների խորը ար-

ժեքային վերաիմաստավորման, ինչպես նաև ոչ միայն իր ընտանիքին ու գերդաստանին, այլև Հայաստանին, ողջ հայ ժողովրդին, որոնցից նրանք իրենց չեն տարբերակել, որևէ իրական և կոնկրետ աջակցություն ցուցաբերելու մասին: Մարդասիրական գործունեության մասն միջոցը դարձավ ամենատարածված միջոցներից մեկը: Սակայն աշխարհասփյուռ հայկական տարաբնույթ կտակները, հարակից բազմաթիվ փաստաթղթերով հանգեցրեցին մի շարք եզրակացությունների, որոնք լուրջ ուսումնասիրման և վերլուծման կարիք ունեն: Տվյալ հետազոտության մեջ մանրամասն ուսումնասիրվեց Իսրայելի, Հնդկաստանի, Պորտուգալիայի և Կիպրոսի ըստ կտակի ժառանգության ոլորտի ինստիտուտը՝ համաձայն իրենց երկրների օրենքների: Հետազոտության մեջ դիտարկվել են ժառանգության հիմնական սկզբունքները վերոնշյալ երկրներում՝ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգների իրավունքների, շահերի ապահովումը, կտակելու ազատությունը, ժառանգատուի ընտանիքի անդամների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ժառանգության պաշտպանությունը և այլն: Փորձ արվեց վեր հանել Իսրայելում, Հնդկաստանում, Պորտուգալիայում և Կիպրոսում գտնվող հայերի կտակների իրավական ասպեկտները՝ սահմանված տվյալ երկրների օրենսդրությամբ, միջազգային իրավունքով, միջազգային մասնավոր իրավունքով և միջազգային պայմանագրերով: Սակայն վերոհիշյալ հայկական կտակներում առկա է օտարերկրյա տարրը, որը առաջանում է մի շարք կոլիզիոն իրավիճակներ, չնայած որ ժառանգության տեսակները վերոհիշյալ երկրների իրավական համակարգերում մասն են իրար, դրանք բովանդակությամբ էապես տարբերվում են և արդյունքում տարբեր երկրներում գտնվող գույքի նկատմամբ պետք է գործի այլ իրավական համակարգերի օրենսդրություն:

Ժառանգական իրավունքում օտարերկրյա տարրը օբյեկտիվորեն առաջացնում է մի շարք կոլիզիոն իրավիճակներ, հիմնականում՝ կոլիզիաները ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության ոլորտում, կամ այդ ոլորտներում շարժական և անշարժ գույքի ժառանգման իրականացման կոլիզիաները: Չնայած որ պետություն-

ների իրավական համակարգերում ժառանգման տեսակները նույնական են, դրանք ըստ բովանդակության զգալիորեն առանձնանում են, ինչը պայմանավորված է ազգային ավանդույթներով, հաստատված կենսակերպով և այլ գործոններով: Արդյունքում, այն գույքը, որը գտնվում է տարբեր երկրների տարածքում, հայտնվում է այն իրավական համակարգերի ենթակայության ներքո, որոնք ունեն տեսանելի հակասություններ կամ ընդհանրապես չեն համընկնում, ինչը զգալիորեն խոչընդոտում է ժառանգական իրավահաջորդության ապահովումը: Միջազգային ժառանգական հարաբերությունների ոլորտում գլխավոր կոլիզիոն սկզբունք է հանդիսանում այն երկրի իրավունքը, որտեղ գտնվում է ժառանգատուի վերջին մշտական բնակության վայրը, եթե կիրառվում է ըստ օրենքի ժառանգությունը: Այլընտրանքային կոլիզիոն սկզբունքը նախատեսված է ըստ կտակի ժառանգության դեպքում: Առաջին հերթին, ժառանգատուն իրավունք ունի՝ ինքնուրույն ընտրելու համապատասխան երկրի կիրառվող իրավունքը, իսկ այդպիսի ընտրության բացակայության դեպքում կիրառվում է ունիվերսալ կոլիզիոն սկզբունքը՝ այն երկրի իրավունքը, որի քաղաքացին է հանդիսանում ժառանգատուն: Այդ նույն սկզբունքներն են կիրառվում նաև անձի՝ կտակ կազմելու և վերացնելու ունակությունը որոշելու համար, ներառյալ՝ կտակը վերացնելու ձևերը:

Այս ոլորտում պրակտիկայի բազմազանությունը և բարդությունները, որոնք ծագում են որոշակի ժառանգության գործերը քննելիս, բացատրվում են ժառանգական իրավունքի ոլորտում ներքին օրենսդրության նկատելի տարբերություններով: Դա դրսևորվում է նրանով, որ տարբեր երկրներում ոչ միատեսակ է որոշվում ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգների շրջանակը, սահմանվում են կտակի ձևերի վերաբերյալ տարբեր պահանջներ, գոյություն ունեն ժառանգության գույքի բաշխման տարբեր համակարգեր և այլն:

Ժառանգներ են հանդիսանում կտակում նշված անձինք, կամ ըստ օրենքի ժառանգները: Անձի ժառանգ դառնալու հնարավորությունը կախված չէ անձի գործունակության վիճակից և քաղաքա-

ցիությունից: Ըստ օրենքի ժառանգության դեպքում ժառանգներ կարող են լինել այն քաղաքացիները, որոնք կենդանի են ժառանգատուի մահվան պահին, ինչպես նաև ժառանգատուի երեխաները, որոնք ծնվել են ժառանգատուի մահից հետո: Ըստ կտակի ժառանգության դեպքում ժառանգներ կարող են լինել այն քաղաքացիները, որոնք կենդանի են ժառանգատուի մահվան պահին, ինչպես նաև այն քաղաքացիները, ովքեր սաղմնավորվել են ժառանգատուի կենդանության ժամանակ և ծնվել են նրա մահից հետո:

Ժառանգելու իրավունքը կախված չէ ժառանգի քաղաքացիությունից: Ժառանգներ կարող են լինել ինչպես տվյալ երկրի քաղաքացիները, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք: Ժառանգելու իրավունք ունեցող անձանց շրջանակը ըստ օրենսդրության սահմանափակ է: Եվ ըստ օրենքի, և ըստ կտակի ժառանգելու իրավունք չունեն այն քաղաքացիները, ովքեր կատարել են կանխամտածված իրավախախտումներ՝ ուղղված ժառանգատուին, ժառանգներից որևէ մեկին կամ կտակում արտահայտված ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, նպաստել են կամ փորձել են նպաստել իրենց կամ այլ անձանց՝ որպես ժառանգ հրավիրելու համար, կամ նպաստել են կամ փորձել են նպաստել իրենց կամ այլ անձանց հասանելիք ժառանգության բաժինը ավելացնելու համար, եթե այդ հանգամանքները հաստատված են դատական կարգով՝ անարժան ժառանգները: Ընդհանուր առմամբ, այն հիմքերը, որոնցով ժառանգը կորցնում է ժառանգելու իրավունքը, պահպանված են: Օրենքով սահմանվում է, որ անարժան ժառանգներ են ճանաչվում այն քաղաքացիները, ովքեր իրենց դիտավորությամբ գործողություններով նպաստել են կամ փորձել են նպաստել իրենց կամ մտերիմ անձանց որպես ժառանգ հրավիրելու համար:

Այսպիսով, անարժան ժառանգների վերաբերյալ օրենսդրությունը կիրառվում է՝ ապահովելու ժառանգելու սահմանների համապատասխանությունը ոչ միայն ժառանգատուի իրական կամքին (կտակը թաքցնելու կամ ժառանգատուի վերջին կամքի արտահայտմանը խոչընդոտելու դեպքերում), այլև՝ ենթադրյալ կամ-

քին (ժառանգատուի կամ ժառանգներից որևէ մեկի հանդեպ անօրինական արարք կատարելու դեպքում), դրանով իսկ կարգավորելով ըստ օրենքի ժառանգների շրջանակը, ինչը որոշվում է բացառապես ընտանեկան-ազգակցական հատկանիշով: Վերջինս հանդիսանում է ըստ օրենքի ժառանգության կարգավորման սահմանների անհատական դրսևորումներից մեկը:

Սույն հետազոտության մեջ նշվում էր, որ օտարերկրյա տարրերը բաժանվում են երեք խմբի՝ իրավահարաբերության սուբյեկտները դառնում են միջազգային սուբյեկտներ, եթե նրանք հանդիսանում են տարբեր պետությունների ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ժառանգական իրավահարաբերության սուբյեկտներ են հանդիսանում այն ժառանգները, ովքեր իրավիրվում են՝ ընդունելու իրավահարաբերության, այդ թվում՝ ժառանգության օբյեկտները, ինչն առաջանում է արտասահմանում գտնվող գույքի առումով, և ժառանգական իրավահարաբերության օբյեկտ է հանդիսանում ժառանգությունը (ժառանգվող գույքը)՝ իրավաբանական փաստերը, որոնք հիմք են ծառայում ժառանգական իրավահարաբերության առաջացման, փոփոխման կամ վերացման համար, որոնք տեղի են ունեցել արտասահմանում:

Կոլիզիոն խնդիրը այն իրավունքի ընտրության խնդիրն է, որը ենթակա է կիրառման այս կամ այն իրավահարաբերության նկատմամբ. այն բնորոշ է, առաջին հերթին, միջազգային մասնավոր իրավունքին: Ժառանգական հարաբերությունների կոլիզիոն-իրավական կարգավորում պետք է համարել կոլիզիոն-իրավական միջոցների օգնությամբ նպատակաուղղված ազդեցությունը օտարերկրյա տարրով ժառանգական հարաբերությունների վրա՝ այն կարգավորելու և զարգացնելու նպատակով: Կոլիզիոն նորմով, որպես կանոն, իրավակիրարկողը ուղղորդվում է դեպի համապատասխան իրավական համակարգի նյութական նորմերը:

Օտարերկրյա տարրով ըստ օրենքի ժառանգության գլխավոր խնդիրն է՝ գտնել այն իրավական համակարգը, որի հիման վրա հնարավոր է որոշել պարտադիր ժառանգների շրջանակը և ժառանգությունն ընդունելու համար նրանց հրավիրելու հերթականու-

թյունը, ինչպես նաև որոշել նրանց շրջանակը, ովքեր իրավունք չունեն ընդունելու ժառանգությունը:

Համապատասխան իրավակարգի որոշելը բարդանում է նրանով, որ ժառանգատուի գույքը կարող է գտնվել տարբեր երկրներում, որտեղ կան տարբեր սահմանումներ գույքի իրավունքների ծավալի և դրանց պաշտպանության վերաբերյալ: Որպես կոլիզիոն չափանիշ կարող են օգտագործվել ժառանգատուի «վերջին բնակության վայրի օրենքը», «քաղաքացիության երկրի օրենքը», «գույքի գտնվելու վայրը սահմանումը»:

Կոլիզիոն նորմը կիրառելիս շատ կարևոր է ճիշտ որոշել այն հարցը, թե իրավունքի ինչ տեսակ պետք է կիրառվի և ինչ հարաբերություններ պետք է կարգավորվեն: Որքան ճշգրիտ և միատեսակ է կիրառվում կոլիզիոն նորմը, այնքան արդյունավետ է մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը մասնավոր-իրավական հարաբերություններում:

Ըստ օրենքի ժառանգությունը առանց կտակի ժառանգությունն է (intestate succession): Նման իրավիճակ առաջանալու դեպքում գործող օրենսդրությամբ պետք է ճիշտ որոշել վիճելի գույքը ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը, այսինքն՝ դրանով իսկ իրականացնել ժառանգատուի բացակայող կամքը: Ժառանգների շրջանակը որոշելու հարցը հանդիսանում է ժառանգական իրավահաջորդության մեջ հիմնարար խնդիրը: Հետևաբար, առաջին հերթին, անհրաժեշտ է պարզել, թե որ պետության իրավունքով է հնարավոր կանոնակարգել հարաբերությունները ժառանգության ոլորտում: Որպես կանոն, նման դեպքերում ընտրության հիմքում կամ ժառանգատուի քաղաքացիությունն է, կամ վերջին բնակության վայրը: Տարբեր երկրների օրենսդրություններում ըստ օրենքի ենթադրյալ ժառանգների շրջանակը և նրանց՝ ժառանգման հրավիրելու հերթականությունը տարբեր են:

Նշված կոլիզիաների լուծման հիմնական եղանակներն են՝ համապատասխան կոլիզիոն նորմերի ամրագրումը ազգային օրենսդրությունում, ինչպես նաև ընդհանուր նորմերի մշակումը համընդհանուր և տարածաշրջանային միջազգային իրավական

փաստաթղթերում: Հարկ է նշել, որ առավել տարածված է համարվում հենց վերջին եղանակը, քանի որ այն ոչ միայն քույլ է տալիս՝ ստեղծելու օտարերկրյա բաղադրիչով բարդացված ժառանգման կարգավորման ոլորտում միասնական իրավական նորմ, այլև հաշվի է առնում ժառանգական հարաբերությունների բոլոր տեղային առանձնահատկությունները:

Анотация

Данное исследование посвящено анализу завещаний армян, находящихся за рубежом. В работе раскрыты теоритические и практические аспекты правового регулирования правоотношений, возникающие при наследовании по завещанию с наличием иностранного элемента. В исследовании проанализированы соответствующие правовые нормы таких стран, как Израиль, Индия, Португалия и Кипр, а также рассмотрены вопросы наследования по завещанию в международном частном праве. Основным способом регулирования международных наследственных отношений с иностранным элементом является закрепление соответствующих коллизионных норм в национальном законодательстве, а также выработка общих норм в универсальных и региональных международно-правовых документах. Следует отметить, что наиболее популярным считается именно последний способ, так как он позволяет не только создать единую правовую норму в области регулирования наследования, осложнённого иностранным элементом, но и учитывает все местные особенности наследственных отношений.

Summary

This research focuses on the analysis of wills of diaspora Armenians. The paper studies theoretical and practical aspects of legal regulation of relations arising in the testamentary succession involving foreign element. The research analyses relevant legal provisions of Israel, India, Portugal and Cyprus, as well as testamentary succession regulations in private international law. The basic way to regulate international succession laws involving foreign inherent element is consolidation of relevant conflict rules in national legislation, as well as development of common standards of common and regional international legal instruments. It is worth noting that the latter is considered as the most popular method, since not only it allows to create a single legal provision in the regulation of inheritance, complicated by a foreign element, but also it takes into account all the local features of hereditary relations.

1. ՀԱԱ, ֆ. 409, g.1, q. 5630
2. ՀԱԱ, ֆ. 409, g.1, q. 5640
3. ՀԱԱ, ֆ. 409, g.1, q. 4924
4. ՀԱԱ, ֆ.409, g.1, q.5704
5. ՀԱԱ, ֆ. 409, g.1, q. 5703
6. ՀԱԱ, ֆ.409, g.1, q. 4620
7. ՀԱԱ, ֆ.409, g.1, q.4600,
8. ՀԱԱ, ֆ.409, g.1, q.4567
9. ՀԱԱ, ֆ.409, g.1, q.4564
10. ՀԱԱ, ֆ.409, g.1, q.4556,
11. ՀԱԱ, ֆ.409, g.1, q.3778
12. ՀԱԱ, ֆ.430, g.1, q.643
13. ՀԱԱ, ֆ.430, g.1, q.558
14. ՀԱԱ, ֆ.430, g.1, q.559
15. ՀԱԱ, ֆ.420, g.27, q.2,
16. ՀԱԱ, ֆ.113, g.3, q.82,
17. ՀԱԱ, ֆ.113, g.3, q.228
18. ՀԱԱ, ֆ.113, g.3, q.228
19. ՀԱԱ, ֆ.57թ, g.2ա, q.1549
20. ՀԱԱ, ֆ.57, g.1, q.544,
21. ՀԱԱ, ֆ.57թ, g.3, q.162
22. ՀԱԱ, ֆ.56թ, g.7ա, q.1656
23. ՀԱԱ, ֆ.56թ, g.17, q.21
24. ՀԱԱ, ֆ.20, g.4ա, q.2
25. ՀԱԱ, ֆ.11թ, g.2ա, q.89
26. ՀԱԱ, ֆ.11թ, g.2ա, q.70
27. ՀԱԱ, ֆ.11թ, g.2ա, q.58
28. Айкянц А.М. Международное частное право: Учеб. пособие.– Ереван, 2003.
29. Березевская Е.А., Этапы и закономерности развития наследственного права России., Юрист., 2006.,12.

30. Богуславский М.М. Международное частное право. М.: Юрист, 2005.
31. Богуславский М.М. Международное частное право., Норма., 2010.
32. Воробьев В.П. Государство Израиль: правовые основы возникновения и статус личности. М., 2001.
33. Гетьман-Павлова, И.В. Международное частное право М.: Изд-во Эксмо, 2012.
34. Гражданское законодательство Израиля. Перевод с иврита / Науч. ред.: Лившиц Н.Э.; Сост., предисл. и пер.: Хейфец М.С. - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2003.
35. Дорфман М. Институт завещания в Израиле // Право и жизнь. Независимый правовой журнал. - М.: Манускрипт, 2003, № 59 (7).
36. Косарев А.И., Римское право, М., 1986.
37. Ковнарев Н.Р. Римское наследственное право., М., ЮИ МВД РФ., 2001.
38. Конвенция о коллизии законов, касающихся формы завещательных распоряжений (Гаага, 5 октября 1961 г.) // Международное частное право: Сборник документов. М.: Изд-во "БЕК", 1997.
39. Конвенция о правовой помощи и правовых отношениях по гражданским, семейным и уголовным делам", http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5942/
40. Толстой Ю.К. Наследственное право, М, 2001г.
41. Мандельштам А.Н. Гаагские конференции о кодификации международного частного права. Т. 1. – СПб., 1900.
42. Марышева Н.И., Звекон В.П. Новая кодификация норм международного частного права // Хозяйство и право.– 2002.– № 6.
43. Международное частное право: Учебник / Отв. ред. Н.И. Марышева–М., 2004.
44. Немков А.М. Очерки истории наследственного права. 1979г.
45. Толстой Ю.К. Наследственное право, учебник 2001г.
46. Фридрих Шиллер, Законодательство Ликурга и Солона / Собрание сочинений в 7-ми томах, Том 5, М., «Государственное издательство художественной литературы», 1957 г.
47. Хвостов В.М. Система римского права. Учебник. М., 1996.
48. Чепурнова Н.М., Серёгин А.В. История государства и права зарубежных стран: Учебное пособие. – М.:, 2007.
49. Международное частное право и нотариальная деятельность.– 2-е изд.– М., 2005.
50. Полный сборник кодексов Российской Федерации / Под общей ред. Ю.Н. Власова.
51. Agrawal K.B., Vandana Singh, 2010, Private International Law in India.
52. The Administration of Estates Law, Chapter 189 of the Laws.
53. Bimal N. Patel 2007, India and International Law, Volume 2.
54. Carol S. Bruch. The Hague convention on the law applicable to succession to the estates of deceased persons. <http://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?article=4190&context=lcp>,
55. Convention of 1 August 1989 on the Law Applicable to Succession to the Estates of Deceased Persons. http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=62
56. Convention of 1 July 1985 on the Law Applicable to Trusts and on their Recognition, Hague Conference.
57. Convention of 2 October 1973 Hague Conference on Private International Law.
58. Convention Providing a Uniform Law on the form of an International Will (Washington, D.D., 1973).
59. Convention of 2 October 1973 Concerning the International Administration of the Estates of Deceased Persons, http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid

60. Convention of 1 July 1985 on the Law Applicable to Trusts and on their Recognition,
http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=59
61. Chavan R.S., *Indian Private International Law*, 1982.
62. Convention Abolishing the Requirement of Legislation for Foreign Public Documents. (Concluded 5 October 1961).
63. Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills, Basle, 16.V.1972,
<http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/077.htm>
64. Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills - Chart of signatures and ratifications,
<http://conventions.coe.int/Treaty/Commun/ChercheSig.asp?NT=077&CM=1&DF=&CL=ENG>
65. Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills - List of declarations, reservations and other communications.
66. Convention Providing a Uniform Law on the Form of an International Will (Washington, D.C., 1973),
<http://www.unidroit.org/instruments/succession>
67. Cyprus Legislation: Wills, Succession and Administration of Estates,
<http://www.totalserve.eu/Download.aspx?tableName=tblNewsDocuments&id=19&fileName=Article%20No.1%20Cyprus%20Law%20on%20Succession%20EN.pdf&shopFolder=true>.
68. Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills, Basle, 16.V.1972,
<http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/077.htm>
69. Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills - Chart of signatures and ratifications,
<http://conventions.coe.int/Treaty/Commun/ChercheSig.asp?NT=077&CM=1&DF=&CL=ENG>.

70. Convention on the Establishment of a Scheme of Registration of Wills - List of declarations, reservations and other communications,
<http://conventions.coe.int/Treaty/Commun/ListeDeclarations.asp?NT=077&CM=1&DF=&CL=ENG&VL=1>.
71. Foreign Exchange Management Act, 1999-2000 (FEMA).
72. F. E. Noronha, *Private international law in India: adequacy of principles in comparison with common law and civil law systems*, Universal Law Publishing Co, 2010.
73. Hague Convention of 1. October 1973 concerning the International Administration of the Estates.
74. *History of the Armenians in India from the Earliest Times to the Present Day*, Mesrobian Jacob, 1897.
75. *International Succession*, Edited by Louis Garb and John Wood.
76. *Inheritance Law: 5725 - 1965; a Completely Updated Translation, Incorporating All Amendments, Up to and Including Amendment of July 1995*.
77. *Inheritance in Cyprus*,
<http://www.cypruslawfirm.com/inheritance-in-cyprus/>.
78. *Israeli succession Law and inter vivos trusts, Trusts & Trustees*, Vol. 14, No. 10, December 2008.
79. *Israeli succession Law and inter vivos trusts, Trusts & Trustees*, Vol. 14, No. 10, December 2008.
80. Nadelmann K.H., <Formal validity of wills and the Washington Convention 1973 providing the form of an international will>, A.S.C.L., 1974.
81. *Status of the Convention Providing a Uniform Law on the Form of an International Will - signatures, ratifications*,
<http://www.unidroit.org/status-successions>.
82. Supplement No 2 to The Sovereign Base Areas Gazette, No 859 of 19th August, 1989. An Ordinance to Amend the Wills and Succession Ordinance (02.08.1989, ordinance 14 of 1989).

83. Supplement No 2 to The Sovereign Base Areas Gazette, No 324 of 5th March, 1971. An Ordinance to Amend the Wills and Succession Ordinance (27.02.1971, ordinance 3 of 1971).
84. The Hague Conference on Private International Law, 1893. .
85. The Indian Succession Act, 1925, ACT No. 39 OF 1925, [30th September, 1925.]
86. The Wills and Succession Law of Cyprus, Chapter 195 of the Laws.
87. The Probates (Re-Sealing) Law, Chapter 192 of the Laws.
88. The Succession Law -1965,
<http://www.justice.gov.il/MOJEng/Hadracha/MadrachYerusot/>.
89. Uri Yadin, The proposed Law of succession for Israyel,
<http://www.jstor.org/discover/10.2307/837295?uid=2&uid=4&sid=21104806854711>
90. Uniform International Wills Act, Washington Convention of 1973,
<http://www.globalpropertyguide.com/Europe/Portugal/Inherita>,
Inheritance tax and law.
91. <https://www.step.org/sites/default/files/Branches/Resources/IntroductiontoSuccessionLawinIsrael.pdf>
92. http://aharonilaw.com/recent_articles/inheritance-law-in-israel-inheritance-by-will-in-israel/
93. <https://www.step.org/sites/default/files/Branches/Resources/IntroductiontoSuccessionLawinIsrael.pdf>
94. <http://www.globalpropertyguide.com/Middle-East/Israel/Inheritance>
95. <http://www.justice.gov.il/MOJEng/Hadracha/MadrachYerusot/> .
96. <http://www.jl-lawfirm.com/files/pdfs/laws/Israeli-Succession-Law-En.pdf>
97. <http://lawmin.nic.in/coi/coiason29july08.pdf>
98. http://www.hcch.net/index_en.php
99. <http://www.unidroit.org/instruments/succession>

100. <http://www.uniformlaws.org/Shared/Docs/UIWA%201977%20Final.pdf>
101. <http://www.unidroit.org/english/conventions/1973wills/1973wills-explanatoryreport-e.pdf>
102. http://www.hcch.net/index_en.php?act=conventions.text&cid=59
103. <http://indiankanoon.org/doc/530170/>
104. <https://archive.org/stream/historyarmenian00sethgoog#page/n141/mode/2up/search/Baba>
105. http://www.armenianlanguage.am/am/Encyclopedia_Nalbandyan_miqayel
106. <http://conventions.coe.int/Treaty/Commun/ListeDeclarations.asp?NT=077&CM=1&DF=&CL=ENG&VL=>
107. <http://conventions.coe.int/Treaty/Commun/ChercheSig.asp?NT=077&CM=8&DF=24/11/2009&CL=ENGnce>
108. <http://eureseau.com/practice-areas/inheritance/inheritance-cyprus.html>
109. http://www.successions-europe.eu/en/portugal/topics/which-law-applies_can-i-choose-the-applicable-law-to-my-inheritance .
110. <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/how-and-when-do-you-become-an-heir>
111. http://www.successions-europe.eu/en/portugal/topics/in-the-absence-of-a-will_who-inherits-and-how-much
112. <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/restrictions-on-the-freedom-to-dispose-of-ones-succession-by-will>
113. <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/how-is-a-will-drawn-up-and-can-i-register-it>
114. <http://www.successions-europe.eu/en/portugal/topics/what-is-the-amount-of-succession-rights>

MINISTRY OF DIASPORA
OF THE REPUBLIC OF ARMENIA

**LEGAL FRAMEWORK
STUDY OF ARMENIAN WILLS**

Research

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՏԱԿՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԳԱՇՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Հեղափոխական աշխատանք

Տպագրությունը՝ օֆսեթ:
Չափսը 60x84/16:
Ծավալը՝ 9.25 տպագրական մամուլ
Տպաքանակը՝ 200 օրինակ:

«Աստղիկ Գրատուն» հրատարակչություն

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Բոչարի փ. 21

Հեռ.՝ (+374 10) 52 88 00

E-mail: info@astghik.am

www.astghik.am